

ՀԵՐԻԿԵԼԻՔ

ՅՈՒՍ ԲՈԼԱՆԴԱԿԻՆ

ԲԱՐՅԱԿԱՆ ԱՌԱՋՔ

ԵՒ ՀՅԱՂՑՎԵՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ԻԿԱԽԵՄԵԱԿՊՈՒՆ


Ի ՏՊԵՐԵԿ

ԱՐԱՊԵԱՆՑ

= 1853 =

3058

2010





№ 940

137

1912

## ՀԱՐԻԿԻ ԵՎ ԿԿՐ

ԲԱՐՈՅԵԱՆ ԻՐԱՏՈՒՅ

ՅՈՐՍ ԲՈՎԵՆԴԱԿԻՆ ԲԱՐՈՅԵԱՆ  
ԱՌԱՋՔ ԵՒ ԶՈՒՄՐՑԱԼԻ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

---

Ի ԼՈՅՈ ԲԵՇԵՎԵՅԼԻ

ՕՐ ԲԱՌԻ Յ.Բ.

ԹԱՆԴԵՐԵՆԻՆ ՎԵՐԺԱՆՈՒԹԵԱՆ  
ՈՐ Ի ՄԻԶԱԳԵՂԶ  
ԿՈՍԵՆԴՆՈՒՊՈԼԱՅ

---

ՀՐԱՄԱՆԱԴ

ՎԵՀԱՓՈՐ ՊԵՏՐԻԱՐԴԻ ԿՈՍԵՆԴՆՈՒՊՈԼԱՅ  
Տ. ՅԱԿՈՎԵԱ ԱՐՔԵՊՈՒԿՈՊՈՒՏ

---

Ի ԿԱՍՏԵՆԴԱԽՈԼԻ ԴԱ

ՈՐ Ի ՄՈՒՍԱՋԸ ՓԵԾԵ ԽԱՆԻ

Ի ՏՎԱՐԵՆԻ ՊՈԼՈԽԻ ԱՐԴՊԵԱՅ

- 1853 -


ԴՐ  
ՐԱՅԵԱՆԻ

Դաստիարակություն Արմենիա; Հայաստան  
Առաջարկագրություն և հայրական  
հայ լրեցի:

Եղ՝ 1534

398  
Հ - 39

145  
91



# ՀՅՈՒՒԹԵԱԿ

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԺ

ՏԱՄՆԵԱԿ. Ա.



Յաճախութիւնն ծնանի զտաղտկու-  
թիւն. լաւ է կալ միայնակ, քան վատ ըն-  
կերակցութեամբ։

Ունիս յիսուն բարեկամն՝ չէ բաւական.  
ունիս մի միայն թշնամի աւելի է։

Բազումն գիտէ՝ որ ոչ գիտէ, եթէ  
գիտել լռել։

Կահանոց փոքր՝ զտունն առնէ մեծ։

Ուր ոսկին բարբառի՝ ամենայն լեզուք  
լռեն. որ ունի սէր ՚ի սրտի՝ ունի զթեւս ՚ի  
կուշտս։

Որ է էշ եւ համարի ձի, ՚ի վազելն ըզ-  
փոսիւ յայտնի լինի։

Որ ցուցանել քեզ սէր առաւել քան  
զսովորականն , կամ խաբեալէ զքեզ , եւ  
կամ խաբել կամի:

Դաւ՝ կոխոտել ոտիւք քան լեզուաւ:

---


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս ոմն ցաւէր եւ արտասուէր , զի  
կինն կախեալէր ինքն զինքն ՚ի պարտիզի  
իւրում զտանձենւոյ միոյ . եւ մի ոմն մեր-  
ձեցեալ յունկն նորա ասէ , բարեկամ .  
որպէս կարելի է յայդքան յաջողութեան  
քում գտանել քեզ զարտասուս ՚ի լալ .  
աղաչեմ զքեզ . առւր ինձ ճիւղ մի յայդ  
օրհնեալ տանձենւոյ . զի տնկեցից ՚ի պար-  
տիզի իմում , որպէս զի արասցէ զայդ եւ  
կինն իմ , եւ կարացից ես եւս վսյելել յայդ  
պիսի բարեբաղդութեան:

---

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս ոմն թաղեալէր յերկրի գումար  
ինչ դրամց , զոր ոչ ոք գիտէր . բայց միայն  
ազգական ոմն իւր , որում հաւատացյր զա-  
մենացն ՚ի ծածուկ խորհուրդս սրտին իւ-



ըսյ: Յետ աւուրց ինչ գնացեալ այրն բա-  
րեմիտ տեսանել զայն՝ ոչ եղիտ. զի բարձ-  
եալ էր. եւ երկբայելով զազդականէն՝ թէ  
նա գողացեալ իցէ, եղիտ զնա եւ ասէ .  
ազգական իմ, գործք իմ օր ըստ օրէ յա-  
ջողաբէս յառաջանան . ուստի միւս վա-  
զիւն կամիմ թաղել այլ եւս երկերիւր ու-  
կիս առ այնոսիկ՝ զորս գիտես:

Ապա աղգականն կամեցեալ գողանալ  
եւ զայնս, գնաց . եւ անդէն վաղվազակի  
ետ զդրամն, զրս բարձեալ էր. ապա գայ  
տէր դրամոցն ՚ի նոյն տեղին, եւ գտեալ  
զդրամն իւր՝ բարձեալ բերէ ուրախու-  
թեամբ մեծաւ ՚ի տուն իւր:

---

ՏԱՄՆԵԱԿ. Բ

Ուչափ եւ խորամանկ իցէ աղուէսն,  
վերջապէս գտանի ՚ի մուշտականոցն:  
Եթէ պատանին գիտէր, եւ ծերն կա-  
րէր, եւ ծոյն կամէր, ոչ գտանէր յաշ-  
խարհի ինչ, որ ոչ եղանէր:

Խօսքն են էզք, բայց գործքն արուք:  
Յետկուսի դուռն՝ կործանէ զառւնն:  
Երթալ վասն բրդոյ, եւ գառնալ խուզ-  
եալ . երթալ վասն ալեր, եւ անդ զպարկն

57684 - Կ. Դ.

Թողուլ:

Ուրն է իբրեւ զբոյլ ջքհորս, իշանէ ծի-  
ծաղելով, եւ ելանէ լալով:

Ի արեկամ մի որ ինձ ոչ օգնէ, եւ թըշ-  
նամի մի՝ որ ինձ ոչ վնասէ, երկոքին եւս  
՚ի նոյն համարի են ինձ:

Ե եղուն չունի զոակր, բայց զոսկելս մի-  
ջաց ջարդէ:

Որ կամիցի բարեբանիլ, մի չարաբա-  
նեսցէ զայլոց:

Խաղ խօսից, խաղ ազնուականաց. խաղ  
ձեռաց, խաղ գռեհկաց:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա բք երկու ունելով վէճ դատաստա-  
նի, մինն դիմէ առանձինն առ դատաւորն,  
եւ մատուցանէ նմա աման մի լի ձիթով.  
որում խոստանայ դատաւորն յօդուտ նմա  
շրջել զդատաստանն, լուեալ դատախազլն՝  
խկոյն առաքէ խոզ մի գէր ՚ի տուն դա-  
տաւորին զնոյն աղաչելով: Ապա վճռէ  
դատաւորն ՚ի կողմն խողատուին, զոր տես-  
եալ ձիթամատոյցն ընթանայ ընդ առաջ  
դատաւորին, եւ յիշեցուցանէ նմա զըն-  
ծայն խր, եւ զիսոստումն նորա ցաւսդ-

նեալ յոյժ, եւ դատաւորն առեալ զնա 'ի  
մի կողմն ասէ . ծանիր բարեկամ . որ խողէ  
մտեալ 'ի տուն իմ . եւ զաման ձիթոյն բեկ-  
եալ հեղեալ է զձէթն . մինչեւ մոռանալ  
իմ զքէն . բայց միամիտ լէր, զի յայլում  
նուագի աներկբայ արարից ըստ քումդ  
հաճութեան:

---

### ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ապետ ոմն հռոմայեցի պակասեալ 'ի  
կենաց, դտանի պարտական ԴՃՌ սկու-  
թից . զոր 'ի կեանս իւր 'ի ծածուկ ունէր,  
եւ անհոգ կայր . Ապա եղեւ վաճառել  
ընչեց նորա . եւ 'ի մէջ այլ կարասեացն  
գնեաց զբարձ նորին՝ Օդոստոս կայսրն (որ  
տառապիւր 'ի տքնութեան շարունակա-  
բար) ասելով, քնաբեր է բարձն այն . որով-  
հետեւ այր ոք այնքան պարտաւոր կարէր  
ննջել 'ի վերայ նորին . որ անտարակոյս  
կարծի ունել գերազանց իմն զօրութիւն  
առաւել քան զաբիոն եւ զիսաշխաշ :

Պաղաքավարական խօսքն են արար-  
եալք վասն բերանոյ , այլ ոչ վասն սրտի։  
Ոչ գոյ սէր աղտեղի ՚ի գեղեցիկ բանտի։  
Լախեցելոյն ՚ի տան չէ անկ լիշել պա-  
րան։

Հուրն փորձէ զոսկին , եւ ոսկին զկին։  
Երէք իրք չարաչար վարին . թռչուն ՚ի  
ձեռս մանկան . մատաղ աղջիկ ՚ի ձեռս  
ծեր առն , եւ կառավարութիւն ՚ի ձեռս  
խելառի։

Լարի աղատութիւնն երկուցանէ , թէ  
իցէ ՚ի նմին խաբէութիւն։

Երտառուք բողի աղրիւր չարութեան։  
Որ ոչ առնէ՝ յորժամ կարէ , ոչ կարէ  
առնել յորժամ կամի։

Երիտասարդք շրջին գտանել զախտս ,  
որպէս առնեն բժիշկք։

Դովեան զեւառն , եւ կաց ՚ի դաշտի .  
դովեան զծովն , եւ կաց ՚ի ցամաքի . դովեան  
զամուսնութիւնն , եւ կաց ամուրի։

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Անկիլացի ոմն ամբարտաւան բազմամշ  
եայ , եւ կարճահասակ , լնելով ՚ի սպանիա ,

տեսանել անցանել կին մի դեղեցիկ ըսպա-  
նիացի . որում ասէ . Աէնեօռա սէրվի-  
տօռ . այսինքն խաթուն , ծառայ եմ հրա-  
մանուցդ , որում պատասխանէ կինն ճար-  
տար , մայօռ լո դէնկօ էն մի քամարա , այ-  
սինքն զմեծագոյնն ունիմ 'ի սենեկի իմում .  
իմացեալ զանօթն 'ի պէտս կարեաց որո-  
վայնի , որ սպանիացերէն կոչի սէրվիտօռ :

---

### ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դիտոգինէս քինացին անցեալ երբեմն  
ընդ տեղի ինչ , ուր աղեղնաւորք ոմանք  
նետաձիդ լինեին 'ի նպատակ ինչ 'ի կրր-  
թութիւն , յորս էր ոմն յոյժ վատաձիդ ,  
զի միշտ հարկանէր բազում միջոցաւ տա-  
րաձիդ 'ի նպատակէն:

Դրբեւ եկն կարդ իւր ձգելոյ Դիտոգինէս  
դնաց կանգնեցաւ ուղիղ առաջի նպատա-  
կին , մինչեւ զարմանալ ամենեցուն եւ  
հարցանել զպատճառն , որոյ պատասխա-  
նէ , թէ մի հարկանիցէ եւ սպանանիցէ նա  
զիս , քանզի ոչ տեսանեմ տեղի ուր կարի-  
ցեմ ապահովագոյնս կալ քան 'ի նպա-  
տակն:

Ճանձրացուցիչն յաղթէ ադահին։  
Որ ՚ի քսաներորդ ամի հասակին ոչ է ,  
յերեսներորդին ոչ գիտէ , ՚ի քառամնե-  
րորդին ոչ ունի . ոչ բնաւ եղիցի . ոչ բնաւ  
գիտացէ , եւ ոչ ամենեւին ունիցի։

Ո՞ւ արդոյ , որոյ առատ են խօսք՝ պա-  
կասին գործք։

Որ առնէ զհանդիսութիւն , ոչ վայելէ  
ինքն ՚ի նմին։

Որ բարւոք ընծայէ՝ թանկադին վաճա-  
ռէ , եթէ չիցէ գիւղական , որ ընդունի  
զայն։

Օ գոյշ լեր յառնէ , որ երդնու ՚ի վերայ  
խղձի մտաց , ՚ի յարեցեալ կամ ՚ի յուսա-  
հատեալ կնոջէ , ՚ի օանձարձակ երիվարէ ,  
՚ի կատաղի շանէ , ՚ի կապկածոտ առնէ ,  
յաղքատ քիմիականէ . ՚ի հիւանդոտ բը-  
ժկէ . ՚ի կատաղեալ յիմարէ . յայնմանէ՝  
որ չունի ինչ կորուսանել , ՚ի յատելութենէ  
մեծամեծաց . ՚ի ըռակաց առնէ , ՚ի շանէ՝  
որ ոչ հաչէ , ՚ի նոր պանդոկէ . ՚ի հնացեալ  
բոզէ , յառնելոյ գիռիւ ՚ի դիշերայն . ՚ի  
կանանց չարութենէ . ՚ի բոզիցն արտաս-  
ուաց , ՚ի հին թշնամւոյ եւ ՚ի կատաղու-  
թենէ ժողովրդեանն։

Որ կամի առողջ շքծել յաշխարհի ,  
պիտոյ է նմա ունիլ աչս բազէի , ականջս  
իշոյ . երես կապէի , բերանս խողի . թիկունս  
ուղտու , եւ սրունս եղջերուի :

Ենմիտք եւ յամառք փարթամացուցա-  
նեն զփաստաբանս :

Եպահովութիւնն է մայր վտանդի :

Ոչոք խաբել կարէ այնքան դիւրութք  
որքան նա , որ ունի համբաւ զոչ ոք խաբելոյ :

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սպետ ոմն գնաց շնորհաւորել զոմն  
ազգական իւր . որ ընկալեալ էր զկարդի-  
նալական դլսարկ . բայց նա ամբարտաւան  
եւ հպարտ վասն աստիճանին , ցուցանէր  
չճանաչել զնա , հարցանելով նմա թէ ով  
իցէ :

Ուստի ասպետն այն զարմացեալ փոխէ-  
իսկոյն զդիտաւորութիւնն , վասն որոյ գը-  
նացեալն էր , եւ ասէ . ես եկի առ վսեմու-  
թիւն ձեր վասն ազգականութեան մերոյ .  
ցաւակից լինիլքեզ ՚ի վերայ բազդի . կամ  
կուրութեան քո , որ հասոյց զքեզ յայս  
աստիճան . որովհետեւ տեսանեմ զառաջ-  
նորդստ , զի իսկ եւ իսկ իբրեւ ամբառ-

Նայք յայդպիսի իմն մեծութիւն, այնպէս  
կորուսանէք զտեսութիւն, զլսողութիւն եւ  
զայլ զգայարանս, մինչեւ ոչ միայն զբարեւ  
կամս, այլ եւ ոչ զձեզ անդամ ճանաչէք:

---

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

¶ Աէպ եղեւ երկու նէապօլսեցւոց, որք  
մահուչափ թշնամիք էին միմեանց, նաւեւ  
՚ի միում նաւի. բայց ոչ կարելով հանդուր-  
ժել տեսանել զմիմեանս, մինն կայր ՚ի գը-  
լուխն կոյս նաւուն, եւ միւսն ՚ի խելս կոյս.  
Եղեւ զի յարեաւ մրրիկ մեծ յոյժ. մին-  
չեւ նաւն լինել ՚ի վտանդի ընկղմելոյ .  
ապա ՚ի խելս նաւուն եղեալն տեսանելով  
զվերջին տագնապ վտանդին հարցանէ նա-  
ւապետին . ո՞ր կողմն նաւոյն յառաջադրոյն  
սուզանի. պատասխանէ , գըլուխն կոյս . յայն-  
ժամ ասէ լի ամենայն միսիթարութեամբ ,  
այժմ մեռայց հաճութեամբ . զի տեսանե-  
լոց եմ զթշնամոյս իմոյ մահ :

ՏԱՄՎԵԼԱԿ · Ե

Որ գիտէ ցուցանել զանձն չըել զարհամարհանս , կիսէ զլրէժխնդրութիւնն :

Ո՞ն ուտեր յորժամ կարես . մի ծախեր յորժամ ունիս , մի ասէր յորժամ գիտես :

Ստախօսն պարտի ունել սուր յիշողութ :

Որ առաքէ զկին իւր յամենայն հանդիսութիւնս , եւ զձին իւր արբուցանէ յամենայն աղքերաց զձին առնէ ախտաւոր , եւ զկինն լկտի :

Ծողոքորդութիւնք շանց , հրապոյլք լկտի կանանց , հրաւելք պանդոկապետից . ոչ կարեն լինել քեզ ձրի :

Որ հաւատայ կնոջ , 'ի մէջ ամենայն խելագարից արդիւնաւորի զեղջիւրք արժանաւորք լինել թագաւոր յիմարաց :

Ի գիշերի լուացեալն 'ի ցերեկի պարզի :

(Ո՞եղանչական գործք գիշերոյ 'ի լոյս արեդական յայտնի լինին):

'ի ործք գիշերոյ՝ պատկառանք տուընշեան :

Ուրն ցեխոտէ զերիտասարդս , եւ ընկղմէ զծերս :

Որ ընդ տգեղ բայց վարժամ կնոջ ամուսնանայ , հայի 'ի ծանրութիւնն եւ ոչ 'ի շինուածսն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պաղաքացի ոմն զարթուցեալ ընդ  
առաւօտն գտանէ զմուճակս իւր կտրատ-  
եալ 'ի մկանց . զոր համարելով զարմանալի  
ինչ դիպուած եւ չարաբաղդութեան գու-  
շակ , դիմէ վաղվաղակի կտրի իմն վրդով-  
եալ գտանել զվատոն փիլսոփայն , որում  
հարցանէ տագնապեալ սրտիւ յոյժ . թէ  
զի՞նչ նշանակէ այս նոր եւ արտաքոյ կար-  
գի իր . առ որ պատասխանէ կատոն ծիծա-  
զելով . թէ այս ոչ է զարմանալի եղբայր ,  
թէ մկունք կրծեալ են զմուճակս քո , այլ  
լինէր արդարեւ հիանալի եթէ մուճակըն  
քո կրծէին զմկունս :

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պահւղական ոմն հիւանդացեալ կտակ  
առնէ , եւ թողու կնոջն 'ի նշան սիրոյ եզն  
մի , եւ կատու մի , ասելով . կի՞ն իմ . զայս  
եզն , որովհետեւ ծեր եւ նիհար է , վա-  
ճառեալ եւ զգինն տներ յողորմութիւն  
վասն հոգւոյ իմոյ . եւ զկատուն , որ է լա-  
ւագոյն . նա պիտոյանայ բազում իրաց  
քոյ . կալ քեզ :

Դակ կինն բարի՝ յետ մահուան առն իւր  
ըս . զեղն եւ զկատուն ածէ ՚ի վաճառել:

Դայ ոմն գնել զեղն եւ հարցանէ ըզ-  
դինն . (որ ամէր 40 մարչիլս) պատասխանէ  
կինն . թէ ոչ վաճառեմ զեղն առանց կա-  
տուին . 24 մարչիլս . եւ եզան մեկ : Օ որոյ  
զդիւրադին լինելն տեսեալ գնողին , ոչ ինչ  
հոգայր վճարել զմեծ գին կատուին . եւ  
զսակաւ գին եզին , եւ միով բանիւ վճար-  
եաց կնոջն զ25 մարչիլս . եւ էառ զկատուն  
եւ զեղն : Աւ կինն բարի առ ՚ի կատարել  
զկտակ առն իւրոյ . ետ ՚ի սէր նորա վասն  
հոգւոյն՝ զմէկ մարչիլ եզին յողորմաւթիւն .  
եւ էառ առինքն զ24 մարչիլս գինո կա-  
տուին :

---

ՏԱՄՆԵԱԿ . Զ

¶ Խտոյ է խօսիլ սակաւ , եւ լսել բա-  
զում:

Արուեստ է ասել ՚ի ժամանակին :  
Արծիւն ոչ որսայ զՃանձ :  
Կինն է իբրեւ զշահպալուտ , արտա-  
քուստ գեղեցիկ եւ ՚ի ներքուստ փտեալ :  
Քաղցեալ տանտիկին միշտ ունի զաւ-  
խահարար :

Ո՞չ է պարտ մեզ յիշել զմեռեալս ՚ի  
սեղանի:

Ասփրիչն ոչ շատանայ հերովք, այլ վը-  
ձարիւք:

Որ ոչ կայ ՚ի փոան, կայ արդէն ՚ի թից  
(որ տակաւին չէ ՚ի թշուառութիւն մըտ-  
եալ ծանիցէ մերձ գոլ):

Ոինչ սատանայն քո ծնաներ, իմն ՚ի  
բաղսնիս գնայր:

Որ ինչ ՚ի բնութենե գայ, մինչեւ ՚ի  
գերեզման մնայ:

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Օաղբածու ոմն գտաւ ընդ աղնուա-  
կանաց ոմանց ՚ի սեղանի. եւ եղան առա-  
ջի իւր խորովեալ ձկունեք մանունք յոյժ.  
խկ աղնուականացն՝ մեծամեծք:

Ապա ծաղբածուն առեալ ՚ի ձեռին  
զձկունսն երբեմն ՚ի բերան իւր մերձե-  
ցուցաներ, եւ երբեմն յականջն իւր ցու-  
ցանելով թէ խօսի ընդ նոսա. եւ ըէ ՚ի նո-  
ցանէ ՚ի ծածուկ. վերջապէս սկսանի եւ  
լալ. մինչեւ հարցանել աղնուականացն. թէ  
վասն էր լաս. ասէ. հայրն իմ ձկնորս էր. եւ  
դժբաղդութեամբ իմն ընկղմեցաւ ՚ի գետ

ինչ . եւ ոչ գտաւ մարմին նորաւ լւ մինչ  
ես հարցանեմ այս մանրիկ ձկանցս , արդեօք  
դէպ եղեւ սոցա ՚ի տեղւոջ ուրեք տեսա-  
նել զնա , պատասխանեն , թէ ինքեանք են  
փոքրիկ երախայք , եւ ոչ գիտեն . հարց ա-  
ռեն մեծամեծաց եւ ծերոց . ողք կան ահա  
առաջի ձեր . իմացեալ նոցա զիսորագիտու-  
թիւն ծաղրածուին , ետուն նմա եւ ՚ի մե-  
ծամեծաց մասն . զի կարող լիցի հարցանել  
նոցա . կամ մանաւանդ թէ խճողել զորո-  
վայն իւր:

---

### ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա սիրակուսա էին երկու պիւթագոր-  
եանք , սերտ բարեկամութեամբ միաց-  
եալք . անուն միոյն Դամոն . եւ միւսոյն՝  
Փիթիա , զորոց մինն (ոչ գիտեմ վասն ո՞յր  
պատճառի) ՚ի մահ դատապարտեաց Դիո-  
նէսիոս . եւ սահմանեաց զօր եւ զժամ ըս-  
պանման նորաւ Այս աղաւէ զշնորհս , թո-  
ղուլ զինքն զաւուրս ինչ դնալ կարգադ-  
րել զիրս տան իւրոց . արար նմա բռնաւորն  
զշնորհս զայս . միայն թէ հաւաստի արաւ-  
ցէ զդարձ իւր , եւ նա ետ նմա երաշխա-  
ւոր զընկեր իւր բարեկամ , որ եկի յանձն

էառ . թէ եթէ նա ոչ դարձցի ՚ի սահ-  
մանեալ ժամու դատապարտութեան իւ-  
րոյ , ինքն մեռցի փոխանակ նորա . զոր ըն-  
կալաւ բռնաւորն զարմացմամբ եւ ըղձա-  
նօք տեսանելոյ զկատարածն :

Ապա երթայ արձակեալն ՚ի տուն իւր ,  
եւ զհարկաւոր կարգադրութիւնս որ ՚ի  
նմա՝ վճարեալ դառնայ ՚ի պայմանեալ  
ժամանակին . եւ ներկայանայ առաջի բրո-  
նաւորին . (զի ընտրէր առաւել զմեռանիլ  
քան խաբել զբարեկամն) : Ուստի այնքան  
սքանչացաւ բռնաւորն ընդ միոյն եւ ընդ  
միւսոյն հաւատարմութիւն , մինչ զի ոչ  
միայն շատացաւ շնորհել զկեանս դատա-  
պարտելոյն , այլ նաեւ աղաչեաց զնոսա ,  
զի եւ զինքն ընկալցին յիւրեանց անհա-  
մեմատ բարեկամութիւնն :

---

ՏԱՄՆԵԱԿ . Է

Ձ շնամոյ փախուցելոյ՝ կամուրջ ու-  
կեղէն :

Եռանց հետամտի՝ շարադործն փախչի :  
Եռաւել ընտանութիւնն զարհամար-  
հութիւն ծնանի :

Վիրք կուրացուցանեւ տեսանել զիրա-

ՀՈՒՆԻՏ

Բազումն արժէ եւ է դիւրագին, առ  
վատ ստացուած լաւ պատասխանին:

Որ ՚ի դատ մերձենայ ՚ի թշուառու  
թիւն ըն թանայ:

Լաւ է սակաւուք իրաւախոհ լինել.  
քան ընդ ծանր ծանր վճռովք անկանիլ:

Ըստ՝ որ լիզու զշամփուրն, մի հաւա-  
տար զխորովածն:

Վայրութեան ձանապարհք յանցանքն  
է առաջնորդին:

Որ ունի դլուխ (միտս) հչ պակասի նմա  
դլիսանոց:

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երկու թշնամիք մարտնչելին սրով ընդ  
միմեանս, եւ սպանիացի ոմն հասեալ ՚ի  
վիրայ բաժանել ՚ի միմեանց, ընկալաւ վէրս  
՚ի դլուխ իւր . ապա կոչեաց զբժիշկն եւ  
զվիրահատն: Դակ վիրահատն որոնելի դորձ-  
եօք ՚ի մէջ վիրացն. Թէ արդեօք ինասեալ  
լոյն ուղեղն, ասէ բժիշկն. ընդ վայր աշխա-  
տին որոնել դու զուղեղ դորս, զի եթե-  
ունել դա ուղեղ, ոչ մտանել իսկ ՚ի մէջ  
բաժանել զմարտնչօղսն:



ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա ժամանակի միում այր ոմն վերակաւցու եղեւ որբոց ոմանց ժառանգութեան, եւ վասնեաց զամենայն ինչը ն յա , զոր լուեալ ազգականացն որբոց՝ ածին զնա ՚ի դատաստան տալ զհաշիւ վերակացութեան իւրոյ , եւ ՚ի ստիպիլն ՚ի դատաւորացն ցուցանել զհաշուեգիրն մտից եւ ելից , ցուցանել զբերանն իւր եւ զնատարանն՝ ասելով , ՚ի միոյն եմուտ եւ ՚ի միւսոյն ել ամեւնայն ինչը

ՏԱՄՆԵԱԿ · Ը

Օ այնմանէ՝ որ քեզ ՚է վերաբերի , մի խօսիր բնաւ . ՚է չար եւ ՚է բարին Որ կամիցի պատմել զանմիտն , տացէնմա կին:

Լարես զգուշանալ ՚ի հրոյ , բայց ՚է ՚ի մարդոյ չարէ :

Եռանց ջրոյ եւ հացի՝ ցանկութիւն մարմնոյ պակասի:

Դաշնադրութիւն բացայաց՝ բարեկամութիւն հպատատ:

Ակ պիտոյ աղաչել՝ ուր մարթէ հրա-

**Մայել:** զան ժուկանց հմայլուն մատուց

Բարեկամութիւն վնասուք՝ թող գնայ  
՚ի կորուստ:

Այսկաւ շնչիւն, բազում հաճութիւն:

Որ յոյժ յամառումն ունի, բազում ան-  
դամ դահավեժ անկանի:

Բազումս սպանանէ որկորն, քան թէ  
սովնե:

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

**Ա**զդ եղեւ Փիլիպպոսի մակեդոնաց 1910  
և ՚ թէ ունանք պատահանքը իւր չարաշ  
չար վատաքանեն զնմանէ: Լա փոխանակ  
պատժելոյ զնոսա, ախորժանօք իմն պա-  
տախանեաց ասելով, բարւոք է ունիլ ըզ-  
նոսա առաջի իմ, զի եթէ արտաքսեցից  
ապա գնացեալ յայլուր չարաքանեսցեն  
զինէն:

**ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

**Ա**մաստակ դմն իմացեալ թէ դիոդի-  
նէս բռնաւորն անարդէր զբազում իմաս-  
տունս՝ վասն զՃմարիտն ասելոյ նոցա,

բուռն հարկանէ զարուեստէ մարդելու  
զութեան, եւ սկսանի գովել զնա յամե-  
նայն գործս իւր, եւ էր յայսմ այնչափ  
շռայլ եւ անպատկառ՝ մինչեւ երբեմն  
տաղտկալի լինել բռնաւորին, եւ ոչ շա-  
տացեալ այսու, շարադրէ եւ զներբող ինչ  
չափաբերական ոտիւք, նկարադրեալ զնա  
կիսաստուած ոք, եւ զայն մատսւցանէ նմաւ

Խոկ Դիոդինէս փոխարէն տայ նմա դա-  
հեկան ինչ, բայց հրամայէ հատանել զիւ-  
զուն, եւ 'ի հարցանել զպատճառն, պա-  
տասխանէ. որովհետեւ չաստուածքն արա-  
րին շնորհս՝ գտանել ինձ զոմն, որ խօսի զիւ-  
նէն բարիս. ապա արժան է այնպիսի լեզ-  
ուց զմռսիլ եւ դնել 'ի տաճարի միում  
իբրեւ զսրբազան ինչ:

ԱՅ ՀՅՈՒՄ Ե ՏՐԵՅԱ, ԱՅ ՀՅԱ ՔԱԴԱՆԱԳԱՅԻ  
ՔԱԴԱՆԱԳԱՅԻ ՀԵՅ ԱՅ ԱՅՆԱՅԻ ԱԿԱՅ  
ԱԴՐԱ ԱՆԱԳԱՅԻ ՏԱՄԱԿ. Թ Ե ՎԱՅԱՐ ԱԿԱՅ

ՈՐ կամի զիր ինչ ունիլ, գնացէ ան-  
ձամբ, զոր թէ ոչ կամի ունիլ առաքեսցէ  
դայլ ոք:

ԱՅ Ժամանակի այլ հոգք:  
ՈՐ խնդրէ ջուր մաքուր, գնացէ յաղ-  
բիւրն:

ՈՊԱՍԵԼ ումեք եւ նմա չդալ, յան-

կողնի մեալ եւ ոչ քնանալ , բարեզ ծառայել եւ ոչ հաճոյանալ , սոքա երեք իրք որք տան մահանալ :

Արհեստիւ եւ խարէութեամբ մարդէ կեալ զկէս տարւոյն , խարէութեամբ եւ արհետափիւ անցուցանել զմիւս մասն :

Օօրաւորագունին տեղի տացէ խոհեմը . մինչ ամենայն մեղք են ծեր , ադահութիւնն է տակաւին երիտասարդ :

Համբերութիւն , ժամանակ եւ դրամ զամենայն ինչ յարդարեն :

Որ ունի գործ ընդ չար մարդկան՝ ունի մեծագոյն ցաւ քան զցաւ ատաման :

Որ հանդարտ ընթանայ՝ առողջ ընթանայ , եւ որ առողջ ընթանայ , ընդ երկար գնայ :

---

### ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Արիսթիվոս վիթլառոյիայն արտաքսեալ զմին յորդւոց իւրոց՝ 'ի տանէ իւրմէ , ոմանք 'ի բարեկամաց իւրոց ստգտանէին զնա ասելով , թէ արտաքսեալ ես 'ի տանէ քումմէ ոչ զծառայ ոք , այլ զծնեալն 'ի քէն , որոց պատասխանէ . նաեւ ապականութիւնք եւ ոջիլք են ծնեալք 'ի մէնջ , մի թէ ոչ մերժին եւ արտաքս արկանին

իբրեւ զաղտեղիս , այսպէս պարտիմք առ  
նել ապստամք եւ անզգամ որդւոց , որպի-  
սի իմն է :

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Ա**մն դաղղիացի ՚ի մենամարտութիւն  
կոչեալ զոմն ձենովացի վասն կրելց ՚ի զե-  
րայ վահանին զնշան տոհմի իւրոց , եկին ՚ի  
դաշտ , իսկ ձենովացին հնարս դտանէ եւ  
հարցանէ , առ ի՞նչ պատճառ կոչես զիս ՚ի  
մարտ , ասէ դաղղիացին . զի վրէժխնդիլ  
եմ այսմ նշանի . որ է ՚ի նախնեաց իմոց .  
զոր դու յափշտակեալ ունիս . դարձեալ  
հարցանէ զնա ձենովացին . թէ զի՞նչ է  
նշանն քո , ասէ դաղղիացին . թէ է դլուխ  
մի եղան , պատասխանէ ձենովացին . ուրե-  
մըն ոչ է պիտոյ մարտնչիլ , զի ՚ի վերայ վա-  
հանի իմոց է դլուխ մի կովուք

ՏԱՄ'ՍԵԱԿ . Ճ

**Ա**շխարհն հալածէ զայնա՝ որ հետե-  
ւին ինքեան , եւ հետեւի այնոցիկ՝ որք հա-  
լածեն զինքնեալ

Այնքան իմ է՝ որբան վայելեմ, և  
տամ վասն Աստուծոյ:

Ամենայն վարդ ունի զփուշ իւրի  
Այնպէս է սիրելն եւ ոչ լինել սիրեց-  
եալ, որպէս պատասխանելն առանց լինելոյ  
հարցեալ:

Որ ծնանի գեղեցիկ, ոչ է բոլորովին  
աղքատ:

Որ կամի ունիլ բազում, մի խնդրեսցէ  
սակաւաւ:

Բարեգոյն է այն՝ զոր Աստուած առա-  
քէ, քան զայն՝ զոր մարդ խնդրէ:

Բան զամենայն ինչ դժուարին է մար-  
դոյ ճանաչել զինքն:

Ո աճառականն պահանջէ զանարդար  
դին, առ ՚ի ունիլ զարդ արն:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ո յր ոմն ազնուական՝ աղաչէր զիմն  
ոմն՝ յորդորական ինչ պատճառօք ընդ  
պատրուակաւ համեստութեան, հաւանիլ  
կամաց իւրոց: Իսկ պարկեշտ կինն այն ՚ի  
խափանել զանապարկեշտ դիտաւորութիւն  
նորա, պատասխանէ նմա: Քորժամ էի  
կոյս աղջիկ հնազանդէի հրամանաց հօր

իմոյ, իսկ այժմ որ եմ ամուսնացեալ, հընազանդիմ հրամանաց առն իմումէ Ուստի եթէ այն, զոր խնդրես յինեն, է այնքան համեստ, որպէս դու ասես, խօսեաց ընդ առն իմումէ

---

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երիտասարդ ոք սիրահարեալ գեղեցիկ օրիորդի միում պարկեշտի, գտանէ ժամանակ եւ տեղի խօսելոյ ընդ նմա, եւ հարցանէ, եթէ կամիցին կատարել զկամ ցանկութեան իւրոյ, պատասխանէ զդաստ աղջիկն, այն, միայն թէ տացես ինձ սահ, զմի միայն հայցուածս իմ փոխարէն, եւ նահարցանէ, զի՞նչ խնդրես, ասէ աղջիկն, եթէ խոստանաս տալ ինձ զայն՝ զոր ոչ ունիս, եւ ոչ կարես ունիլ, այլ կարես զայն ինձ տալ՝ եթէ կամիցիս Ապա կամեցեալ Երիտասարդին իմանալ զառակս զայս, թէ զի՞նչ նշանակէ, մեկնէ նմա աղջիկն:

Դու արու գոլով՝ ոչ ունիս եւ ոչ կարես ունիլ փեսայ, բայց կարես տալ զմինն այնորիկ ինձ, տալով զքեզ ինքնդ։ Տուր ինձ ուրեմն, եւ ստացիս յինեն զբաղձանըս քո, որքան եւ փափաքիցես

# Հ Ա Յ Ի Ւ Թ Ե Ա Կ

## Ե Ր Կ Բ Ո Ր Դ

Տ Ա Մ Ա Ն Ե Ա Կ . Ա

Իմաստուն է նա որ ոչ հաւատայ , բայց  
միայն այնմ զոր տեսանէ , (յաշխարհային  
իրս) :

Խոստանալն ժամանակիս ոչ է առ ՚ի  
տալ , այլ առ ՚ի զմիմարս հաճեցուցանելը  
Պատառատուն հանդերձի սակաւ հա-  
ւատ ընծայիս :

Որ յառաջագոյն վճարէ , յետնագոյն  
ծառայութիւն ընդունիր :

Ղաւագոյն է (առ հեղդն) զի ասասցի  
թէ այն ոք այսր փախեաւ , քան թէ աստ  
մեռաւ :

Փախի՞ր ՚ի ներկայ հեշտութենէ անտի ,  
որ պատճառէ քեզ զցաւ ապառնիր :

Ուր խաղ լինի , անդ սատանայ բերկրի :  
Վէ է բաւական ունիլ զերաւունս , այլ

եւ պիտոյ է գիտել զայն ասելն , եւ ունիլ  
զոք , որ տացէ քեզ խօսիլ :

Առաւել գնան մորթիք աղուիսուց ՚ի  
մուշտականոցն , քան թէ իշուց :

Պատերազմն յաճախէ զաւազակս , իսկ  
հաշտութիւնն կախէ զեռսաւ :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այր ոմն պայազատ եւ յոյժ փար-  
թամ իտալացի՝ թողեալ զամենայն ինչս  
իւր վասն ծառայելոյ Աստուծոյ եւ ընդ  
դրկեալ զխոնարհութիւն , եղեւ եղբայր  
վանական : Ապա յաւուր միում առաքեաց  
զսա վանահօյրն ՚ի վաճառանոցն առ ՚ի վա-  
ճառել զէշ մի վանացն , որ վասն ծերու-  
թեանն եւ այլ պակասութեանցն չէր ինչ  
պիտոյ ՚ի գործ : Այս ամենայն զնողացն՝  
որք հարցանէին թէ լաւ իցէ էշն , պա-  
տասխանէր , թէ եթէ լաւ լինէր , վանա-  
հօյրն ոչ առաքէր զնա ՚ի վաճառել , եւ  
ծանուցանէր զամենայն պակասութիւնն  
այնչափ , մինչեւ ոչ գտաւ զնող զնաւ :

Ո երջապէս դարձոյց անվաճառ ՚ի վա-  
նըս , եւ ոմն որ ներկայ էր անդ ՚ի վաճա-  
ռանոյն , պատմեաց վանահօյրն զամենայն

անցսն, որ բարկացեալ յանդիմանէր զեղը  
բայրն զայն, թէ վասն էր մերկեաց զպա-  
կասութիւնս իշոյն առաջի գնողացն, որում  
պատասխանէ բարի կրօնաւորն, ես՝ որ  
թողի զփարթամութիւն իմ, եւ եկեալ մտի  
յայս աղքատ եղբայրութիւն, ոչ եթէ առ  
՚ի վշտացուցանելոյ զԱստուած, եւ խաբել  
զընկերն իմ, եւ գնալ ապա ՚ի տուն սա-  
տանայի, այլ մանաւանդ եկեալ եմ աստ  
շնորհօքն Աստուածոյ դառնալ յայլ մարդ.  
այսինքն սուրբ՝ արդար՝ հաւատարիմ՝ եւ  
Ճմարտախօս, եւ ստանալ զկեանս յաւի-  
տենականս: Այս պատասխանի այնքան  
զարմացցց զվանահայրն եւ շինեաց զնա,  
մինչեւ փոխանակ պատժելոյ՝ գովեաց զնա  
եւ արդարացցց:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս ոմն ՚ի նէապօլիս քաղաքի՝ բա-  
ղում համարձակութիւնս գտեալ էր ՚ի  
ծաղրածութեան, եւ առ ձեռն պատաս-  
խանատուութեան, մինչեւ ոչ ումեք կա-  
րօղ լինիլ տալ պատասխանի, յոր վատա-  
հացեալ յաւուր միում նախատէ զայր ոմն  
պատուաւոր, ասելով, մի թէ հայր քո ծը-

Նաւ երբէք զայլ անասուն բայց 'ի քէն ,  
առ որ խակոյն զետեղէ սցըն զպատասխա-  
նին , արդարեւ ծնանէր , եթէ մայր քո  
լինէր իւր կին:

ՏԱՄՆԵԱԿ. Բ

Ա մ' ասեր զինէն՝ զոր ինչ ոչ դիտես ,  
նախ զքէն ասաւ եւ ապա դինէն .  
Օ դիպուածն չար՝ որում ոչ դոյ Ճար ,  
բարւոք է ծածկելը .  
Դ աղացքին եւ հարսին , միշտ ինչ ինչ  
սպակասին:

Ք առաջնումն ամի յորում սցը ածէ  
կին , կամ խելագար լինի , եւ կամ պար-  
տաւոր:

Վ մուսնութեան առաջին տարին է սիրե-  
լո , երկրորդն՝ խանձարրելոյ , երրորդն  
թշուառութեան եւ տառապանաց:


Վ շարհս է վանդակ խելագարից:  
Ք որում աւուր ես մեռանիմ , աշխարհ  
բոլոր մեռեալ վասն իմ:

Որ փոխէ զգաւազան , փոխարկէ ըզ-  
բաղդն , եւ փոխէ զկացութիւնն , (երկիր  
այլ՝ կացութիւնն այլ):

Որ 'ի հաւոյ ծնանի՝ զերկիլ բրէ , որ 'ի

կատուոյ ցկնի , մուկն որսայ , զոր թէ նչ  
որսայ , նչ է ձագ նորաս :

Ամենայն խօսեալ բանի , չէ հարկ տալ  
պատասխանի , (նչ պատասխանելն եւս է  
պատասխան երբեմն) :



### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Առաքէ զեղովրոս տէրն իւր՝ տեսա-  
նել զբաղանիսն , թէ պատրաստ իցէ , որոյ  
՚ի գնալն պատահի դատաւորի քաղաքին ,  
որում հարցանէ դատաւորն , թէ ուր գը-  
նաս , եւ եղովրոս պատաժանէ , թէ նչ գի-  
տեմ . զոր լուեալ դատաւորն , կարծէ թէ  
գերի ոք իցէ փախուցեալ ՚ի տեառնէն ,  
քանզի սեաւ էր , եւ հրամայէ ածել զնա  
՚ի բանդէ լու նորա խկոյն դարձեալ առ  
դատաւորն ամէ . Տէր դատաւոր , տես թէ  
զիա՞րդ քաջադէպ պատասխան ետու քեզ .  
զի ահա ՚ի բանտ զնամ , զոր նչ գիտէի ,  
թէ գնալոց լցեմ , եւ դատաւորն հիաց-  
եալ ընդ ճարտարաբան պատասխանի նո-  
րա , արձակէ զնա ՚ի խաղաղութիւն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երբայեցի ոմն հարցեալ յումեմնէ ,  
զի եթէ գտանիցէ հազար ոսկիս յաւուր  
շաբաթու , առնուցո՞ւ . պատասխանէ , ոչ  
շաբաթէ այսօր , եւ ոչ ոսկիք կան 'ի միջիւ

ՏԱՄՆԵԱԿ . Գ

Որ դիտէ շողոբորթել զմարդիկ , սակաւ  
գլխով դրամուց բազումս շահի :

Որ քարոզէ յանապատի , կորուսանե-  
զրանն . որ լուանայ զիշյ դըուխ՝ կորու-  
սանէ զօձառն :

Յաղցր խօսք , եւ վատ դործ , խաբեն  
զիմաստունս եւ զյիմարս :

Յաղցր խօսքն օծանեն , եւ դառինքն  
կծանեն :

Յանցելցն անց (Շի նեխեալ ձկանէն 'ի  
բաց կաց) :

Որ ունի զիրաւունս յերկիւղէ դողայ .  
եւ որ չունի զայն յուսալով յուսայ :

Որ ոչ առնէ զանմուռթիւն յերփառ-  
սարդութեան , անշուշտ արասցէ զնա 'ի  
ծերութեան :

Դոմինա զյիմարն , եւ խաղաղացուցա-

նես զնա . որ թէ չիցէ յիմար , յիմարեւ-  
ցուցանես զնա :

Եմէջ երկուց ծոյլ պղերդաց օգուտն  
նորին է , որ նախ զմիւմն ճանաչէ :

Չիոյն յառաջ կոյսն , հրացանին յեւ-  
կոյսն , (ընտրելի է) . սեղանոյն միջնատեղին  
եւ կռուոց հեռագոյն տեղին :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երիտասարդուհի ոմն գեղեցկագոյն  
յոյժ զայրացեալ 'ի վերայ սիրահար բա-  
րեկամին իւրոյ , զի չէր եկեալ 'ի շնորհա-  
ւորել զօր ծննդեան իւրոյ , առաքեաց զա-  
դախին իւր 'ի յանդիմանել զանքաղաքա-  
վարութիւն նորա կանացի բարիութեամբ .  
Եւ կոչել զնա էշ : Օ որ լուեալ երիտա-  
սարդ բարեկամն իսկոյն ասէ ցաղախինն ,  
երթ եւ ասաց ցօրիսրդդ 'ի կողմանէ իմմէ ,  
զի եթէ ինքն եղեալ իցէր եզն , որպէս  
արդէն կովէ , դիւրին էր մեղ կազմել  
աստէն մսուր իմն բեթլէհեմեան :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս ոմն աղքատ ընակէր 'ի գետ-  
նայարկ մի աղքատիկ , յորում ոչինչ կայր  
բնաւ , ուստի եւ ոչինչ փոյթ էր նմա փա-  
կել զդուռն . 'ի գիշերի միում մինչ ննջէր  
անդ , եմուտ դող մի , եւ զննէր ձեռօք . եւ  
որոնէր արտորանօք գտանել ինչ 'ի գողա-  
նալ , զարթուցեալ 'ի քնոյ աղքատն , եւ  
փոքր ինչ թոյլ տուեալ , ապա ասէ ցդողն .  
մի փութար , այլ հանդարտորէն զննեան եւ  
որոնեան , եւ տեսից . թէ կարիցես գտանել  
'ի գիշերի 'ի մթան , զոր ոչ կարեմ գտանել  
'ի լոյս տուընջեան :

ՏԱՄԱՅԱԿ . Դ

Եա որ լկտիաբար զքեզ ընդ գրկէ ,  
եւ զբազուկն անպատկառօրէն զպարանո-  
ցաւդ պատէ , սակաւ սիրէ զքեզ , եւ բա-  
զումն կեղծէ , վերջապէս կամ տոգորէ եւ  
կամ արատաւորէ :

Ոչ է այնչափ զքոյս ձեռօքդ արկանել ,  
մինչեւ ապա դնալ ոտիւք որոնել :

Փակեալ բերանոյ եւ բացեալ աչոց  
չարիք ինչ ոչ հասանեն :

Օառայ լինի այնմ նա , որում յայտնէ  
վխորհուրդն իւր , զոր նչ գիտէ :

Ո՞ի առներ զամենայն՝ զոր կարես . մի  
մսխեր զամենայն , զոր ունիս , մի հաւա-  
տար ամենայնի զոր լսես , եւ մի ասեր զա-  
մենայն՝ զոր առնես :

Ար զծածուկ խորհուրդն յայտնէ , ըղ-  
հաւատան կորուսանէ :

Ար նչ կարէ ումեք օգնել քաշկով ,  
գէթ օգնեսցէ նմա բանիւ բերանով :

Ո՞չ բնաւ ժամանակ ունի՝ որ սպասէ  
ժամանակիւ :

Կի՞ր ըստ ախորժակի քում , եւ զդեցիք  
ըստ ախորժակի այլոց :

Օերութիւնն է չար իմն , որում բաղ-  
ձան ամենեքին , զոր չունին , եւ երիտա-  
սարդութիւն է բարի ինչ , զոր նչ ճանա-  
չեն՝ որք ունին :

---

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Այս ոմն յամենայն օր գնայր յեկե-  
զեցի , եւ առաջի ամենայն սեղանոց ծունք  
եղեալ ջերմեռանդութեամբ աղօթէր  
յերկար , բայց զինի ճաշոյն՝ սկսանէր խա-  
լալ զնարտ եւ զթուղթ , եւ հայհոյէր իբ-

բեւ շուն կատաղի , զայս ամենայն բաղմիցս տեսեալ դրացւոյ իւրոյ՝ ասէ , այրս այս ընդ առաւտօտն ճաշակէ զուրբս , եւ յետ ճաշոյն փսխէ զնոպաւ :

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Պ**երաստան ոմն գաճաճ գնացեալ 'ի պանդոկ եւ բազմեալ 'ի սեղան՝ եղաւ առաջի իւր սկաւառակաւ միով թռչուն մի պարարտ յոյժ խորովեալ , եւ 'ի նմին պահու ժամանէ անդր Ճանապարհորդ մի սպանիացի , ակն հարկանէ խորովածին այն միկ , եւ ասէ ցնա , Պարօն , յոյժ բարեզք կարող ես ընդունել քեզ բարեկամ ոք սեղանակից , անհաճոյ եղեւ այս բան՝ դերաստանին այնմիկ , զի կամէր զթռչունն զայն միայնակ ողջոյն ճաշակել . հարցանէցնա . թէ զի՞նչ է անունն իւր . պատասխանէ սպանիացերէն՝ ես կոչիմ Ալօնսօ , Հեանանտօ , Ալֆարբոս , Ալբբիտ : Վոժամայն պատասխանի ետ դերաստանն հիացմամբ , այս փոքրիկ թռչուն մի չորից սպանիացի պարօնաց զիա՞րդ բաւեսցէ , բայց ինձ միայնէ բաւական , զի փոքր անձանց պատշաճի փոքրիկ իմն :

ՏԱՄՆԵԱԿ Ե

Աամիկ գիւղականն զինքն օծանօղն  
խածանէ, եւ զիսածօղն օծանէ, (աղաչէ):

Ուամիկ տիսմար գիւղականին մի տար  
գաւազան՝ ՚ի ձեռին: (իշխել):

Ադահն է նման պարտիզանի շան. որ  
ոչ ուտէ ինքն զիսաւարտս, եւ ոչ թողու  
ուտել այլոց զայնս, նման իշոյն՝ որ բարձ  
եալ տանի զգինի, եւ ըմպէ զջուր լեղի,  
զոսկիս բարձեալ կրէ, եւ փշախոտ ուտէ:

Որ բաղձայ ամենայնի, զոր ինչ ստաս  
ցի, եւ ՚ի զայրացմանէն մեռցի:

Ո եց ոտնաչափ երկիրն՝ հաւասարէ  
զփարթամն եւ զաղքատն:

Հազում անգամ ոչ կամի՝ որ զձեռս  
կարկառէ:

Յանցաւորագոյն լինի շահ առանց խա-  
բելոյ:

Ուսուցանելով կրթեալ ուսանի, եւ ու-  
սանելով վարժապետ լինի:

Ո աւ է ածել կին աղքատ եւ առաքինի  
քան թէ փարթամ եւ անզգամ:

Պարտ եւ պատշաճէ մեղ լինիլ մեծա-  
րու վերնագունից, գթասէր վայրագունից,  
եւ քաղցրակենցաղ ընդ հաւասարաց:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Փատաքան ոմն ճարտար յետ յաղթելց ՚ի դատաստանի վէճո բազումն զըզ ջացեալ եմուտ ՚ի վանս ինչ յեղբայրութիւն, եւ ապա գործակալ կացուցաւ նոյն վանաց, եւ եղեւ՝ զի որբան դէպ լինէր մտանել ՚ի դատ վասն իրացն վանաց, կորուտանէր հանապազ գրատաստանն . մինչեւ հարցեալ եղեւ թէ լինելով այնքան տեղեակ դատաստանական իրաւանց, ընդէր կորուտանէ, պատասխանէ . ես յառաջադրեալ եմ այլ եւ ոչ խօսիլ սուտ. որպէս խօսէի յառաջադրոյն . ուստի եւ յաղթիմ ՚ի դատաստանի, խակ եթէ կամիք յաղթել, պիտոյ է դնել ՚ի տեղի իմ զայլ ոք, որ նախադասէ զերկրաւորս քան զերկնաւորսն, այլ ես այսուհետեւ ոչ կարեմ, եւ ոչ կամիմ մնալ յայս պաշտօն:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գրադիր ոմն մինչ որոշէր երբեմն զողջունագիրս տեառն իւրում ՚ի պահել զպիտանիս, եւ՞ի հուր արկանել զանպէտս, ետես զայն պարզամիտ ոմն սպասաւոր, եւ

աղաշեաց զնա շնօրհել նմա զքանի թուղթը ՚ի հուր այրելի անպէտս . եհարց ցնա գրագիրն . քեզ զի՞ պիտոյ է , զի՞նչ կամիս առնել զայնս , պատասխանի ետ սպասաւորն , թէ առ մայրն իմ առաքելոց եմ՝ զի՞ ՚ի բաժանիլն իմ ՚ի մօրէս , հարկագիր եղեւ ինձ առաքել զքանի մի թուղթս ողջունագրի . եւ միշտ տեսանեմ , զի այլ ծառայակիցք իմ ստէպ առաքեն զողջունագիրս առ ազգականս իւրեանց , իսկ ես ասէ՝ տակաւին նչ բնաւ ունեցայ բարեւագիր ինչ առաքել առ մայրն իմ:

---

ՏԱՄՆԵԱԿ . Զ

|| Հիւանդութեան ճանաչի առողջութիւնն:

Որ քերթելնչ դիտէ զմորթին հատանէ :  
Որ համարի աշխատութիւն՝ բարեկամաց ծառայութիւն :

Փութա ջանիւք լինիլ գովելի , քան թէ գովեալ :

Դովութիւնն օդտէ խոհեմին , եւ վնասէ տդիտին :

Ազատութիւնն (թէպէտ ազքատօրէն) պատուականագոյն է քան զմանեակ ոսկի :

Առաւել արժէ բարին հեռաւոր՝ քան  
զշարն մերձաւոր:

Եինական ոչ յագենայ, ապա մի առ-  
ներ նմա՝ ոչ զրկանս եւ ոչ շնորհս:

Ոչ դայ չար իմն, որ ոչ ածցէ զբարի  
ինչ զհետ իւր:

Որ զշարն փորձեալ չէ, զբարին ոչ ճա-  
նաչէ:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Q**արագործ կին ոմն արկեալ էր ՚ի  
թշուառութիւն՝ մերկացուցեալ յամե-  
նայն ընչից իւրոց զսիրահար իւր . որս ՚ի  
գնալն փախստական առ պարտուցն, զհետ  
նորա գնայր եւ կինն ոչ սակաւ ճանա-  
պարհ արտասուելով . հարցեալ յընկերէն  
թէ ընդէ՞ր այդպէս կակծագին լսյ, պա-  
տասխանէ, , թէ վասն զի թողի ՚ի վերայ  
նորա զնոր վերարկուն, զոր աւասիկ բարձ-  
եալ տանի ՚ի վերայ թիկանց իւրոց:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդք ոմանք գնացեալ ՚ի  
պանդոկն ՚ի ձաշել, հրամայեցին խոհարա-  
րին խորովել զկաքաւս պատուականս, եւ  
յայն միջոցին բերել ետուն զայլ հասա-  
րակ կերակուրս, որպէս զի յագեսցի ոմն  
յընկերաց իւրոց (որ էր շատակեր) եւ  
պակասեացի յախորժակաց, եւ ինքեանք  
միայն վայելեացեն զկաքաւսն: Եւ յուտել  
նորս զկերակուրսն, պատմէր իւրաքանչ-  
իւր զկեանս հօր իւրոյ եւ զմահ: Կպա  
յորժամ ածին զկաքաւսն, եկն կարգն շա-  
տակերին՝ պատմել զհօրէ իւրմէ, իսկ նա  
ամենայն ախորժանօք՝ ձեռն արկանէր ու-  
տել զկաքաւսն, եւ իւրաքանչիւր յընկե-  
րաց ստիպէին զնա պատմել ինչ գէթ ըղ-  
վերջին կենաց հօր իւրոյ, եւ նա ուտելով  
պատամխանէ. հայրն իմ մեռաւ յանկար-  
ծակի:

---

ՏԱՄՆԵԱԿ. Է

Կյա որ գործէ զչարիս, ունի կրել ըղ-  
նմանիւտ:  
Խակաւ դրամք, բազում խղճմտանք:

Որ ամուսնանայ աճապարելով, զղջայ  
եւ ցաւի հանդարտաբար:

Որ յիմար ծնանի, բնաւ ոչ բժշկի:

Վի միայն գործ բաւական է, առ ի  
յիմար համարիլ:

Իննուն եւ ինն են պիտոյ՝ առ յիմաս-  
տուն երեւիլ:

Գրիչն բժշկին է երբեմն զսուսեր ա-  
ւազակի:

Օսխալանս բժշկին ծածկէ երկիր:

Արարէք ձեզ մեղը, եւ ձանձք կերի-  
ցեն զայն:

Դաւական է աղախին մի, տալ ուրա-  
նալ ումեք՝ պետքոսի յարքունիս. (Ի մեղս  
ձգել զկրօնաւոր կամ զկարդաւոր ոք):

Օ յինչ օդուտ է ջորւոյ միում, թէ  
ծնեալ իցէ յերիվարէ սպանիոյ:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա

(Օրիորդ ոք ուտելով զբազում յոյժ  
պտուղս, հիւանդանայ. Եկեալ առ նա բր-  
ժիշկն հրամայէ առնել գրեխ, պատախա-  
նէ հիւանդն, լաւագոյն է ինձ մեռանիլ,  
քան զայդպիսի դեղ ընդունիլ. ասէ մայրն  
ցաղջիկն, բայցարձակապէս կամիմ ՚ի հարկէ

առնելքեզ զայն . ապա տեսեալ ողորմեւ-  
լին , թէ կամայ ակամայ հնազանդելոց է ,  
սկսանի լալ եւ ասել , այժմ տեսանեմ թէ  
է ճշմարիս , զի երեմն անմեղք պատու-  
հասին փոխանակ յանցաւորաց :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Բ

Երկու դեսպանք առաքեցան երբեմն  
՚ի ծերակուտէն մնէժու առ արքայն տաճ-  
կաց , որոց ոչ տուաւ մուտ առ արքայն ,  
յաղագս լինելոց նոցա երիտասարդ եւ  
անմօրուս , ասէ մին ՚ի դեսպանաց ցնա , որ  
ծանոյց գիամս արքային , ասա ցարքայն ,  
թէ եթէ գիտէր գերամբարձ ծերակոյտն ,  
թէ խոհեմութիւնն եւ իմաստութիւնն ՚ի  
մօրուսն կայանայր զերկուս նոխազս ա-  
ռաքէր ՚ի տեղի մեր :

---

ՏԱՄՆԵԱԿ . Ը

Բաղումք տառապին վասն հարկաւոր  
պիտոյից , (մինչ չունին) . իսկ ադահն վասն  
կամաց իւրոց (հանապաղ) :

Ղաւ դատաւոր՝ վատ դրացիւ

Բնկողմանեաց՝ ՚ի գիշերի, ՚նիւտ յառաւոտու, յոտն կաց ընդ կէս աւուր, եւ ընթայ յերեկոյի:

Վզգականք ոչ կազմեն զթիւ ՚ի մէջ բարեկամաց:

Պահեա զքեզ յառթից, եւ աստուած պահեսցէ ՚ի մեղաց:

Վռիթն է մայր բաղդիւ:  
Վռաւել տեսանէ մի միայն ակն տեաւըն, քան զչորս աչս ծառայից:

Վռաւել հաւատարիմէ մի միայն ակն, քան զերկուս ականջս:

Դարշելի խօսից՝ խուլ ականջք:  
Յորժամ հայրն ունի զինչս բազումն, որդին հասարակօրէն ունիցի զառաքինութիւն սակաւ:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա

Խխան ոմն մեծ՝ ընդ ոմանց երեւելի պալատականաց իւրոց գնացեալ մտանէ ՚ի կրպակն հոչակաւոր ակնավաճառի միում, ՚ի տեսանել զմեծագին պատուական ականակուռ զարդս. եւ յետ տեսանելոյն գնէ ինչ ինչ, ապա մինչ կամէր իշխանն գնալ զՃանապարհ իւր, ակնավաճառն ՚ի ժողո-

վել զիրս իւր , դտանէ պակասեալ ապարան .  
 ջան մի պատուական ականց . եւ դառնայ  
 խկոյն առ իշխանն . եւ ազդ առնէ մեծաւ  
 պատուով պատկառանաց : Օ որ լուեալ  
 իշխանն հրամայէ առ ժամայն ակնավաճա-  
 ռին ածել առաջի իւր տակառ մի մեծ լի-  
 թեփով , եւ դառնայ առ իւրայինսն եւ ա-  
 սէ , կամիմ ես զի սյս ապարանջան գտցի 'ի  
 մէջ սոյն թեփոյ , եւ իւրաքանչիւր ոք 'ի  
 ձենջ արասցէ որպէս եսս առնեմ . զայս ա-  
 սացեալ խփեաց զբուռն իւր , եւ միսեաց  
 'ի մէջ թեփոյն , եւ ամենեքեան պարտա-  
 ւորեցան հնազանդել այսմ հրամանի : Առ  
 այսու գեղեցիկ հնարիւք գտաւ ապրձանն  
 եւ դարձաւ առ տէրն իւր . առանց ամօ-  
 թոյ եւ խայտառակութեան խկապէս գո-  
 ղացողին զայն :

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ . Բ

**Ա**յր ոմն յոյժ աղքատ , բայց խորա-  
 գէտ , որ զգնայր 'ի վերայ կամրջի նորոյ  
 Փարէզ քաղաքին . 'ի սաստիկ ձմերան ըզ-  
 գեցեալ 'ի մերկուց մի միայն միակղի հան-  
 գերձիկ կտաւոյ . նմանապէս եւ վերարկու-  
 մի այծենւոյ 'ի վերայ թիկանցն , եւ զազ-

դերէն կախեալ սուր։ Օսա տեսեալ արքային, որ անցանէր ընդ այն կառօք, եւ զարմացեալ յսդ ՚ի հիացումն մեծ, կոչէ զնա առաջի իւր եւ հարցանէ, թէ ոչ բղդաս զսաստկութիւն ցրտոյս, պատասխանէ աղքատիկ այրն, ոչ ամենեւին, տէր թադաւոր, կրկնեալ արքայն եւ ասէ. զիա՞րդ կարելի է յայսպիսի սարսափելի սառնամսնեաց եղանակի ցրտութեան՝ այդպիսի մերկաբար հանդերձիւք տոկալ, եւ ոչ ցրտաբեկ լինել. քանզի ահա ես՝ որ գգեցեալս եմ հանդերձ ՚ի վերայ հանդերձի, եւ պատեալ զանձն իմ թաւարձի իմն մուշտակաւ աղուիսու, այսու ամենայնիւ տեսանեմ զիս պաշարեալ ՚ի ցրտոյ։ Պատասխանէ աղքատն. տէր արքայ, եթէ գերամբարձութիւն ձեր արացէ որպէս եսս առնեմ, ոչ ընաւ զգայցէ զցրտութիւնն. ասէ թագաւորն, զիա՞րդ առնես դու. ասէ աղքատն. ես զամենայն հանդերձս՝ զորս ունիմ, ահա կրեմ ՚ի վերայ իմ. ապա եթէ գերամբարձութիւն ձեր եւս կրեսցէ զամենայն զոր ունի, անտարակոյս ճշմարտին բանք իմ։ Վպա թադաւորն հիացեալ ընդ իմաստուն ճարտարաբան պատասխանի նորա, հրամանետ առնելնմա ձմեռնային հանդերձ մի փառաւոր։

Վամած հայրն առնել զորդիան ապերա-  
ջանիկս . վասն որոյ լաւագոյն է՝ զի որդին  
լսցիք յառաջ քան թէ հայրն յետոյ:

Վաստ վճարօղն է տէր այլում քսակիւ-  
դեղեցիկ կանայքն են դրախտ աչաց ,  
քաւարան քսակի, եւ դժոխք հոգւոյ:

Խոելագարութիւն մեծ է առ ՚ի բարի  
առնել այլոց , կորուսանել դանձն իւր:

Լաւագոյն է զիսելագարս կառավարել,  
քան ՚ի նոցունց կառավարիլ:

Խածումն ոչխարի նչ անցանէ ընդ կաշիւ-  
Օ որ ինչ եւ կամիս դու առնել կամ  
խօսիլ , յառաջ խորհեաց թէ զի՞նչ կարէ  
հետեւիլ:

Որչափ եւ խմաստուն իցես եւ նուրբ  
քաղաքավար , մտածեա թէ կորուսանելն  
զգլուխ է մահացու վէր . զի արդարեւ լի-  
նին սրունք , բայց նչ դլուխ փայտեղէն:

Լհարկաւոր ժամանակի եւ տեղւոջ կո-  
րուսանելն է շահաւետ:

Ոչ է զեղեցիկ այն , զի է զեղեցիկ .  
այլ զոր սիրտն սիրէ , այն է զեղեցիկ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա

Ապատուաւոր միում տան ծնօղք ընդ  
որդւոց բազմեալ՝ ի սեղան, մինն որդւոց  
խնդրէ՝ ի հօրէն զմիս, որ կտրատեալ բա-  
ժանէր. եւ հայրն սաստելով ասէ ցնա .  
տմարդութիւն է այդ բան, եւ անկար-  
գութեան նշան . եւ ոչ վայելէ բարեծը-  
նունդ որդւոյ, որում օրէն է համբերել .  
մինչեւ ծնօղքն տեսցեն ինչ նմա կերա-  
կուր: Հետ աւուրց ինչ կրկին բազմեալ  
՚ի սեղան, հայրն՝ իւրաքանչիւրոց տուեալ  
դրամին մայ, սմա մոռանայ ՚ի տալ . եւ  
սոյն որդի տեսեալ թէ այլք ուտեն, եւ  
ինքեան ոչինչ տուաւ, ասէ ցհայրն . հայր  
սիրելի, տոնւր ինձ եթէ կամիս՝ սակաւ ինչ  
աղ . հարցանէ հայրն, թէ զի՞նչ կամիս  
առնել զայն, պատասխանէ իսկոյն որդին,  
թէ յաղելոց եմ զմիսն զայն, զոր տակաւին  
տալոց է ինձ հայրն իմ:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Բ

Ապատուաւոր խրախճանի միում, յո-  
րում էին աղնուական անձինք, ոմն ՚ի  
բազմականաց անտի սկսանի առնել զպաշ-

տօն հատանելց զմիս , 'ի սեղանի անդ .  
բայց էր այնքան անվարժ յայն գործ , եւ  
անխոհեմ 'ի շրջահայեցութեան , զի կը տ-  
րատեալ մոցն 'ի պատառաքաղէն այնպի-  
սի իմն կոպտութեամբ արկանէր յարդա-  
նակն որ յսկտեղ , մինչեւ ցայթել գիրուց  
արդանակին 'ի վերայ պատուական հան-  
դերձից ազնուական տիկնոջ միում , որ էր  
բազմեալ առ ընթեր իւր . մինչեւ օծանել  
զհանդերձս նորա ողջոցն . որ առ պարկեշ-  
տութեանն զսպէր զկիրս իւր : Արդ՝ մինչ  
տակաւին 'ի գործ կտրատման էր անկիրթն  
այն , լսէր տիկինն միում 'ի բազմականաց  
անտի . որ գանգատէր զնիհարութենէ  
իւրմէ , եւ ասէր , թէ բարւոք ուտեմ եւ  
ըմպեմ , եւ հանդիսա ննջեմ , եւ անտրառում  
կեանս վարեմ , բայց այսու ամենայնիւ ոչ  
կարեմ գիրանալ . ասէ ցնա տիկինն . պա-  
րօն , եկ նիստ 'ի տեղւոջ իմում . եւ գիրա-  
նաս 'ի սակաւ ժամանակի . միայն թէ պա-  
րօն կտրատիչն կամեսցի յանձն առնուլ  
զաշխատանս՝ առնել եւ քեզ , որպէս ար-  
դէն աշխատ կալաւ առնել ինձ :

ՏԱՄՆԵԱԿ. Ժ.

Հաճելի է ամենեցուն՝ որ կարի հաճի ինքեան։

Հայսմիկ ժամանակի լան ծիծաղելով,  
եւ ծիծաղին լայով։

Որ թողու զակաւն առ ՚ի ունիլ զբազում, ոչ զմինն ունիցի, եւ ոչ զմրւան։

Օ սնչիւն իշոյ ոչ բնաւ մտանէ յերկինս  
(անզգամ մարդոյ հայհոյանաց չէ ունին  
մատուցանելի)։

Դմաստունն կառավարի բանիւ, եւ խելառն միայն գանիւ։

Օ երակցաքն են ազաւնիք, դուքս եւ արքայք են բազեք։

Երեք իրք փարթամացուցանեն զմարդ,  
բայց թէ որպէս աստուած գիտէ ։ շահիլ  
եւ ոչ ծախել, խոստանալ եւ ոչ կատարել,  
փոխ առնուլ եւ ոչ դարձուցանել։

Եթէ կամիս լինիլ փարթամ ընչեք,  
լեր աղքատ ախորժակօք։

Վստուած պահեսցէ զիս ՚ի յազքատացեալ փարթամէ, եւ ՚ի փարթամացեալ  
աղքատէ։

Պատառն յերեսս տուեալ դեռ զոչ ոք  
է հեղձուցեալ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա.

Ուղովիկոս չորեքտասահներորդ արքայն գաղղիացւոց յառաջնում ամի թադաւորութեան իւրոց ել ՚ի տեսութիւնքաղաքաց իւրոց տէրութեանն, զորս տակաւին չէր տեսեալ; Լւ իբրեւ մերձեցաւ ՚ի քաղաք ինչ, բնակիչքն այնորիկ առաքեցին ընդ առաջ նորա զգլսաւորս իւրեանց, ՚ի մէջ որոց ոմն որ ունէր զպաշտօն յարդութիւն մատուցանելոյ, երկիրեպագթադաւորին եւ ասէ . տէր արքայ . դիտեմք զի պարտ եւ պատշաճ էր մեզ ըզհրացանս թնդանօթից արձակել ՚ի գալստեան ձերում . ՚ի նշան ուրախութեան մերոյ . յընդունիլ զգերամբարձութիւնն ձեր, որպէս արարին այլ ամենայն քաղաքք . վասն որոց եւ ցասուցեալ իսկ էք, զի նչ արարաք զայն, բայց ծանիր տէր թագաւոր, որ յաղագս քսան եւ չորս պատճառաց նչ արձակեցաք զայն, նախ՝ զի նչ ունիմք հրացանս: Երկրորդ՝ զի . . . . Յայս բան միջահատէ եւ արդելու ՚ի խօսելոյ զնա ասելով. այս միայն պատճառը բաւական է առ այժմ, եւ զմնացեալ քսան եւ երիսն լուայց յայլում ժամանակի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Բ

Ա խրախնձանութեան սեղանի ազնուականաց ոմանց պատմեցաւ , թէ աստեղաբաշխ ոմն գուշակեալ էր ինչ , որ ոչ էր պատահեալ եւ կատարեալ գուշակութիւնն իւր . եւ ոմն 'ի բազմականաց անտի խօսիլ սկսաւ եւ ասէ , թէ արդարեւ ոչ քնաւ տեսի աստեղաբաշխ ոք , որ ունիցի զուղեղ 'ի գլուխ իւր . այլ ամենեքին են յիմարք առ հասարակ . Ապասաւոր ոմն որ ըեր զայս ամենայն , բերէր 'ի սեղան գլուխ մի որթու , զօրոյ զուղեղն եկուլ 'ի բերելն . իսկ մատակարարն հատեալ զայն 'ի բաժանել իւրաքանչիւրոցն , եւ ոչ գտեալ զուղեղն հարցանէ . վասն էր այս գլուխ ոչ ունի զուղեղ . պատասխանէ սպասաւորն , այս որթ էր աստեղաբաշխ :

առաջ ու մասն սպասարան ու գրառարան  
ունի . մասն ըստ մածուցան ու ըստ մածուցան  
... . զա քարոզի առևտուն մակար ու իւ  
ունի արքայա . այս մատակար մասն առա  
մածուցան մասն առ . իւ մասն ամբ ուրա  
մասն յամանուր ու ներառա . Ա մատակար  
ու մածուցան իւ մասն ըստ մածուցան



# ՀԱՅԻԿՐԵԱԿ ԵՐԵՌԴ

ՏԱՄԱՆԵԱԿ. Ա

Իբր լինին ձեռօք՝ եւ աւերին ոտիւք.  
մտանեն ընդ դուռն, եւ ելանեն ընդ ծըս-  
նելցյզն։

Որ զիսորհուրդս զիւր յայտնէ, ոչ եւ  
զայլոցն իսկ պահէ, զգոց լինէի յայսմանէ  
եթէ գիտացեալէի։

Ո՞ուձակն ցեխոտեալ առաւել շահի,  
քան զմոխրապատն հողաթափ. լաւէ մա-  
շել զմուձակս, քան թէ զփոռցն անկողնոյ։

Ո՞ի ծաղըեր զայն, որ ունի զցաւ. եւ մի  
հեդներ զջշմարիտն։

Տիկնայք ժամանակիս զառձեռն դրամա  
խնդրեն, եւ ոչ զհաշիւս եւ զհառաշանս։

Հասարակօրէն մեծ է ահն, քան զնոյն  
իսկ չարիսն։

Որ կալնու զօձաձուկն զտտանէն, եւ

զկինն զխօսիցն , կարէ ասիլ , թէ զոչ ինչ  
ըմբռնէ :

Այստիկ բարեկամութիւն ընդ կանանց  
է սատանայ քսակիւ (ուտիձ ընչից) :

Առգն մեռեալ կնոջ մինչեւ ցդուռն  
տեւէ :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Ա

**Ո**մն ՚ի խրատել զորդին իւր , ՚ի մէջ  
բազում խրատական բանիցն պատուիրեաց  
եւ զայս . մի ասեր բնաւ կնոջ զխորհուրդ  
քո . վասն զի կանայք ունին զլեզուս իւր-  
եանց լի ծակտեօք : Խոկ եթէ ստիպեսցիս  
յայտնել զխորհուրդ քո ումեք , ասաւ այն  
պիսի մարդոյ , որ համբաւեալ իցէ ստա-  
սաց . բանզի ոչ հաւատան նմա , յորժամ  
կամիցի նա յայտնել զխորհուրդ քո այլոց :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Բ

**Ճ**անապարհորդ ոք մեծորովայն եւ  
պարարտապորտ յանցանելն ընդ մէջ գեղջ ,  
ետես զնա պանդոկապետն . եւ յուսալիք  
հրաւիրէր զնա , կարծելով զայն ընդունա-

ըան բազում կերլեաց եւ ըմպելեաց , ու  
բովք եւ եւս փքացուցեալ երեւակայէր  
քերթել տիկ հանել զկաշի նորին , այսինքն  
զդրամա քսակի նորա . բայց խաբեաց նո-  
րին խոհականութիւն զսորին խորամանկու-  
թիւն քանզի առանց ողջոյն տալոյ ան-  
գամ , մորակեալ զերլիվարն անցեալ գնայր .  
զոր տեսեալ եւ ՚ի յուսոյ իւրոյ զվկեալ ,  
սկսաւ աղաղակել զկնի հեգնեալ արհա-  
մարհելով . թէ ասպետ , վասն էր ներ-  
հակ այլոց անցաւորաց զբեռնդ զպարկդ  
առաջի քո բարձեալ տանիս , եւ ոչ զկնի ,  
պատասխանէ նմա . վասն զի գտանեմ զլս  
այժմ յերկրի աւաղակաց , յորոց փօրթամ  
զիս ճողոպրել :

---

ՏԱՄՆԵԱԿ · Բ

**Գ**լխոյն րորի խելագարն ծնրադրէ .  
լինն ծիծաղի՝ յորժամ կարէ , եւ լայ  
յորժամ կամի :

Երգէ գորտն , որ ոչ զբուրդ ունի , եւ  
ոչ զկաշի . (շատացօղն թէ եւ չունի , քան  
զունողն ուրախ ապրի) :

Բայց զխորհուրդ քո բարեկամի քում ,  
եւ նա զիցէ զոտն իւր ՚ի վերայ պարա-

Նոցի քու կայր , ոչ ոք իմանայր ,  
թէ ձու էր ածեալ

լաւ է հայցել եւ մուրանալ , քան եւ  
ըերել զսրունս 'ի կախաղանիւ (լաւագոյն  
է կարկառել զձեռն՝ քան զպարանոցն:

Ծափողական հարցման՝ պատասխանի  
անագան:

Օ խոստումն անարդար՝ կատարելն չէ  
արդար:

Այսն է հուր՝ կինն է վուշ , գայ սատա-  
նայ եւ փչէ 'ի նոսա:

Որպէս եւ հարցումն առնես , այնպէս  
պատասխանեսցի քեզ:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Ա

Առէքս ոմն սաստիկ տառապեալ կայր  
ոտնացաւ ախտիւ . լուեալ թէ ժամանեալ  
իցէ 'ի մայրաքաղաք իւր անդը բժիշկ  
ոմն , որ պարծէր ունել զգաղտնիս բժշկե-  
լու զայս ախտ , առաքեաց զխորհրդակիցն  
իւր խնդրել 'ի բժշկէն 'ի փոխ յիսուն հա-  
զար ոսկիս . պատուիրելով նմա , զի եթէ  
չունիցի տալ զայնքան դրամուց բազմու-  
թիւն , յայտնեսցէ զնորին խորամանկ խա-

բէութիւն . գնացեալ առ նա խորհրդակեցին առաջարկէր զայս խնդիր , եւ բժիշկն ներումն խնդրելով ասէր , թէ չեմ ձեռնահաս նաեւ յիտուն ուկիտ տալ . ապա պատասխանէ խորհրդակիցն , թէ եւ ես ունիմ հրաման յատուկ 'ի դքսէ տեառնէ խմմէ ասել քեզ , թէ դու խաբեբայ ոմն ես . վասն զի եթէ ունէիր զգաղտնիս բժշկութեան ոտնացաւի , երկերիւր հազար ոսկիս ունիլ քեզ էր իբրեւ ոչինչ , թող թէ յի սուն հազարաւ Այս այս 'ի դէպ դայ նաեւ մոլորեալ քիմիականաց կամ խաբեբայից , որք զիիլառվայական քարինս բաղադրեն :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Բ

արցին առ ոմն փարթամ ծեր , թէ վասն էր ոչ ամուսնանաս . պատասխանէ , վասն զի ոչ ունիմ զհակումն առ կանայս պառաւեալս . կրկնն ասեն , որովհետեւ զարդարեալ իսկ ես ամենայն բարեբաղդութեամբ եւ ընչիւք , դիւրին է քեզ գըտանել զերիտասարդուհի ոք ըստ հաճոյից քոց . ասէ ծերն . որովհետեւ չունիմ ես ամէր 'ի վերայ պառաւանց , թէպէտ եւ ծեր իցեմ , որպէս հնար է՝ զի երիտասարդուհի մի ունիցի 'ի վերայ իմ սեր :

ՏԱՄՆԵԱԿ. Գ.

Որովայն թեփոյ եւ նիւթ վերաբկուի,  
(քաղցեալն զըկէ զբերանն վասն փառաւոր  
դեստաւորելց):

Համարձակ խնդրողին՝ պատրաստական  
մերժող եւ զացօղ:

Դուռն կնոջ է բաց այնմ՝ որ բերէ:

Որ կամիցի ունիլ զկեանս անարատ,  
հարկ է զի ունիցի զկարդ եւ զշափի:

Դիրք փակեալ՝ ոչ գիտուն գործէ զմարդ:

Ծերան խմաստուն մարդոյ՝ թէպէտ եւ  
մեռեալ իցէ, խօսի:

Ղաւադոյն է լինել ուսեալ, քան ու-  
սուցիչ:

Նաեւ խելագարն երբեմն խօսի զի-  
մաստուն ինչ քան:

Բնդ մեծամեծաց կարճ խօսակցութիւն:  
Գիտութիւն աղքատաց է յիմարու-  
թիւն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա.

Եկեղեցի խեղճ գեղջ միոյ ածին եւ  
բախայ մի ՚ի մկրտել. միամիտ քահանայի  
կամ առ ծերութեան իւրոյ, կամ վասն այլ

ինչ պատճառի, ոչ կարելով վոյթ գտանել  
զկարդ մկրտութեան ՚ի ծխաղանի, զբոլորն  
թղթատելով ասէ զայս երախայ մկրտել  
է կարի դժուարացնեան:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Բ

Արեւելեան ոմն արքայ լուր անբարի  
առեալ ՚ի բանակէ իւրմէ, որ ՚ի ճակատէ,  
տառապէր տիսրէր տագնապէր ՚ի սրտի  
մինչեւ առաքել կոչել զոմն ՚ի ծառայից  
իւրոց, որ էր ծաղրածու ուրախարար, որ  
պէսզի օրտադիւր բանս ինչ խօսեսցի ՚ի  
փարատումն հոգոց թանձրութեան. ապա  
այն ինչ եկեալ ծաղրածուն ՚ի յայդորա-  
նաց յարկին կայր, գայ արքայն մտանել ՚ի  
ներքս ընդ այն, եւ առ թախծանաց սրտին  
յաղադս անզգոց ընթացից իւրոց դիպի  
դլխարկն ՚ի բարաւորն յարկի դրան. եւ  
անկանի յետ կոյս, եւ ինքն մերկապլուխ  
մտեալ ՚ի ներքս՝ դէմ յանդիման տեսանէ  
զծաղրածուն, եւ բարկութեամբ պաշար-  
եալ իսկոյն՝ հրամայէ դլխատել զնա. որ  
անկեալ առ ոտո արքային հարցաներ ըզ-  
պատճառ անակընկալ պատուհասին, ու  
րում պատասխանէ արքայն. թէ վասն զի

զչարաբաղդ զերես քո տեսի, եւ ահա անկաւ փակեղ գլխոյս. խկոյն համարձակեալ ծաղրածուն ասէ, տէր արքայ դատ արա, որոյ ՚ի մէնջ երկոցունցս իցէ երես չարաբաղդութեան դիմաց իմոց էր, զի տեսեր զիս, եւ անկաւ փակեղդ ՚ի գլխոյ , ապա չարաբաղդագոյն երես քո է, քանզի ահա տեսի զդէմս քո, եւ գլուխ իմ անկանի: Ո՞նդ այս հանձարադիւտ պատասխանի այնքան հաճեցաւ արքայ , զի ոչ միայն շնորհեաց նմա զկեանս, այլ եւ զբարի կեանըս . յաւել եւ ընկալաւ զփարատումն տիսրանաց իւրոց զուարձացեալ եւ բերկրեցեալ. վասն որոյ եւ կոչեալ խկ էր զնաւ

---

ՏԱՄՆԵԱԿ. Դ

Կանայք ոչ զզօրականս , բայց միայն զունկարիացիս զինեալս վահանաւ եւ առձանակաւ (այսինքն զոսկիս մաճառու եւ զդահեկանս):

Եռաւել գիտէ ուսումնական մի եւ գիւղական մի քան ուսումնական մի միայն: Լոթէ կինն մեղիցէ , այրն ոչ մնայ անմեղ . (վատ օրինակաւ կամ կառավարու-

Թեամբ տալով նմա պատճառ)։  
Քսակն է բերան իմն դժոխոց (զի է  
մշտաբաց)։

Որ չափազանց կամի առնել զրո դիտէ,  
համարեալ լինի իբրեւ յիմար։  
Որպիսի զքեզ տեսանեմ, այնպիսի զքեզ  
դատիմ։

Ոչ ոք մայր է այնքան անզգամ, որ ոչ  
բաղձացի ունիլ բարի որդիս։

Յառաւել դիտելոյն կորոյս աղուէսն  
զձետ իւր։

Որ զոշնչ դիտէ, զոշնչ իրէ երկրայի։

Յայլոց սխալանաց եւ յիմարութեանը  
սասանի խոհեմութիւն եւ յիմաստութիւն։

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա Եծաբան ոմն բարձրամիտ (որպիսի  
են ամենեքին բնականաբար) իբրեւ մերձ  
եղեւ ՚ի մեռանիլ, կոչեալ զնօտարն, գրել  
տայր նմա զկտակ իւր, եւ յետ թողլոյ ՚ի  
կտակի անդ՝ զզանազան անձանց զրա-  
դում յոյժ ինչս քան զոր ունէր, եթող  
ինչ եւ նօտարին այնմիկ։

Իսկ նօտարն մինչեւ ցայն վայր զքէր  
զրը ինչ եւ ասէր. այլ յորժամ եհաս բանն



՚ի շահաստանութիւն իւր, եկաց ՚ի գրելոյ,  
եւ ասէ ցկտակարարն . պարօն, լի՞նչ դոյի-  
ցըդ վերայ հաստատեալ կայ այս ամենայն .  
վասն զի վաւերութիւն կտակի քս յատ-  
կապէս կայանայ յայն, զի ներկայ ինչքն,  
զորս ունիս հաւասար լինիցին կարգադ-  
րութեան կտակիդ, զոր առնես . պատաս-  
խանի ետ մեծաբանն եւ ասէ . ահա այս իսկ  
է, որ տաղնապէ զիս

ՏԱՄՆԵԱԿ. Ե

Ո Պրագէտ է մուկն, բայց եւ առա-  
ւել կատուն:

Ուր ոչ է ամօթ, ոչ է եւ երկիւղ:

Ոչ ամենեքեան հասակի, այլ գիտելն է  
յարգի:

Որմն սպիտակ է թուղթ խելառի:  
Քիմիականն ագէտ մտածէ . ՚ի կապա-  
րէն առնել զոսկի, եւ առնէ զոսկին կա-  
պար կամ երկաթ:

Որ գայ ՚ի կաքաւելոյ, գիտէ թէ որ-  
պէս ածի նուագն: (կրթութիւնն ուսու-  
ցանէ զամենայն):

Որ վայելէ ՚ի շնորհս թագաւորին է կէս  
թագաւոր:

Եշնանէ նա մեծարդի, որ ունի զար-

Ճամ եւ զոսկի:

Ղաւէ թագաւոր բարի քան զօրէնս  
բարիս:  
Որ գիտէ՞ տէր է այլոյ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Արողիչ ոմն քաջ մինչ քարողէր  
յաւուր կիւրակէի յետ կիսաւուր, ետես  
զի այր ոմն ննջէր առ ոտս ամպիոնին, եւ  
երկու կանայք՝ որք նստէին առ նմա զը-  
րուցաբանէին բարձրածայն։ առէ քարո-  
ղին ցկանայս։ իբրեւ վարենթաղիզ իմն  
՚ի մէջ արկանելով, աղաչեմ զձեղ մեղմա-  
գոյն եւս զըրաբանեսջիք, զի մի զարթու-  
ցանիցէք զայրդ զայդ խեղճ, որ քաղցրու-  
թեամբ իմն խորդայ:

ՏԱՄՆԵԱԿ. Զ

Յարդեղէն տէրն կամ մեծաւորն ու-  
տէ զպողպատեայ ստորակայնն (աղքատ  
իշխանն զփարթամ ստորակայն ուտէ):

Ո՞ի թողցի բարի երկիրն վասն վաս-  
թարութեան տեառն իւրոյ:

Որ ոչ կամի ծառայել միմիայն տեառն,  
ծառայելոյ է բազմաց:

Պատերազմն գայլոց՝ է խաղաղութիւն  
գառանց։

Ո՞ի տար ծառայի քում յագուրդ հա-  
ցի, եւ խնդրեսցէ ՞ի քէն պանիր։

Յորժամ սկսանի պատերազմն, բաց-  
եալ լինի դժոխքն։

Աթէ կամիս բարեպէս ծառայել, ծա-  
ռայեան դու քեզ անձամբ։

Որ ունի զերկիր, ունի զպատերազմն։

Որ ծառայէ բազմութեան կամ հասա-  
րակութեան, ունի զվատթար կամ զան-  
ծանօթ տէր։

Ո՞ի օրն դատէ զմիւսն, եւ վերջնն  
զամենայն։

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Առոքս ոմն կամապաշտ, որ վարէր զիշ-  
խանութիւն իւր առանց խորհրդակցի մի-  
միայն խելօքն իւրովլք, յաւուր միում այն  
ինչ կամէր յորս գնալ, հաւատարիմ աս-  
պետն իւր էած առաջի պատրաստեալ ձի  
մի, զոր տեսեալ դքսոյն ասէ. սոյն այս ձի  
ոչ ունի այնքան զօրութիւն բաւական առ  
՞ի կարօղ լինիլ տանիլ տոկալ առաջի եր-  
կար գործոց եւ բազում աշխատանաց։

պատասխանեւ ասպետն, բարձրութիւն ձեր  
միայն թէ հաճեսցի ելանել յայս ձի . եւ  
ես անտարակոյս խոստանամ, զի կարօղ լիցի  
սա բառնալ զանձն քո հանդերձ ամենայն  
խորհրդով քովէ

ՏԱՄՆԵԱԿ. Է

Դիւրագոյն է դատել զգործս, քան  
առնել զայնս:

Ո՞վ դու դատաւոր եւ դու փաստաբան,  
մտածեցէք զի եւ ձեզ լինելոց է դատա-  
տան:

Եթէ դատաւորն սիրէ զոսկի, փաստա-  
բանն սիրէ զարծաթ:

Դինին տայ խօսիլ զՃշմարտութիւնն:

Որ լոէ, հաւանի:

Դանապարհրդան ինչ երդ է՝ ՚ի մէջ ա-  
ւազակաց:

Որ վաճառ ինչ եպերէ, կամի գնել զայնս  
Ո ատթարութիւն դատին է այն, զի ՚ի  
միոյ քննութենէն ծնանին հարիւր դատք:

Օ գցց լե՛ր ՚ի նարտախաղաց մարդոյ  
եւ ՚ի դատ մտանելոյ, ընդ վեհագունին  
քան զքեզ:

Բազումք են ուսանողք, եւ սակաւք են  
ուսեալք:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այր ոմն հեծեալ ՚ի ձի իւր մինչ անցանէր ընդ գետ մի, սկսաւ ՚ի ծունդ իջանել ձին ՚ի միջի անդ ջուրց. (որպէս սովորեն ոմանք) եւ անկան ՚ի վտանգ մեծ յոյժերկոքին եւս ընկղմելոյ. յորմէ հազիւ հազգերծուցեալ ասպա այնուհետեւ ոչ ունէր այնչափ վարկումն ՚ի վերայ ձիոյն այնորիկ եւ խնամ որչափ յառաջն ունէր, մանաւանդ թէ գան հարկանէր անողորմաբար. զոր տեսեալ միում ՚ի ծանօթիցն հարցանէ. թէ զբնէ յանցանք են ձիոյդ, զի չես բարեկամ ընդ նմա, վասն է՞ր ոչ ես բարեկամ ընդ ձիոյդ ընդ այդմիկ. պատասխանէ. չունիս իրաւունս, զի ես այնչափ սաստիկ բարեկամ եմ ընդ նմա, մինչեւ ահաքանի իու աւուրք են՝ զի արբաք ՚ի միամին:

ՏԱՄՆԵԱԿ. Ը

Արիւնն զինուորին մեծացուցանէ ըզգօրապետնէ. Աստուած պահեսցէ ՚ի քաղցեալ զինուորէ:

Օ էնք ծուլից նչ մխասեն, եւ սուր նո-  
ցա նչ հատանէ:

Ի մէջ պատերազմի եւ որսոյ եւ սիրա-  
հարութեան, վասն մի հաճութեան հազար  
ցաւք:

Ի մէջ յաղթութեանց՝ քան զամենայն  
փառաւորագոյնն է յաղթել ինքեան:

Ի նւր, տես, եւ լուռ լել, թէ կամիս  
կեալ 'ի խաղաղութեան:

Ի տան այնմիկ նչ դոյ խաղաղութիւն,  
ուր հաւն խօսի եւ աքաղաղն լուէ:

Ճշմարիտ ազնուականութիւնն պարտի  
լինիլ ընկերակցեալ ընդ համեստութեան:  
Փոքր համարի ազնուականութիւնն՝ ե-  
թէ նուազեալ իցէ փարթամութիւնն:

Յորժամ ոք գիւղական լինիցի փար-  
թամ, նչ ճանաչէ ազդական եւ նչ բա-  
րեկամ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կոչեցաւ բժիշկ ոմն առ կոյս աղջիկ  
մի, որ 'ի կեանս իւր նչ հիւանդացեալ էր  
բնաւ, եւ 'ի սաստիկ պարկեշտութենէն նչ  
թողեալ նմա մերկուց զզարկ բազկին շօ-  
շափել պատատեաց թեւօք շապկին զդաս-

տըն, եւ այնպէս մատոյց բժշկին, զօր տես-  
եալ բժշկին, եւ նա պատեաց զձեռն իւր  
վերարկուաւն իւրով, եւ այնպէս զննեալ  
շօշափէր զզարկ բազկին՝ ասելով, քթա-  
նեղէն երակաց ահա բժիշկ չուխայեղէն:

---

ՏԱՄՆԵԱԿ. Թ

Որ ոչ սերմանէ, եւ ոչ ժողովէ:  
Որ զփուշ սերմանեսցէ, բոկոտն մի դը-  
նասցէ:  
Որպէս սերմանես նոյնպէս ժողովես:  
Հովիւն՝ որ գովից զդայն, ատէ զըշսարս:  
Այնքան է վաճառական նա՝ որ կորու-  
սանէ, որքան նա որ շահի:  
Որով սաստկութեամբ էշն զորմն, այն-  
պիսի ընդունի ինքն զցաւն:  
Այն ինչ՝ որ դիւրագին է, խփէ զնա՝  
որ երթայ ՚ի վաճառանոցն:  
Ազնիւ իրն ստացեալ, է կիսով չափ  
վաճառեալ:  
Տնը ինձ հաց, եւ կոչեա զիս շուն:  
Շարեկամի քում մի ինչ վաճառեր, եւ  
՚ի փարթամէն ցորեան մի զներ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. Ա.

Պահակեր ոմն քաղաքի կալեալ ըզ-  
մուրացիկ ոք յաղքատանոցն տանէր, (ուր  
արգելեալէր աղքատաց 'ի փողոցի մու-  
րանալ հաց), եւ 'ի ճանապարհի հարցանէ-  
ցաղքատն եւ ասէ, ուստի կեաս դու, պա-  
տասխանէ աղքատն եւ ասէ ցնա . եթէ  
հարցանէիր թէ ուստի մեռանիս, ես ա-  
մէի քեզ թէ 'ի քաղցուէ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. Բ.

Այր ոմն յիջաննեն ընդ սանդուղիս մի  
խարխուլ, հնացեալ եւ մթին, ասէ . աստ  
պիտոյ է ունիլ զուղեղն (զուշն) 'ի կրունկսն:

ՏԱՄՆԵԱԿ. Ճ.

Ան դանդատեսցէ՝ թէ խարեցեալէ  
որ վասն փորձոյ զչուխայ գնէ:  
Դէր խահանոց՝ նիհար կտակէ  
Աեղանն (մեծահաց) է ծածուկ իմն  
շող, որ առարձէ զտանուտէրն 'ի հիւան-  
դանոցն (աղքատացուցանէ):

Լարելի է գնիլ թանկ, նաև լաւագոյն  
երիվար մի:

Ըստն եւ կատուն ուտեն զայն, որ ոչ  
բարւոք պահպանին:

Գնողին հարիւր աչս ունիլ հարկ է. իսկ  
վաճառողին՝ մին բաւական է:

Որ դնէ ինչ, եւ ոչ կարէ վճարել, յե-  
տոյ ունի զայն ակամայ վաճառել:

Ունկութիւն կերպեաց՝ է որկորոյ սանձ:

Ո՛խմիայն ներկայն ընտրելի է քան զեր-  
կուս ապառնիս:

Արուեստն ոչ ունի մեծագոյն թշնամի  
քան զտգէտն:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա

արցեալ ոմն թէ որոց արուեստ իցէ  
բարեբաղդ, պատասխանէ. երաժշտաց՝  
երգեցողաց եւ գուսանաց. վասն զի այլք  
վճարեն նոցա վասն զրօսանաց եւ զուար-  
ճութեան, յոր եւ ինքեանք վայելին նուա-  
գելով եւ երգելով.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Բ

Ստացեալ ոմն մինչ պատմէր զկրից  
իւրոց ՚ի նշղեհութեան ՚ի վատաշու էր  
անձանց յանիրաւի զբարտողաց, ՚ի բազ-  
մութեան անդ ոմն չարախտավար ասէ-  
ցնա . ՞ գիտէ եւ դու անդ զբնչ սուտ  
խօսեցեալ ես, ուստի եւ զարժանին ընկալ-  
եալ ես զպատիժ։ Պատախանէ վշտագ-  
նեալն. եւ ոչ մի ինչ բարի զքէն վկայեցի  
անդ։

# ՀԱՅԻԿԻՐԵՎԱԿ

## ԶԱՐՅՈՒԹ

ՏԱՄՆԵԱԿ. Ա

Որ ոչ գիտէ բարւոք խօսիլ ՚ի վերայ  
արհեստի իւրոյ, եւ ոչ բարեպէս գիտէ զայն:

Ունիլ զհոդ մատաղ մանկանց, ոչ է ար-  
ուեստ բոլոր մարդկանց:

Որ վատաբար ամուսնանայ միանդամ,  
՚ի կեանս իւր զգայ զչարն յարաժամ:

Եմուսնացն զուստը քո յորժամ կամիս,  
եւ սակայն զդուստը քո յորժամ կարես:

Ո՞յցը գթած՝ առնէ զդուստըն խե-  
լագար:

Որ միշտ ներէ որդւոյն, լինի պատճառ  
զի մի արասցէ զբարի ինչ:

Որ չափազանց սիրէ զորդին, ոչ ուրա-  
խասցի ՚ի կեանս նորա:

Դլուխ գէր, ուղեղ նիհար:

Բաղաբավալարութիւնն բերանոց բա-

զումս արժէ , եւ է առանց դրամոյ:

Որ փչէ զմոխիրն , ըսու նովաւ զբերան  
իւր:

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Եթ ոմն հոչակաւոր փաստաբան եւ  
իրաւագէտ դատաստանի , առ որ դիմէին  
ամենեքին , որք միանգամ ունէին զվէճ եւ  
զտարածայնութիւն հարցանել 'ի նմանէ  
զխորհուրդ եւ զիրաւունս : Տեսեալ սա ,  
թէ նաեւ յոյժ փարթամքն 'ի նոցանէ զնչ  
այլ ինչ վճարեն , բայց միսյն պատիւս եւ  
շնորհակալութիւնս , ասէ ցնոսա . պարու  
նայք , եթէ այսուհետեւ ումեք 'ի ձենջ  
պիտոյասցի լսո ճրագի , բերցէ ընդ իւր  
զձէթ:

---

### ՏԱՄՆԵԱԿ. Բ

Պիտոյ է ըստ պատառոյն բանալ զբեր  
ան:

Որ ունի լեղի 'ի բերանի , ոչ կարէ մեղք  
թքանել:

Ատածութիւնքն են ազատ 'ի տրոց

հարկաց , բայց ոչ ՚ի դժոխոց :

Որ զշար գործէ , չաղիս մտածէ :

Խորհուրդք ծերոց , եւ գործք երիտասարդաց :

Իմաստունք ունին զբերան ՚ի սրտի , եւ  
յիմարք զսիրտ ՚ի բերանի :

Եթէ մի ձեռն զմիւսն լուանայ , երկոքին եւս մաքրին :

Որ ոչ ունի զսիրտ , ունիցի զսրունա :

Իմաստուն ձեռն ոչ գործէ զայն ամենայն , զոր առէ յիմար լեզրւն :

Քաղցեալ որովայնն զամենայն ինչ ախորժանօք ընդունի :

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ուղովիկոս չորեքտասաներորդ թագաւորն գաղղիացւոց շրջեալ ՚ի տեսութիւն աշխարհաց թագաւորութեան իւրոյ՝ եհաս եւ ՚ի քաղաքն Սավմուր . իսկ մեծամեծք քաղաքին ընդառաջ ելին նրմա , ընդ որս էր եւ գանձապետն . որ մատուցեալ առաջի թագաւորին՝ խօսիլ ըսկաւ բանս յարգանաց եւ ասել . տէր արքայ . իշխանք եւ բնակիչք բարի քաղաքին ձերոյ Սավմուրի՝ ամենեքին մաեր-

մագոյն ծառայք եւ հպատակք բարձրու-  
թեան ձերում 'ի տեսանելն զարքայ , զի  
հաճեցեալ է դալ յայցելութիւն իւր-  
եանց , այնքան լցեալ են ուրախութեամբ ,  
մինչ զի . . . զի . . . զի . . . զի . . . : Աստի՛ն  
ողորմելի այր կորոյս զամենայն յիշողու-  
թիւն եւ զհամարձակութիւն , եւ ոչ զի-  
տէր շարունակել զբան իւրէ Անդէ՛ն դուքս  
ոմն , որ էր ընդ արքային , առ 'ի ազատել  
զնա յանձկութենէ անտի , իսկոյն ելից ըզ-  
պակասութիւնն առելով զի ոչ կարես բա-  
ցատրել զայն:

---

ՏԱՄՆԵԱԿ. Գ.

Այլ ինչ մտածէ ձին , եւ այլ ինչ որ  
համետէ զնա:

Այլ ինչ մտածէ հիւրն , եւ այլ ինչ  
պանդոկապետն:

Ուր լինի հասանիլ ձեռօք , անդ ոչ է  
պիտոյ սանդուղք:

Ոտացիր զսիրտ ծերոյ , թէպէտ եւ  
դէմքո իցէ երփտասարդի:

Լեզու մեղքածոր , եւ սիրտ թունաւոր:  
Յորժամ տեսանեմք զմի ոտն սահիլ ,  
միւսն է 'ի վտանդի անկանելոյ:

Որ ունի զառողջութիւն է փարթամ ,  
եւ ոչ գիտէ զայն :

Այն պանիրն է լաւ եւ առողջ , զոր տայ  
ձեռն ժլատ :

Հիւանդութիւնն սրբնթաց կառօքդայ ,  
եւ հետիոտս գնայ :

Ոչ վասն ամենայն ախտի առ բժշկն ,  
ոչ վասն ամենայն վիճման առ փաստաբա-  
նրն , եւ ոչ վասն ամենայն ծարաւոյ առ  
սափորն :

Ի նախատինս բժշկաց ապրեսցուք մին-  
չեւ ցմահ :

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ենրիկոս չորրորդն ՚ի դնալն ՚ի Դօ-  
վանօն քաղաք , որ ՚ի Սորմանստիայ , դլսա-  
ւոր ոմն ծերակուտին , որ ներկայացեալ  
էր առ ՚ի ասել հրապարակաւ զներբող իմն  
՚ի գովեստ արքային , մնաց անբարբառ  
յընդ միջել բանից իւրոց . իսկոյն պալատա-  
կան ոմն որ կայր մերձ արքային , առէ . ոչ  
է զարմանալ զայսմանէ տէր արքայ . զի  
այս է բնական իմն պակասութիւն Սոր-  
մանստիացւոց՝ պակասիլ ՚ի խօսս իւրեանց :

ՏԱՄԱՍԵԱԿ. Դ.

Ձեւացն զքեղ հիւանդ , եւ կաց  
յանկողնի . եւ տեսցես՝ թէ ով ոք քեղ  
չար կամի , եւ ով ոք բարի:

Ո՞ի լինիցին աշք քո ՚ի գիրս այլոց , եւ  
մի ձեռք քո ՚ի քսակս նոցաւ:

Այսմ՝ որ ունի զտենդ , նաեւ քաղցրն  
թուի դառն:

Ի գնալն , ՚ի ծնանիլն եւ ՚ի յըմպելն ձա-  
նաչի դիտաւորութիւն կնոջ:

Ծմիշկ երիտասարդ զգերեզմանատունն  
լի առնէ:

Յիմարութիւն է զբժիշկն իւր առնել  
ժառանդ:

Ունիս ՚ի տան քում զմեռեալն , եւ  
գնաս ՚ի տուն սյլում լալ զայլ ոք:

Օ ցաւ աչաց պարտէ արմնկաւ բժշկել  
՚ի եղեցկութիւն եւ խելագարութիւն  
յընկերութեան յաճախ գտանին:

Ե՛կ ծխելով (առ դատաւորն ընծայե-  
լով) եւ դարձցիս երգելով:

Երբայեցիք կոստանդնուպօլսոյ երբեմըն ունելով վէճ՝ յատենի սինակօկային իւրեանց ՚ի վերայ արքայութեան, եւ ՚ի վերայ այնոցիկ որք կարեն մտանել ՚ի նա, եզրակացուցանեն, թէ մի միայն խրայելացիք, որպէս միակ ժողովուրդք ընտրեալ յԱստուծոյ, ունին մտանել յայն, եւ թէ արտաքսեալ լինիցին առ հասարակ ամենայն ազդաց եւ կրօնից անձննք։ | ուեալ տաճկաց զբացորշութիւն նոցա զայս, ասեն. որովհետեւ դուք երբայեցիքդ միայն վայելելոց էք զայս շնորհս, ապա ուր կարծէք թէ գնայցեն տաճիկքն։ Արդ՝ հրեայք երկուցեալ առաքել զնոսա ՚ի դժոխս, ասեն. նոքա կացցեն արդարեւ արտաքոյ արքայութեան, բայց ունիցին զհաճութիւն տեսանելով զփառս փափկութեան հրեից։ Այս երեսպաշտական պատասխանի նոցա եհաս յականջս մեծի եպարքոսին։ Որ պատժեաց զնոսա տուժել բազմագումար դրամուց ասելով։ Վանզի դուք խրայելացիքդ, որ վայելէք այժմ զպաշտապանութիւն մեծի թագաւորին մերոյ տաճկաց՝ մնայք ամենեքին վայելէլ միայն զայնքան փափկութիւնս ՚ի դրախտին, զոր մեք

տաճիկըս միայն ՚ի տեսանել կալոց եմք  
արտաքոյ , արդար եւ արժան է զի դուք  
պատրաստեսջիք մեզ գոնէ զվանս՝ առ ՚ի  
ոչ մնալ անծածկոյթ բացօթեայ , յանձ-  
րեւի եւ ՚ի հողմս , եւ յայլ դառնութիւնս  
եղանակի:

---

ՏԱՄԱՅՆԵԱԿ. Ե

Օ ուղեղեւնակն ոչ արձակէ զձայնն  
իմաստունն սիրէ առաւել լսել , քան  
ասել:

Գեղեցկութիւնն եւ ողջախութիւնն  
ունին ընդ միմեանս պատերազմ մեծ:

Կնոջ գեղեցիկ ասա , իսկոյն յիմարեսցի  
նա:

Երկայն լեզու , կարճ ձեռն:

Տգեղութեան դիմաց՝ պիտոյ է գեղեց-  
կութիւն մտաց:

Արբեցօղն ներէ գինւոյ զվասն , զոր  
առնէ նմա . ՚ի սէր բարւոյն՝ զոր զգայ ՚ի  
նմանէ:

Չարաքան խօսողին խոհեմ ունկնդիր:

Ար բազում խօսի , եւ սակաւ իմանայ ,  
Երբեւ զէշ վաճառի:

Արագիսի են կեանք մարդոյ , այնպէս եւ  
զերի եւ վախճան նորա:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

« Անի մի վաճառականք ընդ միոյ ըս-  
տասաւորի իւրեանց գնային հետիոտս ՚ի  
տօնավաճառ ինչ , որոց ուղեկցի եղբայր  
ոմն կրօնաւոր ֆրանչիսկեան , եւ ՚ի ձանա-  
պարհի ժամանեն ՚ի փոքրիկ գետ մի , որ էր  
ձանձաղ եւ չէր խորին , եւ ոչ ունէր կա-  
մուրջ կամ նաւակ , ապա աղազեն զեղբայր  
կրօնաւորն , որ ըստ կանոնի կրօնի իւրոյ բու-  
կոտն գնայր . զի հաճենցի զինքեանս ան-  
ցուցանել մի զկնի միոյ ՚ի վերայ ուսոց իւ-  
րոց , զորս յօժարութեամբ անցուցանէ .  
եւ մնայ միայն սպասաւորն . որ առ ծու-  
լութեան իւրում , զի մի լուծցէ զգուլ-  
պայս , յանդգնի ուսով կրօնաւորին յայն-  
կոյս տանիլ . ընդ որ դժուարացեալ կրօնա-  
ւորն բառնայ զնա թէպէտ յուս իւր , այլ  
հասեալ ՚ի մէջն գետոյն հարցանէ ցծոյլ  
ըսպասաւորն , եթէ ունիցի զդրամն առ  
իւր : Եւ նա կարծելով թէ յուսայ ըն-  
դունիլ ինչ ՚ի հատուցումն , ապատասխաննէ .  
թէ այն ունիմ . ապա իսկոյն արկանէ զնա

՚ի ջուր գետցին՝ ասելով. կանոն կրօնի իմոյ  
արգելու զիս կրել զդրամա.

ՏԱՄԱՆԵԱԿ. Զ

Եր առաջին ՚ի լսել, եւ վերջին ՚ի խօս  
միլ:

Ասելն չար զայլոց, է հինգերորդ տաշ  
րը. (՚ի ժողովուրդն ծնանի այլ ինչ):

Որ յառաջոց զիս նկարէ յետուստ զեղծ-  
եալ խանդարէ:

Իւրաքանչիւր ոք խօսի զտօնավաճառէն,  
ըստ որում ինքեան պահեալ է:

Որովայն մարդկան՝ վատ խորհրդական:  
Ճեղքեալ պստն հազիւ երբէք ՚ի ձեռ-  
աց անկանի, (վատ մարդիկ հազիւ դըժ-  
բաղդանան կամ մեռանին):

Որ չունի զյիշողութիւն, ոչ սիրէ ըզ-  
մտածութիւն:

Ոչ այնպէս փութով լինի տաճար մի  
Աստուծոյ, զի ոչ կանգնեսցէ սատանայ  
մատուռն մի հուռ առ նմին:

Որ որոնէ բազում պատիւ, յոյժ սա-  
կաւուն լինի արժանի:

Որ զայլոց բանս չարխօսիլ կամեսցի,  
ինքն հայեսցի եւ լուռ եղիցի:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վեծագոյն ոմն , որ ունէր զպարտս  
բազում յցժ , եւ ոչ երբէք հատուցանէր ,  
ունէր եւ ծաղրածու ոք ՚ի զըօսանս իւր ,  
որում յաւուր միում վասն իրիք անզգա-  
մութեան նորա՝ կամեցեալ տալ ապտակ  
մի , փախչի ՚ի նմանէ , ուստի կարի իմն  
սրտմտեալ ՚ի հեռաստանէ սպառնայ նմա ,  
ասելով . կաց դու անզգամ , կաց դու վայր  
մի . եւ ես հատուցից քեզ , որում պատաս-  
խանէ ծաղրածուն , եւ կարի իսկ քաջ , ո՞ր-  
պէս հատուցանելոց իցես ինձ , մինչ ոչ ու-  
մեք ինչ հատուցեր :

---

ՏԱՄՆԵԱԿ . Է

Աւմիր յոլով , խօսեաց սակաւ , եւ լուր  
բազում :

Ամենայն սխալեալ գտանէ զպատճառ  
ինչ անմեղադիր առնելոյ զինքն :

Այն՝ որ թուի կատակ՝ բազմիցս է  
ճշմարիտ :

Որ կամի ասել զայն ամենայն , զոր դի-  
տէ , լուիցէ զայն՝ զոր ոչ կամի :

Այսան եւ սակաւ տեսանի , այնիքան

աաստիկ է բաղձալի:

Ոչինչ ատելութիւն է մեծագոյն, քան  
որ 'ի սիրոյ ծնանի: ('ի ներքոյ մեծ սիրոյ գոյ  
մեծագոյն ատելութիւն):

Ոչ ամենայն ինչ՝ որ սպիտակ է, ալիւր  
է. եւ ոչ ամենայն փայլուն ոսկի է:

Օ նմանէ՝ որ քեզ ոչ վերաբերի, մի  
խօսիր բնաւ, ոչ չար՝ ոչ բարի:

Ի մեջ ասելոյ եւ գործելոյ մաշն բա-  
զաւմ մուշակիք:

Բաղզում անգամ առաւել յաղթէ խո-  
նարհութիւնն քան թէ սուրն:

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գիւղական օմն պարզամիտ, որ ոչ դի-  
տէր բնաւ ընթեռնուլ, տեսանէր զծեր  
ոմն որ ընթեռնոյր աչքնոցուլ, եւ կարծէ-  
թէ զօրութեամբ ակնոցին է ընթեռնուլ  
մարդոյ, գնայ 'ի քաղաքն, եւ գտանէ զակ-  
նոցավաճառն, որ ցուցանէ զբազում ցե-  
ղս, եւ զզանազան տեսակս ըստ խւրա-  
քանչիւր տեսակի, առ 'ի ընտրել զորն եւ  
կամեսցի. մատուցանելով նմա եւ գերք մի  
տպեալ առ 'ի փորձել զայնս, ապա խեղչ  
շնականն յետ փորձելոյ մի ըստ միոջէ զա-

մենայն, ասէ թէ ոչ գտանեմ եւ ոչ մի՞ որ  
ծառայեացէ ինձ . ասէ ակնոցավաճառն .  
գուցէ չգիտիցես ընթեռնուլ . պատասխա-  
նէ ռամիկն . եթէ գիտէի ընթեռնուլ, ոչ  
դնէի զակնոց :

ՏԱՄՆԵԱԿ · Ը

Երէք բազումք եւ երէք սակաւք  
վատթարեն զմարդ . բազումս խօսիլ, եւ  
սակաւ գիտել, բազումս վատնել, եւ սա-  
կաւ ունիլ, բազումս վարկանիլ զանձնէ,  
եւ սակաւ արժել:

Ի՞արի բանք զկոկորդն ոչ ցտեն:

Ո՞չ ասի երբէք այնքան իր իմն, որ չիցէ  
իր ինչ: (յորժամ աղաղակի գայլ . կամ  
գայլէ, եւ կամ խայտ շուն):

Ո՞եծք խօսք, փոքրիկ գործք:

Այս մարդ ունի զախտ թագաւորա-  
կան, զի ուր ոչ է նա, ոչ գտանեն զայն:

Ի՞առ մի վատթար կոչէ զմիւն:

Հրեշտակային բառք, սատանայական  
մագիլք:

Խնդրելն ոչ է անարդ, բայց ընծայելն  
է մեծ յարդ:

Ո՞ր աղացէ՝ ոչ հրամայէ, որ հրամայէ՝  
ոչ աշխատիր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ապետ ոմն հիւր հրաւիրի 'ի պարօնէ  
միոջէ 'ի ձաշ, եւ նստին 'ի սեղան . սպասա-  
ւոր պարօնին՝ որ պաշտօնեայ էր սեղանոյն,  
քանիցս տեսանէր պատուական պատառ-  
եղեալ առաջի հիւրին՝ որ պարապէր 'ի  
խօսս, խկոյն բառնայր յառաջոյ նորա, եւ  
դնէր պնակ դատարկ առաջի նորա . իբրեւ  
թէ արթուն եւ պատրաստ է 'ի պատուել  
զնա մաքուր ամանով նախապատրաստ եղ-  
եալ յաջորդ տեսակի կերակրոց . զոր ի-  
մացեալ հրաւիրեալն, հարցանէ պարօնին,  
թէ շնորհք արա՞ , ասա՞ ինձ , յորմէ նա-  
հանգէ իցէ սպասաւորն քոյ, պատասխանէ  
բարեկամն . իտալացինէ, կրկնէ հիւրն . զար-  
մանամ . զի կարծեցի զդա լինել վերնցի,  
այսինքն արեւելցի:

ՏԱՄՆԵԱԿ . թ

Գնեղեցիկ խոստմունք կապեն զյիմարս:  
Որ ինչ խոստանայ շտապ տագնապաւ,  
սովոր է զղալ տակաւ առ տակաւ:  
Փոյթ կալցես յանձին՝ շահիլ եւ գան-  
ձել, զի դայ ժամանակ բազում 'ի ծախել:

Որբան աղաջանքն սաստկանայ , այնքան  
յամառումն խստանայ :

Ոչ ոք այնքան փոյթէ ՚ի խոստանալ ,  
քան զնա որ չունի ինչ տալ :

Ոչ գովութեան բարեկամին հաւատալի  
է , եւ հչ անարդանաց թշնամւոյն :

Որ ախորժէ զայլոց շնորհս ստանալ ,  
նախ ջան դիցէ զիւրն նոցա խոստանալ :  
• Բիչ խղճմտանք , եւ ջանք սաստիկ ,  
առնեն փարթամ յոյժ զմարդիկ :

Ուծամեծս խոստացողին՝ սակաւ հաւ-  
ատք ընծային :

Խանկագինէ այն ինչ , որ աղաջանօք դնի :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԾՕՌՎԱՄԱՐԹԻԿ զօրապետ ոմն վատա-  
սիրտ տեսանելով , թէ արագ արագ գայ  
հասանէ նաւ մի ասպատակիչ բարբարո-  
սաց ընդ հարկանիլ ընդ նաւն , յորում էր  
ինքն , խկոյն իջանէ ՚ի խորս նաւուն հա-  
մակ զարհութեալ առ ՚ի դաղիլ անդ , թող-  
եալ այլոց զպաշտօն պատերազմի եւ ըզ-  
պատիւ յաղթութեան : Եւ յետ ժամուց  
ինչ մինչ դադարեցան ձայնք հրացանից ,  
աղաղակէ թագուցեալն ՚ի տեղւոջէ անտի

առ իւրայինսն , եւ ասէ , մէք զնոսա ըմբռ-  
նեցաք , թէ նոքա զմեղ ըմբռնեցին :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Բ

Օ ինուոր ոմն քաջամարտիկ ունելով  
դատ ընդ ումեք մեծատան . կոչի ՚ի դա-  
տաստան . եւ թէպէտ իրաւունքն էր իւր ,  
բայց գիտելով թէ՝ ոսկւոյն բարբառ յաղ-  
թէ իրաւանց , դիմէ առ կայսրն . եւ աղա-  
չէ զնա ներկայ դտանիլ ՚ի դատաստանի  
անդ . ասէ ցնա կայսրն . երթ մի երկնչիր ,  
ես առաքեցից զայլ ոք անդր , պատասխա-  
նի ետ զինուորն եւ ասէ . տէր կայսր , ՚ի  
ժամանակս պատերազմաց քոց ՚է երբէք  
զայլ ոք առաքեցի ՚ի տեղի իմ ընդ դէմ  
թշնամեաց :

---

ՏԱՄՆԵԱԿ . Ճ

Որ գովէ զինքն , ունի զվատ դրացիս  
Որ աղաչէ զգիւղականն , աշխատեսցի  
ընդունայն :

Յաշխարհիէ , որ յաշխարհէ գովեալ է :  
Անցանեն սիրահարութիւնք , եւ մնան

ցաւքն:

Դովութիւնն արշաւէ անդր , ուր ա-  
խորժակն յարեալ կայ:

Յառաջքան զՃանաչելու մի գովեր եւ  
մի պարասւեր:

Եթէ ՚ի բաց գնան կատուք , առ ժա-  
մայն տիրեն մկունք:

Լաւէ լուռ լինել քան զչար խօսիլ:  
Ծոռւլութիւնն է բանալի աղքատու-  
թեան:

Այնքան խիստ է յիմարին լռելն , որքան  
խմաստնոյն խօսելն:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Առաջարկեցաւ ՚ի խորհրդեան տերու-  
թեան իրիք մեծ սովն , որոյ վասն տառա-  
պէր երկիրն , եւ խորհուրդ ՚ի մէջ առեալ ,  
թէ զի՞նչ իցէ պատշաճական միջոյն ա-  
ռատութեան եւ հետեւաբար արժանագ-  
նութեան . ոմն ՚ի խորհրդականաց ասէ .  
Քոյթ ՚ի մէջ առցի զի ըստ առաքելական  
հրամանին , “որ ոչն կամիցի գործել , եւ  
կերիցէ մի , բ , թաղ . Գ , 10:

# ՀԵՐԻԿԹԵՍԿ

## ՀԻՆԴԵԲՈՐԴ

ՏԱՄՆԵԱԿ. Ա

Ու ոչ գիտէ լուռ լինիլ . զիսաղաղու-  
թիւն ոչ կարէ ունիլ :

Եթէ կամիս ծերանալ , (յերկար առողջ  
ապրիլ) արա զքեզ ծեր ըստ ժամանա-  
կին . (լեռ իմաստուն եւ բարեկարդ) :

Ի մեղրածորան բերանոյ զգուշացն ըզ-  
բերան քո :

Հաւատա՛ պանծացողին՝ որպէս ստա-  
խօսիւ

Ես սեղով ասելն է կէս սուտ:

Ոչ է ամօթ անկանին ՚ի տիղմ , բայց  
ամօթ մեծ է ոչ կամիլ ելանել :

Քայտնի սուտն չէ արժանի պատաս-  
խանւոյ :

Ընթացք ժամանակիս գնայ , որպէս եւ  
երթայ . բայց ոչ արդարեւ որպէս արժան է :

Եա կարէ խօսիլ վայելչապէս սուտ ,  
որ գայ ՚ի հեռաստանէ :

Ուկապէտ եւ զարդարեալ իցէ սուտն ,  
բայց միշտ եւ մնայ ամօթով :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Օ լինուոր ոմն կամեցեալ ցուցանել  
զինքն քաջ եւ կիրթ ՚ի գործս պատերազ-  
մի , եւ ՚ի զինուորական արշաւանս , ետ  
խորհուրդ միում զօրապետի յարձակիլ ՚ի  
վերայ պարսպի , հաւաստելով թէ յաջո-  
ղեսցի յաղթութիւնն՝ սակաւիկ զօրաց  
գալստեամբ . պատասխանէ զօրապետն .  
բարւոք է , բայց որոշե՞ս զքեզ լինել մինն  
՚ի սակաւուց անտի . պատասխանէ լաւ խոր-  
հրդականն պատերազմի . զայս ՚չ ասացի եւս

---

ՏԱՄՆԵԱԿ. Բ

Օ միս զամենայն ուտէ գայլն , եւ  
զիւրն չուտէ :

Որ միշտ ստէ , զամօթ ՚չ զգայ :  
Ուղանն գողանայ առաւել քան զդող  
մի ընտանի :

Այսքան է ոչ խմանալն , որպէս ոչ լսելն :  
Ամենայն ոք ունի զխաբէութիւն յիւ-  
րում պարտիզի:

Ճշմարտութիւնն է կարօտի ատենաբանի:  
Պիտոյ է բարւոք ՚ի մտի ունիլ , յորժամ  
ստասացն ստաբանէ :

Հայեաց եւ մտածեա բարւոք թէ ով-  
ես դու , զի՞նչ գործես , առ ի՞նչ գաս , եւ  
յո՞ երթաս:

Որ ինչ դառն է ՚ի կրելն , քաղցր է ՚ի  
յիշատակելն :

Ի արեգոյն է զջշմարիտն ասել ռամկա-  
բար , քան ստել ազնուաբար:

---

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ագահ ոմն հարկաւորեցաւ տալ ընթ-  
րիս բարեկամի իւրում . եւ եղ առաջի ՚ի  
սկզբան անդ հաց . կարադն , պանիր , եւ  
բողի: Օ արմացեալ հրաւիրեալն ընդ այս  
անկարգ յետեւառաջնութիւն , ասէ . յերկ-  
րի մերում այսոքիկ ՚ի վերջն կերակրոց բե-  
րին ՚ի սեղան . պատասխանէ ժլատն , նաեւ  
ասա:

ՏԱՄԿԵՑԿԻ. Գ.

Եթէ կամիս գիտել զարժողութիւն  
ոսկւոյ միոյ, Երթ առնուլ զայն ՚ի փոխ  
Առաւօտեան արեգակն ոչ տեւէ զօրն  
ողջոյն:

Եխորժակն դեղեցկացուցանէ զպտուղնէ  
Ոչ է ճշմարիտ բարեկամ քո, որ ցուց  
անէ զինքն կարի իմն բարեկամ քոյոցդէ  
Որ յամենայն ուրեք խօսիլ կամի ըզ-  
ճշմարտութիւն, ոչ գտանէ զբնակութիւն:  
Որ անբասիր առնէ զանձն առանց լի-  
նելոյ ամբաստանեալ, յայտնի ցուցանէ ըզ-  
յանցանս իւր:

Եչք տեառն գիրացուցանէ զերիսլարն,  
եւ ոտք նորա զագարակն:

Իազումք խղճեն թքանել յեկեղեցին,  
այլ ոչ խղճեն աղտեղել զսեղանն:

Եթէ աչքն ոչ տեսանէ, սիրտն ոչ հա-  
ռաչէ:

ՈԵղբն հին, եւ ապաշխարութիւն նոր:  
(Հին մեղք, նոր վայ):

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա եհերոտ ոմն հարցանի, թէ վասն է՞ր  
ոչ կըէ՞ ՚ի վերայ իւր ոչ զառւսեր եւ ոչ  
զայլ գէնս, զի դուցէ պիտոյանայցէ ՚ի դի-  
շերի, կամ ՚ի վտանգաւոր ինչ դիպուածս  
՚ի պաշտպանութիւն անձին, պատասխանէ .  
արիական քաջութիւն մարդկան ոչ միայն  
ձեռօք է, այլ եւ ոտիւք:

---

ՏԱՄԱԿԱԿ. Դ

Ո ր յիմար է ՚ի յանցանելն, լիցի իմաս-  
տուն ՚ի պատժիլն:

Ո՛չ դոյ այնքան վատթար կուրութիւն,  
որքան ոչ կամիլն տեսանել, եւ ոչ այնքան  
խլութիւն, որքան ոչ կամիլն լսել:

Ե դռաւն եւ Եթովպացին թէպէտ եւ  
յաճախ լուացին՝ մնան միշտ սեաւ:

Ո՛չ կոյրն քեզ առաջնորդ, եւ ոչ յի-  
մարն խորհրդատու:

Ե ռողջ կոմի՝ որ ոչ ճարակէ ընդ եւ  
զանց, կամ ճարակեալէ յառաջ, եւ կամ  
ճարակելոյ է յետոյ:

Երանեալ է մարմին, որ վասն հոգւոյ  
գործէ:

Ո՞չ է գիտուն, որ ճանաչէ եւ ոչ փախչի  
՚ի պակասութենէ:

Ուր անձն ոչ է ճանաչեալ, յորժամ  
խօսի ոչ հաւատան նմա:

Ուր կամքն է պատրաստ, սրունք են  
թեթեւ:

Որ ոչ ունիցի ՚ի գլուխն ուշ, գեթ ու-  
նիցի յոյժ ՚ի սրունս ոյժ:

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Փիլիսոփայ ոմն հարցեալ, թէ որ տե-  
սակ անասնոց առաւել կարէ վնասել  
մարդկան, պատասխանէ . յընտանեաց շո-  
ղբորթն. եւ ՚ի վայրենեաց անիծանօղն:

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Աերասան ոմն այն ինչ ծառայէր  
սեղանոյն դքսի իւրոյ, տեսեալ թէ ասպետ  
ոմն ծեր՝ թէպէտ եւ գրեթէ զբոլոր ա-  
տամունս իւր կորուսեալ էր, բարւոք յա-  
ծեր զծամելիս քան զամենայն երիտասարդ  
ասպետս, որք էին անդ. ասէ ցնա ՚ի բառ-  
նիլ սեղանոյն, պարօն, արդարեւ դնւ ար-

շաւեցեր լաւ եւս քան զամենեսին , թէ-  
պէտ եւ պայտազերծ :

ՏԱՄՆԵԱԿ . Է

Ուր թագաւորէ սէրն , ոչ ճանաչի  
սխալումն :

Լիեղծաւոր սէրն ոչ տայ հաճռւթիւն  
ամբողջ :

Ոուրն երկնից ոչ հատանէ վաղադոյն  
այլ խորագոյն :

Ոչ ուրեք է որ կամիցի յամենայն ու-  
րեք լինել , նոր սիրահարութիւնք մոռա-  
ցուցանեն զհինս :

Եթէ գեղագնտակն (հապն) ախորժելի  
լինէր , ոչ արտաքուստ ոսկեզօծիւր :

Բազմիցս մի օրն տայ զայն , զոր բոլոր  
տարին զլանայ :

Առ ՚ի գործել զմեծագոյն չար , բաւա-  
կան է փոքրիկ ժամանակ :

Որ ոչ անսայ բարի իւր մօրն , անսայցէ  
վատթար մօրւոյն :

Բասակն սիրահարաց սարդի թելիւ-  
կապեալ կայ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս ոմն ՚ի Մեսինա ուներ աստ եւ  
անդ զհինդ կանայս, եւ եղեւ զնմանէ ամ-  
բաստանութիւն, զոր ածեալ կացուցին ա-  
ռաջի դատաւորաց . ուր համարձակ խոս-  
տովանեցաւ զշմարիտն առանց ինչ ստի-  
պանաց: Եւհարց դատաւորն թէ վասն էր  
առեալ էր զայնքան կանայս . պատասխան-  
եաց թէ վասն գտանելոյ եթէ հնար իցէ  
զմի միայն լաւագոյնն եւ մնալ ընդ նմա  
միայն . պատասխանի ետ դատաւորն ժպտե-  
լով եւ ասէ, որովհետեւ ոչ կարացեր զլա-  
ւագոյնն գտանել յաշխարհի աստ, բարւոք  
լինի, զի դու անձամբ գնացեալ որոնեսցես  
՚ի միւսում աշխարհի անդ, եւ ետ սպա-  
նանել:

ՏԱՄՆԵԱԿ. Զ

Ար կատարելապէս սիրէ, կատարելա-  
պէս ծառայէ:

Ոչ ունի հաստատութիւն սէրն՝ որ  
հիմեալ է ՚ի վերայ շահաստանութեան:

Ե ձախորդութեան փորձեսցի բարեկա-  
մութիւն:

Յորժամ ուրախութիւն եւ ծաղընէ ՚ի  
մէջ տան , տրտմութիւն եւ լացն առաջի  
դրանն կայ:

Ոչ ելաց ոք , որ ոչ ծիծաղեցաւ այլ ոք:  
(տրտմութիւն միոյն՝ է ուրախութիւն միւ-  
սոյն):

Ուսիր լալով , եւ խնդասցես շահելով:  
Օ օրութիւնն նուազի , ուր քաջասրբ-  
տութիւնն պակասի:

Որ զհացն ՚ի փռան ոչ բարւոք զետե-  
ղէ , խորտաքորտ եփեալս ապա անտի հան-  
ցէ . (գործն բարւոք սկսեալ չարւոք կա-  
տարի):

Օ օձն ՚ի բունոյն , եւ զշադանակն խո-  
րովեալ ՚ի կրակէն ձեռամբ այլոց պիտոյ է  
հանել:

Բազմիցս բարիք մարմնոյ են չարիք  
հոգւոյ:

Ժամանակաւոր բարիք վնասակար են  
հոգւոյ ըստ մեծի մասին:

---

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազնուական ոմն աղաչէր զիւարթամ  
ոք վաճառել զերիվար մի ինքեան , զոր  
ցանկայր գնել . որում պատասխանեաց

փարթամն , թէ ես ոչ կամիմ վաճառել  
զայն , իսկ եթէ կամիցի տէրութիւն ձեր ,  
ընկալցի առանց վճարելոյ եւ ոչ դանկ մի ,  
ասէ աղնուականն , այսմ եթէ ես ասէի  
այն , զի՞նչ առնեիր դու . պատասխանէ  
փարթամն , ես ասէի ոչ :

---

ՏԱՄՆԵԱԿ Է

Առաւել եւ չափաղանց լալն ոչ օգտէ  
մեռելոց , եւ վնաս է կենդանեաց :

Ա ասն երկիւղի մի կորուսաներ զպատիւ :  
Որ զբազումն սասանեցուցանէ , եւ ինքն  
՚ի բազմաց պարտի երկնչիլ :

Որ զմեղը շօշափէ , միշտ մածնի , եւ որ  
զձէթ չափէ , ձեռքն օծանի :

Երկչոտ չարադրծին աչք միշտ ՚ի դա-  
ւազանն հային :

Որ ունի զլեզու , մինչ ՚ի չուօմ դնայ ,  
(հարցանելով) :

Յոյժ աւելի առնուլն ածէ զմարդն ՚ի  
կախաղան :

Արծաթն (անարդար ստացուածքն) ա-  
ծէ զմարդն ՚ի դժոխս , եւ ինքն մնայ ար-  
տաքս :

Կարծր սալն ոչ երկնչի ՚ի մուրճէ :

Որ չունի զանկապան՝ ՚ի յամիսն յուն-  
վար, մի բնաւ հաւատար նմա զքո դենալու

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Պ**առաւ ոմն հայեցաւ ՚ի հայելին, եւ  
ետես զհերս իւր սպիտակացեալ, եւ զե-  
րեսս իւր անկեալ եւ կնձռեալ, զաշս իւր  
խորացեալ, ասէ . այժմ ժամանակի հայելիք  
ոչ ցուցանեն գեղեցիկ, որպէս ցուցանելին  
երբեմն, զի յիշեմ ես, որ յառաջն երեւե-  
ցուցանելին զդէմս իմ հաճոյ աչաց ՚ի տե-  
սանել:

---

ՏԱՄՆԵԱԿ. Ը

**Ի** վերայ մեղաց մեծատանց ապաշ-  
խարեն աղքատք:

**Հ**արապէս խորհի եւ բացորոշէ, որ  
յոյժ երկնչի:

**Ո**վնչ անկանի ծառն, ամենայն ոք հա-  
սանէ հատանել զփայտ: (որ ձախորդու-  
թեան պատահեալէ), զնա ամենայն ոք  
ջանայ ընդունել):

**Ուր** ցանդն է ցած, ամենայն ոք ան-

ցանել ընդ այն:

Որ ՚ի ներկայութեան երկնչի , ՚ի բացակայութեան վնասէ քեզ:

Որ պատճառէ զառիւծ ՚ի բացակայութեան , երկնչի ՚ի խլոդոյ ՚ի ներկայութեան:

Կարեգոյն է կեալ առաքինաբար , քանձնանիլ ազնուաբար:

Որ է անզգամ եւ համարեալ է բարի , կարէ առնել զչար , եւ ոչ հաւատացեալ լինի: Եւ որ ունիցի համբաւ կանուխ ՚ի քնոյ յառնելոյ , կարէ ննջել մինչեւ ցկէս օրէ կենդանի՝ որ զյարդեղէն տուտ ունի , երկնչի արդարեւ ՚ի հրոյ:

Որ կամիցի զամենեսին պաշտպանել , ոչ պարտի բնաւ զսուրն ՚ի պատեանն դնել:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Իմիշկ ոմն կոչեաց զգրաստաբոյծ ոք ՚ի բժշկել զջորի իւր , որ ունէր վէր ՚ի յուսն . եւ յետ երկրորդ կամ երրորդ դաշտեանն ՚ի տեսութիւն՝ մատուցանէ նմաքմիշկն ՚ի վարձ աշխատանացն դրամս ինչ , եւ ոչ ընկալեալ յետս դարձուցանէ ասելով . սովորութիւն է մեզ ոչ առնուլ դրամս յայնցանէ , որք են ՚ի մեր արուեստէ:

ՏԱՄՆԵԱԿ Թ

Ա ասն երկնային ջրոյ (անձրեւոյ) մի  
թողցի ոռոգելն։ (Ընդ օդնականութեանն  
Աստուծոյ՝ պարտ է մարդոյ նաեւ արուա  
եստին իւրում ջանասէր լինել)։

Այս որ ՚ի կիր արկանի, ՚չ արդարա-  
ցուցանի։

՚Կողոց աղքատքն զպարանոցէ կախին,  
եւ փարթամքն զքսակէ։

՚Ա երկնչի որ սպառնայ։

՚Իին եթէ կորուսանէ զպատիւն եւ զա-  
մօթն, ՚չ դոցէ բնաւ։

՚Որ անհոգանայ զորկորն, ՚չ բնաւ պատ-  
ժեացէ զնստարանն։

՚Ա, չար լինիլ սկսանի, որ համարի  
զլնքն բարիւ (սուրբ)։

՚Կրկնապատիկ է չարիքն, որ ՚ի ներքոյ  
գթութեան թաքուցանին։

՚Ա ասն է՞ր Գէորգն ՚չ խաղայ (զնարտ).  
վասն զի չունի զդրամն (բազմիցս արդելանի  
չարութիւնն ՚ի պակասութենէ առթին)։

՚Որ ունի զգործն, ունի եւ զկասկածն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Օ առամեալ ոմն ծեր ասէր, թէ երեք  
իրք աճեցան ընդ ծերութեան իմում, տե-  
սանել առաւել, կարել առաւել, եւ հրա-  
մայել առաւել։ Տեսանեմ առաւել, վասն  
զի յոր ինչ եւ հայիմ, երեւի ինձ կրկինն  
կարեմ առաւել, քանզի մինչ ՚ի ձիոյն ի-  
ջանեմ, ածեմ ընդ իս եւ զթամբն։ Եւ  
հրամայեմ առաւել։ զի զմիմիայն բան ա-  
ւելի քան զտասն անգամ հրամայեմ, եւ  
ոչ կատարեն զայն։

ՏԱՄՆԵԱԿ. Ճ

Ար զառաքինութիւն սերմանէ, զհամ-  
բաւ եւ զպատիւ ժողովէ։ Ար զշինուածս  
շինէ, զիւր քսակն մաքրէ։

Առաւել զօրէ նպաստաւորութիւնն ,  
քան զիրաւունս եւ զարդարութիւն։  
Ժամանակն եւ փորձն ծնանին զլսուե-  
մութիւնն

Յորժամ հայցեմք՝ տէր անուանեմք ,  
եւ մինչ ունիմք՝ որպէս կամիմք , (անուա-  
նեմք)։

Ար աշխատի վասն հասարակի , նա ոչ  
ումեք աշխատի

Աւր ոչ գոյ հաւասարութիւն , ոչ բնաւ

լիցի սէր կատարեալ

Որ ցանցառ գայ, բարեպէս գայ:

Օ օրութիւն առանց Ճշմարտութեան  
ոչինչ օգնէ:

Քետ պատահելոյ վնասուն՝ ամենայն ոք  
է իմաստուն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս ոմն ամուսնացեալ ընդ կնոջ մի-  
ում, որ թէպէտ էր փարթամ բայց ա-  
պաշնորհ, եւ միանգամայն կարի կամակոր  
եւ յոյժ անզգամ, հարցանէ թէ վասն է՞ր  
էառ զնա ՚ի կին. անմեղադիր արար զանձն  
տարաբաղդութեամբ վիճակին իւրոյ ա-  
մելով. հայրն տայ զօժիտն, իսկ Աստուած-  
գամուսին բարի. եւ յաւել ասել, սակայն  
ես գտանեմ զիս յայն աշտիճան ժաման-  
եալ, մինչ զի եթէ կինն իմ հրամայեսցէ-  
ինձ արկանել զիս ՚ի տանեաց ՚ի վայր,  
պարտիմ աղաչել զԱստուած, գէթ ՚ի ցա-  
ծագոյն տեղւոյնէ լինել այնմ. Ասէ ցնա  
ոմն ՚ի բարեկամաց իւրոց. արդարեւ այդ-  
պէս լինի, մինչ ածի կին մատամբէք եւ ոչ  
աչօք. այսինքն՝ մինչ համարին դրամբն՝  
զորս բերէ, եւ ոչ տեսանին պակասու-  
թիւնքն՝ զորս ունի:

# ՀԱՅՈՒԹԻՒՆ

ԱՅԵՑԵՐՈՐԴ

ՏԱՄՆԵԱԿ. Ա.

Որ շատ գիտէ , սակաւ խօսեսցին  
իմաստունէ , որ սակաւ խօսի եւ շատ  
լուէ :

Որ զինչս ժողովէ , եւ զայլ բարիս ոչ  
առնէ , զբարին արգելու , եւ դնայ ՚ի ժոխուա  
քաղում անդամ ՚ի ներքոյ գծուծ հան-  
դերձի ծածկի ազնուական հոգին :

Տգետ է իմաստունն , որ այնպիսի ցու-  
ցանէ զինքն տգիտաց :

Հրամանի դառնութեան դժուարաւ  
լինի հնազանդիլ քաղցրութեամբ :

Որ ոչ գիտէ հրամայել , հարկ է նմա  
գիտել հնազանդիլ :

Ըստ ողորմածի Աստուած է գանձա-  
պետն :

Խոհեմ լինել ոչ կարէ , որ համբերել

նէ զիտէր . Պարտ է չարին համբերել , բայց  
ոչ բնաւ զայն առնել :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս ոմն տեսեալ յերազի , թէ եր-  
կոքին որդիքն իւր չար կացութեան էին վի-  
ճակեալ , վասն զի մինն պարտ էր լինիլ  
գող քաակահատ , եւ միւսն գլխաւոր մար-  
դասպան , եւ զարթուցեալ դիմեաց բոլո-  
րովին զարհուրեալ՝ առ աստեղաբաշխ ոք  
բարեկամ իւր առ ՚ի ունիլ զմեկնութիւն  
սոսկալի երազին իւրոյ . որ միմիթարեաց  
զինքն՝ ասելով . հարկ է զի երազ քո այդ  
կատարեսցի եւ գործով . բայց առ ՚ի վճա-  
րել զայն առանց քեզ եւ նոցա վնասու եւ  
վատահամբաւութեան , տամ քեզ խոր-  
հուրդ առնել զմինն քսակագործ , եւ ըզ-  
միւսն մսահատ . եւ այսպէս ՚ի դէպ գայ  
միոյն հատանել զքսակ եւ միւսոյն սպա-  
նանել . ոչ միայն առանց պատժոյ , այլ մա-  
նաւանդ պատուով եւ օգտիւ իւրեանց :

ՏԱՄՆԵԱԿ. Բ

Յառաւայի համբերութիւն, եւ տեառն  
խոհեմութիւնն

Պիտոյ է կալնուլ զաղուիսունս ՚ի ձեռն  
աղուիսուց:

Իւրաքանչիւր կրէ զձետ իւր աղուիսու:  
(այսինքն զիսորամանկութեան եւ զշողոքոր-  
թութեան ոդի):

Այժմ աշխարհ ամենայն է աշակերտ  
աղուիսու:

Որ է արծուի նկատմամբ մոլութեան  
այլոց, է խուրդ միւրսն:

Որ ունի զմի ոտն ՚ի բոզանոցն . ունի  
զմիւսն ՚ի հիւանդանոցն:

Նախանձն փորէ այլոց զիսորիսորատ ,  
եւ ինքն անկանի ՚ի նոյն:

Նախանձն ծնանի յարքունիս , եւ մե-  
ռանի ՚ի հիւանդանոցն:

Առվորութիւնն հնացեալ լինի օրէնք:

Չարապէս վարին երկուք՝ միով մու-  
ճակաւ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պատանի ոմն պարզամիտ յոյժ, առաքեցաւ ՚ի տեսառնէ իւրմէ գնել զգինի երկու ապակեղէն շիշովք, զորս լցեալ ՚ի դառնալն ՚ի տուն, դիպուածով զմին յանչ կիւն ինչ որմոյ հարեալ խորտակէ: Եւ ՚ի հասանելն ՚ի տուն մի միայն շիշով, հարցանէ տէրն զմիւսոյն, պատասխանէ թէ դիպուածով իմն խորտակեցաւ եւ գինին հեղաւ: Կրկնէ տէրն զայրացմամբ, այլ որպէս արարեր ով դու . եւ խորտակեցեր զամանն, եւ կորուսեր զգինին. պատասխանէ սպասաւորն, ահա այսպէս, տէր իմ. եհար ընդ որմն եւ զմիւս շիշն, զոր ուներ ՚ի ձեռին, եւ խորտակեաց:

---

ՏԱՄՆԵԱԿ. Գ

Որպիսի է դլուխն, նոյնպիսի է եւ դլուխարկն:

Որ միշտ բառնայ՝ եւ ոչ դնէ, փոյթ զյատակն տեսանէ:

՞ ՞ ուրն հեռաւոր ոչ շիջուցանէ զհուր մերձաւոր:

Ո՞ւծագին հանդերձք են պատճառ

Քաղցու:

Ոչ վերարկու ձմերան կազմի վասն միոյ  
ջրոյ կաթլի , եւ ոչ վաճք մի ամբողջ շննի  
վասն միոյ կրօնաւորի:

Քուքու թռչունն ինքն զինքն անուա-  
նէ . (ամբարտաւան յիմարն ինքն զինքն  
գովաբանէ):

Եւելի պատուաւոր է նա , որ արդիւ-  
նաւորի զարտիւ՝ եւ ոչ ունի , քան զնա ,  
որ ունի եւ ոչ արդիւնաւորի:

Եշան է պատուաւոր լինելոյ՝ որ ար-  
համարհէ զարհամարհիլն իւր:

Եթէ փարթամք գիտէին եւ զգային  
զկացութիւն աղքատաց , լաւ եւս օգնէին  
նոցա:

Որպէս մանեմք , սյնպէս շրջիմք: (որպէս  
գործեմք այնպէս կեամք):

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կոմ ոմն ճանապարհորդեալ ժամանէ-  
յեզր գետոյ միոջ , որ թռւելով նմա խո-  
րագոյն , մինչեւ ձիաւորի անգամ չկարել  
անցանել , հրամայեաց փողարի միում յա-  
ռաջ անցանել . ասէ փողարն , բարձրու-  
թեան ձերում պատկանի այդ պատիւ . այլ

Ես որ եմ հասարակ ծառայ ոք, ոչ արդիւնաւորիմ զայդ:

ՏԱՄՆԵԱԿ. Դ

Ո՞նչ գրադիրն հարցանէ զամայն քանին, վաճառականն ննջէ, եւ գնօղն ըզբունու, երեքին եւս են ՚իվատ կացութեան: Որ ունի զգլուխ, ոչ պակասի նմա գըլխարկ:

Ի՞արեք յաջողութեան իբր զլուսին անցանեն:

Որ տայ վարձու՝ որով նստի, մի բաղմեսցի յորժամ կամի:

Ի՞աղցը եւ ազնիւ է այն բարին, որ յաջորդեալ անցեալ չարին:

՚Նա միայն կորուսանէ զխելս, որ զայն յառաջն ուներ:

Լաւ է կորուսանել զըուրդն, քան թէ զոշխարն, զխնձորն՝ քան թէ զծառն, ըզձուն՝ քան թէ զհաւն:

Որ ոք ուներ՝ զոր ոչ ունի, առներ՝ զոր ոչ առնե:

Որ կարէ արհամարհել զամենայն, ժառանգէ զամենայն:

Օ՞չ ինչ կորուսանէ նա, որ ոչ կորուսանէ զԱստուած:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Ա**մն կղմինտը շարօղ՝ յետ ծածկելց  
դասնիս տան միոյ, որում օգներ եւ որդին  
իւր, այն ինչ կամէր իջանել անտի, ցուցա-  
նէ նմա որդին յանկիւնս ինչ զպակառու-  
թիւնս, զի ոչ էին բարւոք ծածկեալ, պա-  
տասխանէ հայրն . որդեակ եթէ այսօր շի-  
նեսցուք որպէս պիտոյ է առանց պակա-  
սութեան, ուստի կերիցուք եւ կեցցուք ՚ի  
վաղիւն:

## ՏԱՄՆԵԱԿ. Է

**Ո**չ ինս է աղքատութիւնն , բայց  
միայն այնոցիկ , որք ոչ գիտեն համբերու-  
թեամբ տանիլ:

Դողն մտածէ , թէ ամենայն ոք է իր-  
բեւ զինքն (գող): Դայն ուր գտանէ ըզ-  
դառն մի , անդ որոնէ զայլս եւս ՚ի նորոյ:  
Աղքատութիւնն եւ ողջախոհութիւնն  
են մայր առողջութեան:

**Ո**րպէս է աւագերեցն , այնպիսի է լու-  
սարարն:

**Ո**բքան մեծ է յաջողութիւնն , այնքան  
փոքր ապահովութիւնն:

Ո՞ւատնութիւնն է սլրելի , իսկ մատնիչն՝  
ատելի:

Քրիստոնէական աղքատութիւնն ոչ է  
չունիլ ինչ , եւ ցանկալ բազում ընչից , այլ  
կարօղ լինիլ եւ ոչ ունիլ առանց կրից  
ունելց :

Քաղցու տանջեցի նա ՚ի ցուրտ եղա-  
նակի , որ ոչ կամի գործել ՚ի ջերմ ժա-  
մանակի:

Օ խօսս եւ զիետուրա բառնայ հողմն:



### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Օ ինուոր ոմն վեհերոտ այն ինչ կա-  
մէր վաճառել զձի իւր , եհարց հարիւրա-  
պետն , թէ վասն ի՞ր վաճառես զայն . առէ  
զինուորն , թէ սովոր է ձի փախչիլ մինչ  
զգենս տեսանէ , պատասխանէ հարիւրա-  
պետն . զարմանամ , զի կարծէի թէ առ այս  
վաղճան դնեալ ես զայն :

ՏԱՄՆԵԱԿ Է

Աղքատն ոչ կարէ , եւ վարժամն ոչ  
կամի :

Աղքատութիւնն է մայր խոնարհու-  
թեան :

Աղքատութիւնն է մեծ վարժապետ ,  
որ ուսուցանէ զամենայն արուեստա :

Ուրացողին պարկ՝ չունի գյատակ :  
Խշն՝ որոյ ոչ եղեւագի ՚ի յերեսուն  
ամն , ոչ ունիցի բնաւ զայն :

Պիսոյ է երբեմն քանի մի քայլս յետս  
գնալ , առ ՚ի ուժգին յարձակիլ :

Դրամով եւ Լատին լեզուաւ ընդ ա-  
մենայն Եւրոպիա անդորր է ճանապար-  
հորդութիւնն :

Լատաղի կովուց կարծ եղջիւրս տայ  
Աստուած :

Աչ հանապազ ճանաշին էշք յերկայ-  
նութեննէ ականջացն :

Շունն քաղցեալ ոչ երկնչի ՚ի յերկար  
դաւաղանն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Փիլիպպոս առաջներորդ թագաւոր  
Սպանիոյ ուներ զբազէ մի՝ որ սլացեալ ըզ-  
հետ արծուոյ միոյ, եւ ժամանեալ սպան  
զնա, եւ վասն այսորիկ ետ հատանել ըզ-  
դլուխ բազէին՝ ասելով. ոչ ումեք արժան  
է մնալ անպատիժ, որ յառնէ ՚ի վերայ  
վեհագունին քան զինքն.

---

ՏԱՄՆԵԱԿ. Ը

Այնքան ուտէ կին մի բիրտ, որքան  
ձի մի զօրաւոր:

Հունն շարժէ զձետ իւր՝ ոչ վասն քո  
(սիրոյ) այլ վասն հացի:

Ո՞՞ առներ չար այնմ՝ որ չարագոյն  
կարօղէ քեզ առնել:

Հունն եւ կատուն ուտեն զոչ բարե-  
պէս պահպանեալն:

Ա, որ ձիոյն՝ հին ձիավար:

Ե աւ է լինիլ գլուխ կատուի, քան տուտ  
առիւծոյ:

Ո՞՞ ոչ կամի նմանիլ գայլոյ, մի կրեսցէ  
զնորին մորթի:

Ի՞նձայք մտանեն ամենայն ուրեք ա-

ոանց բաղկելոյ զդուռնէ

Որ բազում իրս սկսանի, զսակաւս կա-  
տարելագործէ:

Ժողովին ժամանակք եւ մեք ընդ նոսաւ

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Ա

Այս ոմն առատասիրտ եւ միջակ աս-  
տիճանի փարթամ գնեաց զոյդ մի կաքա-  
ւուց . վճարեաց զերկուս մառչիլս , ապա  
յանդիմանեցաւ ՚ի միոյ փարթամագունէ  
քան զինքն , թէ ընդէ՞ր այնքան շոայլօրէն  
վճարեաց . պատասխանէ թէ՝ եթէ վաճա-  
ռիւր հինգ նաքարակիտով , գնեի՞ր դու  
զայնս , ասէ այն , եւ սա առէ . բարւոք է ,  
այնքան համարիմ ես զինդ դահեկաննն ,  
որքան համարիս դու զինդ նագարակիտուն:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. Բ

այ ոմն վրացի Ճանապարհորդեալ  
՚ի Պարսկաստանէ գնայր ՚ի Պասրա ընդ  
միում պարսկահայի՝ որ էր փարթամ յոյժ ,  
բայց կերակուր իւր էր իբրեւ յետին ըր-  
քաւորի . սա տեսեալ զվարացին , որ համա-

դամ՝ կերակրօք ուրախ լինէր հանապաղ  
առատապէս , կոչէ զնա ՚ի յանդիմաննել  
զշուայլութիւն նորին , եւ հարցանէ ցնա .  
Թէ ո՞րքան ընչից հասանէ ձեռն իւր . պա-  
տասխանէ վրացին , թէ իր երկու հազար  
դահեկանի , ասէ փարթամին , ես ունիմ  
յամի ամի եկամուտս աւելի քան զկեանս  
քո , եւ ահա տեսանես զբարւոք տնտե-  
սութիւն իմ . իսկ դու այդքանեօք միայն  
ո՞րպէս համարձակիս վատնել այսչափ ՚ի  
կերակուրք Պատասխանէ վրացին , պարո՞ն ,  
մինչ ունիմ՝ այսպէս փարթամօրէն կեամ .  
եւ յորժամ պակասեսցին ինչք , յայնժամ  
կեցից իբրեւ զքեզ .

ՏԱՄՆԵԱԿ . թ

**Ա**յնմ՝ որ զոր ինչ ունիս , առնուլ  
կարող է , տո՞ւր մինչ քաղցրութեամբ  
խնդրէ ՚ի քէն ինչ ինչ .  
Որ ինձ տայ , ինձ ուսուցանէ տալ .  
Քաջ առնօղ առնելեացն՝ է չարաչար  
վճարող պարտեացն .  
՚Ա, ա ինքն վճարեաց դահձին , զի ձաղ-  
կեսցէ (զինքն) .  
Օ խորհուրդն քեզ բարի կամեցողին .

գրեա՞ ՚ի հաճութիւնն նորին , թէպէտ եւ  
թուեսցի քեզ հետեւեալն այնմ չար:

Որ յօժարութեամբ վճարէ , միշտ փար-  
թամ է:

Ոչ վասն յեկեղեցի գնալոյ , եւ ոչ վասն  
դարի տալոյ կորուսանի օր:

Ամենայն խաչ գեղեցիկ՝ կամի տեւել  
սակաւիկ:

Որ միշտ ընդունի եւ ոչ պարդեւէ , սէր  
բարեկամին եղծեալ լքանի ՚ի պարդեւէ:

Խորհուրդն ՚ի գինի , չունի վերջ բարի:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այսպէս ոմն ծեր , բայց լրջամիտ եւ  
արի , կենցաղավարէր ընդ միում մեծի  
տիկնոջ , զայ անդ եւ երիտասարդ ոմն .  
արդել նմա եւ ասէ , պարո՞ն . ոչ ամեներին  
՚ի գործ սիրոյ են յարմար , եւ ըստ կարծ-  
եաց իմոց պատշաճագոյն է տէրութեան  
ձերում գտանիլ ընդ միում վարդարանի  
քան ընդ միում տիկնոջ : Պատասխանէ աս-  
պետն , պարօ՞ն զայդ ասես , վասն զի դու  
երիտասարդ ես , եւ ես ծեր . բայց ծանիր ,  
զի ՚ի մերում գաւառի զայր ոմն յիմնա-  
մեայ երիտասարդագոյն համարէին քան  
զէշ մի հնդետասանամեայ:

Ո՞չ է արուեստ խաղալ զիսազ, բայց է  
արուեստ կարօղ ընել թողուլ զայն։  
Լաշառք զվեմս խորտակեն։

Վզնուաբարոյ ընդ ամենեսին, բայց ըն-  
տանի ընդ սակաւուց։

Ո՞չ գտանի պոյտն այնքան թիւր, որում  
ո՞չ յարմարեսցի խուփ ինչ։

Պարգեւ յերկար ժամանակ սպասեալ,  
ո՞չ է պարգեւեալ այլ թանկագին վաճառ-  
եալ։

Խորհուրդ շուտափոյթ՝ է գործ անպր-  
տուդ։

Վզջիկ որ յաճախէ ՚ի ճանապարհ, կո-  
րուսանէ զՃանապարհն։

Ո՞չ է աղքատ նա՝ որ ունի սակաւ,  
այլմանաւանդ նա՝ որ բազմաց ցանկայ։

Խորհուրդ առանց գործադրութեան է  
մարմին առանց հոգւց։

Փարթամագոյն է խմաստուն աղքատն՝  
քան զյիմար փարթամին։

Հայութակ առ առար հարդ ունաւ։

(ու) մասմարաց առար հարդ ունաւ։

Հայութակ առ առար հարդ ունաւ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այս ոմն ունէր զդուստր մի , զոր  
խնդրեցին 'ի կնութիւն երկու երիտա-  
սարդք . որոց մինն էր աղքատ եւ միւսն  
փարթամ . եւ հայրն ետ զնա աղքատին եւ  
հչ փարթամին . հարցին ցնա զպատճառն  
եւ ասէ . հչ կամեցայ տալ փարթամին ,  
զի գոլով նա տգէտ եւ յիմար , կայ մնայ  
նմա յաղքատութիւն անկանիլ . իսկ ներ-  
հակաբար որ է այր իմաստուն եւ հնարա-  
գէտ , հանդերձեալ է 'ի փարթամութիւն  
բարձրանալ .

---

ՏԱՄՆԵԱԿ · ՃԱ

Աւուցիչ աղքատ՝ է որպէս ձրագ ,  
ըւսաւորէ զայլ , եւ ինքն զինքն տոչորէ ,  
(ծախէ):

Յազումք են սպառնացեալք , այլ սա-  
կաւք են սպանեալք :

Դտանին բազում աւազակք , քան թէ  
կախաղանք :

Հուրն փորձէ զոսկին , եւ ձախորդու-  
թիւն զոր սիրէ զքեզ . (զքարեկամո քո):

Պատճառն բռնաւորին գաւազանն է :

Ոչ դժանիր այնքան բարձր լեռառն, ուր  
ոչ կարասցէ ելանել էշ մի բեռնաւորեալ  
ոսկւով:

Ոչ է պարտ առնել զչարն, զի եկեսցէ  
բարին:

Որ ելանէ ՚ի բարձրագոյնս ուր ոչ է  
պարտ, անկանի ՚ի ցածագոյնս՝ զոր ոչ կարծէ:

Հարկաւորութիւնն ցածուցանէ զազ-  
նուականութիւն:

Հարկաւորութիւնն է մայր հնարագի-  
տութեան:

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ոմն տայր զխորհուրդ ճանապարհորդի  
ուրուք՝ նաւու ընդ ծով գնալ յաղագս  
փութով ժամանելոյ, եւ վասն սակաւ ծա-  
խուք վճարելոյ. որում պատասխանէ. ոչ  
կամիմ ճանապարհորդել երիվարաւ. որ  
կառավարի սքւովն, որ ոստնու կարի սաստ-  
կութեամբ. եւ յորմէ ոչ կարէ մարդ՝  
յորժամ կամի իջանել:



# ՀԵՐԻԿՈՅԵՑԿ

## ԵՕԹՆԵԲՈՐԴ

ՏԱՄՆԵԱԿ. Ա

Բարեպէս մեռանիլն պսակէ զբողոք  
կեանս:

Ո՞ահն զօրացոյց ոչ ածէ ՚ի գործ:  
Պատգամաբեր ուրախ զձիրս խնդրէ:  
Օ բարի աբեղայն՝ մի ունիցիս ՚ի բարեկամ. եւ մի զչարագոյնն ՚ի թշնամի:

Որ կամիցի առնել կտակ լաւագոյն,  
արացէ զայն մինչդեռ է առողջագոյն:

Որ ոչ բնաւ փորձ առեալ է թշուառութեան, ոչ գիտէ ցաւակից լնկիլ:

Ամենայն ինչ ունի զիւրն վասն զի (պատճառ):

Անիծեալ լիցի հրձուանքն որ առնէ յիմար զմարդն:

Խնայռւմն է բարեգոյն անտեսութիւնն աւատքն է հաւատալ այնմ՝ որ ոչ աեսանի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երկու սուրհանդակ սպասաւորք բո-  
ղոք գանգատանաց բարձին առ տէրն իւր-  
եանց զտնտեսէն թէ ադահ է, եւ ՚ի կե-  
րակուր ընթրեաց ընդ հացի միայն բողէ  
եւ պանիր տայ ուտել եւ ոչ այլ ինչ։ Եւ  
նա առաքեալ կոչէ զտնտեսն, եւ հարցա-  
նէ ցնա մեծաւ բարկութեամբ։ թէ  
Ճմարի՞տ իցէ զոր ասեն սուրհանդակքն։  
թէ տաս դոցա յընթրիս ամենայն երեկոյի  
բողէ եւ պանիր, իսկ տնտեսն զահի հար-  
եալ եւ սասանեալ յերկիւղէ անտի պատ-  
ժոց պատուհասի՝ յաղագս կծծիաբար  
տնտեսելցն նոցա, պատասխանէ դողու-  
թեամբ. այն, տէր. ասէ տէրն. ահա զայդ  
հրամայեմ քեզ, զի այսուհետեւ տացես  
դոցա ՚ի միում գիշերի բողէ, եւ ՚ի միւսու-  
մըն պանիր։

ՏԱՄՆԵԱԿ. Բ

Դէ ապահով քայլն նորա, որ ՚ի վեր  
ընդ որմն ընթանայ։  
Հին յարդանոցն յորժամ հրդեհի, դը-  
մնդակ է ՚ի շիջուցանել։

Օ այլս կոյր կարծեն սիրահալք , որպէս  
Են ինքեանք :

Ա' եծի կատարելութեան է նշան , տա-  
նիւ զայլոցն անկատարութիւն :

Այլոց վերքն մեզ եղիցի սպեղանիւ  
Աւելի արժէ սակաւն , զոր գիտէ աղ-  
քատն , քան զբազումն զոր ունի փարթամն :  
Ինոջ խոհեմութիւն է իբր զփետուր ,  
որ վարի ՚ի հողմոց :

Լին՝ որ կամիցի զիւր պատիւ պահել , չէ  
պարտ առնուլ ինչ եւ կամ ընծայել :  
Ոչ պակասին ջուրք , ոչ շանց ՚ի միզել ,  
եւ հչ կանանց ՚ի յարտասուել :

Ոչ ոք կարէ կալ ՚ի խաղաղութեան  
յերկար ժամանակ , քան զոր կամին դը-  
րացիք իւր :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Ա

Այսնէսիոս բռնաւորն զուարձանայր-  
ծաղը առնելով բանիւ եւ գործով զկուա-  
պաշտութիւնն եւ զաւելորդապաշտու-  
թիւնն , որ զօրանայր ՚ի մէջ յունաց ՚ի  
ժամանակի իւրում վասն զի բառնայր ըդ-  
նուերս մատուցեալս կոոց , ասելով . ես  
կամիս ունիւ ինձ միայն զայնոսիկ , որոց

չունին նոքա պէտս։ Եւ մինչ յինքն էառ  
զոսկեծոյլ վերարկուն , զոր նուիրեալ էր  
Հերոնին ՚ի զարդ արձանին Դիոսին ոլիմբ-  
եայ , արար նմա բրդեղէն մի , ասելով .  
այդ ոսկեղէն հանդերձ ՚ի ձմերան է ցրտա-  
գոյն , եւ յամառան է ծանրագոյն։ Այ եւ  
հատ եւ զոսկեայ մօրուսն արձանին Եւ-  
դուղաբիոյ՝ ասելով. ոչ պատշաճի որդւոյն  
ունիլ զմօրուս , որոյ հայրն Ապողոն ան-  
մօրուս է։

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . Բ

Գրետերիկոս Թագաւորն թրանդէ-  
բուրդայ՝ լուր առեալ զփարթամութիւն  
վանացն կարգին յիսուսեան , որ ՚ի սահ-  
մանս իւր , գնաց յայցելութիւն նորին։  
Եւ շրջեալ ՚ի վանսն , եմուտ եւ յեկեղե-  
ցին . ուր ետես առ աւագ սեղանովն զոս-  
կիածոյլ մարդաշափ արձանս երկոտասան  
առաքելոցն , եւ իբր յանդէտս եհարց ցար-  
բայն , թէ ովլ իցեն սոքա , եւ նա պատաս-  
խանէ թէ առաքեալքն Քրիստոսի են։  
Եւ Թագաւորն դարձեալ առ արձանսն ա-  
մէ , ոչ ապաքէն վարդապետն ձեր հրամայ-  
եաց ձեզ երթալ յաշխարհ ամենայն , եւ

քարոզել . Եւ ընդէ՞ր ծուլացեալ բաղմիք  
ասա . Եւ ապա դարձեալ առ իւրան ասէ .  
բարձէ՞ք զդոսա պատուով Եւ տարայք  
յաշխարհ՝ քարոզել անդ , Եւ այսպէս ա-  
ռաքեաց զնոսա 'ի փողերանոցն»

ՏԱՄՆԵԱԿ . Գ.

¶ Եինի Եւ կին բառնան զմիտս մարդկան :  
|| այ տանն յորում րոքն հրամայէ սրոյն :  
Փոքրիկ մանկունք կոխոտեն զոտս մեր ,  
իսկ մեծքն զսիրտս մեր :

Ծերութիւնն ամենեցուն է բաղձալի .  
այլ ունողին է ատելիւ

Որոյ հերք իւր սկսանի ալեքէկիլ թող-  
եալ զսէր , զմնքն 'ի գինիս տայ հարկանիլ :  
Որ ընդ բազում երկիր շրջի , զբարեպէս  
կեալ ուսանիւ

Յագեալ որովայնիւ է գեղեցիկ քարո-  
զել զծոմ :

Արտասուքն ունինդրաց՝ են գոլու-  
թիւն քարոզաց :

|| արդապէտութիւնն (գիտութիւնն) 'ի  
ուսմիկս է արծաթ , յազնուականս՝ ոսկի ,  
Եւ յիշխանս ակն պատուական :

Որ չարաչար կեայ՝ միշտ յերկիւղի կեայ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Աշանաւոր ագահ ոմն լուեալ , թէ  
ազնուական ոք առատաձեռն հեղնեալ  
այպանէր զվատթար ագահութիւնն , եւ  
զիստ ժատութիւնն իւր , գնաց առ նա  
առ ՚ի գանդատիլ , ասելով . պարհն , ասա-  
ցաւ ինձ , թէ հոչակ հարեալ ես յամենայն  
ուրեք զինէն , թէ ես վաճառեմ զին մու-  
ճակս իմ . պատասխանէ ազնուականն . պա-  
րոն , որ ոք ասաց քեզ զայս , սուտ ասաց  
քմաց իւրոց , վասն զի ես ոչ բնաւ ասաց-  
եալ եմ , թէ դու վաճառես զմուճակս քո  
հինս , այլ յիրաւի թէ գնեալ ես հնուիա:

---

ՏԱՄՆԵԱԿ · Դ

Գախութիւն գիտութեանց է գիտել  
զոք գիտելնո:

Ի գիտելոյն հասանէ մարդն ունելոյն:

Ենծանօթ իրն զոք ոք չարչարէ:

Որ ՚ի վեր քան զամենայն ոք կամի գի-  
տել , ընդ անասունս համարի:

Համբերէ եւ լուէ , որ զիսաղաղութիւն  
ունիլ կամի:

Կա է ազնուական , որ ազնուաբար

կենցաղի:

Ղաւ է հաւաստի խաղաղութիւնն, քան  
գյոււսացեալ յաղթութիւնն:

Ոչ վուշ ընդ հրոյ, եւ ոչ կին ընդ երիւ  
տասարդի:

Որ փախչի՞դատաստանէ դատապարտի:

Ինդ բազմաց ՚ի մարտ, ընդ սակաւուց  
՚ի խորհուրդ:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Յիմար ոմն յաղնուական զարմէ ար-  
համարհէր զբարեհռչակ ոմն քաջ զօրա-  
պետ՝ յանդիման արկանելով նմա զնու-  
աստութիւն սերնդեան նորա. որում պա-  
տասխանի ետ զօրապետն քաջ, ես վերին  
օդնականութեամբն եղէց առաջին եւ ազ-  
նուական յիմում ցեղին, եւ դու եղիցիս  
վերջինն քոյս զարմին:

---

ՏԱՄՆԵԱԿ. Ե

Դոր է միաբանութիւնն քան զամբոց:  
Ծարւոք է կորուսանել զյաղթութիւնն  
քան զկեանս:

Ո՞չ է պարտ գնել կաղ ջորի յուսով  
բժշկութեան . եւ ոչ ածել ՚ի կին զբող  
յուսով ուղղութեան նորաւ

Որ վաճառէ ապառիկ, զվաճառն տայ,  
եւ զգինն ոչ ընդունի:

Որ գնէ զերկիր, գնէ զկոխւ իբր ՚ի  
բազումս:


Ո՞չ է պիտոյ վաճառել բարեկամին ,  
եւ ոչ գնել ցորեան ՚ի փարթամէ:

՚ յայրն խոհեմութիւն , եւ ՚ի կինն  
համբերութիւնն:

՚ յնպէս է այր՝ որ չունի սէր առ կին իւր .  
որպէս տուն՝ որ ոչ ունի զերդ տանեաց:

Որ տաղտկացեալէ յաւուրց բարեաց  
ամուսնասցի:

՚ զարգացուցանել զմանկունս՝ պիտոյ  
են աշխատանք , եւ յորժամ մեծանան՝  
պիտոյանան դրամք:



### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Պ**արոն ոմն՝ որ ունէր զսակաւ եկա-  
մուտս, զսակաւ հաւատս, եւ հետեւապէս  
զսակաւ համարումն , բայց յոյժ պճնա-  
սէր , եմուտ ՚ի կրպակ դլխարկավաճառի  
ուրուք, եւ հաւանեալ միոյն հատանէ ըզ-

դինն . եւ ասէ վաճառողին . ոչ հաւատաս  
ինձ ժամանակ ինչ զգին գլխանոցին . պա-  
տասխանէ վաճառականն . ոչ կարեմ, կրկնէ  
պարոնն . որպէս համարձակիս չհաւատալ  
ինձ գձուձ իմն գլխարկ : Ասէ վաճառա-  
կանն , ոչ . պատուական պարոն . զի որովհե-  
տեւ ունիմ պէտո դրամոյ , չէ կարելի ինձ  
սպասել յերկար ժամանակ հատուցմանն .  
բայց յայսմանէ պարզապէս խօսելով , ոչ  
վայելէ ինձ յորժամ պատուականութիւն  
ձեր անցանիցէ զառաջեւաւ կրպակի իմոյ ,  
հանել զգլխարկ իմ ՚ի գլխոյս ՚ի պատիւ  
միւս զլխարկի իմոյ :

---

ՏԱՄՆԵԱԿ . Զ

**Ո**ւծադոյն թշնամի մարդոյ է մարդնս  
(նոյն ինքն)

Որ սաստիկս փայփայէ զմարմին մատադ ,  
ոչ բնաւ զոսկերս ծերս գործեսցէ . ձեռն  
փոքրիկ մանեկան փութով լիսափի :

**Ո**՞ի միայն մատն ոչ կազմէ ձեռն , եւ  
ոչ բերէ գարուն՝ միմիայն ծիծեռն :

Աթէ կամիս կեալ ՚ի խաղաղութեան ,  
լեր երբեմն խուլ եւ համր:

Խոստանալ առանց տալոյ՝ է յիմար մի

Քաջալերել

Ուր օգնեաց՝ ոչ եդիտ զօգնութիւն, եւ որ ողորմեցաւ՝ ոչ գտաւ նմա ողորմութիւն:

Ուր սակաւ է սիրտ, անդ է առաւել լեզու:

Ոչ կարթն եւ ոչ եղէզն, այլ խայծն պատրէ զձուկն:

Որդի անզդամ առաւել արժէ զկնի մահուն, քան 'ի կենդանութեան:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սանուտէր ոմն արտսկրսեալ էր 'ի տանէ իւրմէ զսպասաւոր ոմն իւր՝ յաղադս լինելոյ նորա գող ընտանի, եւ հարցաւ յայլմէ տանուտեառնէ բարեկամէ իւրմէ, որ կամէր ունիլ զնա 'ի սպասաւորութիւն տան իւրոյ, թէ բարւոք իցէ, եւ նա ձեւացուցեալ զինքն գովել զնա՝ պատասխանէ յամր յամր բարբառով. ոչինչ էր 'ի տան իմում փակեալ առաջի այնր ծառայի իմոյ. որ սիրելի էր ինձ յոյժ: Եւ իւրեւ զայլ բան ընդ մէջ էարկ բարեկամըն, կրկնեաց առաջինն, համբեր, պարոն, աղաչեմ մինչեւ կատարեցից զբանս իմ, եւ

յարէ նախասացեալ բանիցն իւրոց , վասն  
զի գիտէր նա բանալ գործեօք զամենայն  
միականս :

---

ՏԱՄՆԵԱԿ Է

**Կ**աեղեցիկն ընութեամբ մինչեւ ՚ի  
մոսն տեւէ :

Որ ինչ նոր է , միշտ գեղեցիկ թուի :  
Արդարեւ ունի գլուխ գեղեցիկ , բայց  
ոչ ՚ի նմա զուղեղ (զուշ) :

Եզու երկայն կարճ ձեռաց է նշան ,  
(որպիսի է եւ այս) : Երկայն սուսեր , կարճ  
քաջասրտութիւն :

Եւելի պատիւ է ոմանց դնալ կառօքն ,  
զոր հայր իւր վարեաց , քան վարել զայն ,  
որով իւր հայրն գնաց :

Ո՞ի հարկաներ զի ցաւիցի , եւ մի ասեր  
զի անհաճոյ լիցի :

Որ ինչ ասի ՚ի սեղանին , ծալեալ կաց-  
ցէ ՚ի սփռոցին :

Որ զպատճառ միայն պահանջէ , դիւ-  
րաւ թշնամւոյն յաղթել կարօղ է :

՚ի մը գթած՝ խնդրէ առաւել :

Ո՞չ որոնել լու ՚ի սեաւ հանդերձի , եւ  
ոչ տալ խորհուրդ հնացեալ ծերիւ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գիւղական ոմն հեծեալ յէշ խր անցանէր ընդ հրապարակն քաղաքին յառաջոյ դպրատան միոյ՝ մինչ դաս դաս արձակւեալ ուսումնականք ելանէին, եւ տեսեալ իշոյն գբազմութիւն ՚ի ձայն բարձր սկսաւ զռալ. ընդ որ զայրացեալ ուսումնական մանկունքն սկսան արհամարհել զտէր իշոյն, ասելով. է՛հ վայրագասուն դու. ոչ գիտես լաւ եւս կրթել գէշ քո, եւ ուսուցանել զկերպ վարելոյ, եւ զիա՞րդ հանդուրժես, մինչ առնե դա զայդպիսի անկարգ անպատութիւն ՚ի մէջ այսպիսի համեստ եւ բարեկարգ ընկերակցութեանն Ենդ մերձ դիպեալ ծեր ոմն դիւղական, եւ տեսեալ թէ խեղձ այրն ոչ գիտէր զինչ խօսիլ, պատասխանի ետ եւ ասէ ցնոսա, պարոնիկք. այս էշ ահա տեսեալ զայդքան ընկերակիցս. այնչափ ուրախացաւ, մինչեւ երգել ցնծութեամբ:

ՏԱՄՆԵԱԿ. Ը

Յիմար ոք գիտէ առաւել հարցանել, քան թէ եօթն իմաստուն գիտիցեն չպա-

տասխանել:

Անդադար խնդրոյ ժխտելն՝ չէ ան-  
պատշաճ:

Ո՞ի խնդրեր յայնմանէ, որ գիտես թէ  
ունի, այլ յայնմանէ՝ որ գիտես թէ քեզ  
բարի կամի:

Ա, խորժելի երաժշտութիւն այն է՝ զոր  
ոք անձամբ յօրինէ:

Եթերան փակեալ ոչ մտանեն Ճանձք:  
Գայլոյ կոչնակն միշտ հնչէ դառն, դառն  
Ճշմարտութեան անգամ ստախօսին չը  
հաւատան մարդիկ:

Ճշմարտութիւնն ոչ կամի միշտ լսելի  
լինիլ:

Ա, մենայն ումեք իւր ցաւն թուխ առա-  
ւել սաստիկ:

Ոտոյդ բարեկամք յանստոյդ (Շի հար-  
կաւոր) իրա Ճանաչին:

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Աղքատ ոմն գիւղաբնակ ունէր զկին  
խժաբարոյ յոյժ եւ չար ժանտ: Ոյն այս  
կին սխտացաւ զախտ արգանդի հեղծու-  
ցիչ, մինչեւ արգիլի շնչոն, եւ թուիլ ա-  
մենեցուն մեռեալ. եւ այնպէս պատեալ

զմարմինն պաստառաւ անկողնոյն եղին . ՚ի  
վերայ սանդղոց՝ ըստ սովորութեան աղքատ  
մեռելոց . եւ բարձեալ տանեին ՚ի գերեզ-  
ման մերձ փոքրիկ եկեղեցւոյ միոջ , եւ  
մինչ անցուցանեին ընդ կիրճն փշաւէտ  
մացառի , խայթէին փուշքն զմարմին շրն-  
չասպառ կնոջն . մինչեւ զարթուցանել  
զնա ՚ի խոր թմրութենէ անտի , եւ զեր-  
ծանիլ ՚ի թաղմանէ . Վայս յետ ամաց ինչ  
մեռաւ խսկապէս նոյն կին . զոր նմանապէս  
բարձեալ տանեին ՚ի թաղել , խկ այր մե-  
ռելոյն կասկածեալ ստէպ ստէպ ազդ  
առներ զդին բարձողաց , ասելով . հեռի  
գնացէք ՚ի փշոցն :

---

ՏԱՄՆԵԱԿ. Թ.

Ի գարշ աղբոյ չե յուսալի անոյշ հո-  
տոյ . եւ ՚ի պատուոյ եւ յարդանաց ՚ի  
ցած մարդոյ :

Ճամանակն յայտնէ զջմարտութիւննէ  
Ի յաչս եւ ՚ի ճակատի ընթեռնանի նա-  
մակ սրտի :

Ո՞՞ կնքեր զդիր՝ զոր չես ընթերցեալ,  
եւ մի ըմպեր ջուր՝ զոր ոչ ես աեւսեալ:  
Ո՞՞ անկեր պարտէզ ՚ի տեղւոջ հովա-

նի, եւ մի շիներ չենս առ եզր գետոյ:

Դիւրին է տեսանելն, բայց դժուարին  
նախատեսանելն:

Փութով յագի որովայնն, ոչ շատանան  
ընաւ աչք:

Կաւ է թողուլինչ թշնամւոյն՝ ի մահ-  
ուան, քան խնդրելինչ՝ ի բարեկամէ՝ ի  
կեանս:

Որ յառաջոյ ոչ նկատէ, ապա յետուստ  
հառաչեսցէ:

Բարի կանայք ասին նորին, որք ընդ-  
հողով ծածկեալ դնին:

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

---

Կարձակ ոմն թշուառաբար պահէր  
եւ խոշտանդէր զկին իւր, (գուցէ եւ ար-  
ժանի իսկ էր) առ որ եկեալ կնքահայր  
իւր յանդիմաներ զնա ասելով. սիրելի իմ  
սանահայր. լսեմ թէ առնես դու զանո-  
ղորմ տնտեսութիւն առ կին քո, եւ չունիս  
հոգ ինչ զնանե, մինչ զի շուն քո երջան-  
կագոյն է՝ ի տան քում քան թէ ողորմե-  
լին այն: Յիրաւի պիտոյ է երբեմն գան  
հարկանել զկին, բայց զանազանութիւն  
մեծ է՝ ի մէջ դանելոյ. եւ սպանանելոյ.

տաղա ՚ի դործ ած զլսուհեմութիւն, եւ հար  
զնա չափով։ Առ այս քան պատասխանե-  
դերձակն, ես առնեմ ըստ ամենայնի զայն  
զոր ասես, վասն զի ես ՚ի դործ ածեմ յայն  
զմեծագոյն կանգունն իմ։

---

ՏԱՄՆԵԱԿ. Ժ

Ուր ծառայից է բազմութիւն, անդ չէ  
բարեղք ծառայութիւն, (զի մինն թողու-  
միւսոյն)։

Ուրաջին եւ վերջին ցրտութիւնք են ա-  
ռաւել զգալիք։

Օ բազումն սպանանե որկորն քան թէ-  
քաղցն։

Ուր ուտէ զկոլ թագաւորի, ուտէ զայն  
նիհար՝ եւ վճարէ գէր. եւ զկնի հարիւր  
ամաց մնայ վճարել եւ զգին ոսկերացն։

Ուրմին յադեցեալ ոչ բարւոք փախ-  
չիլ կարէ. եւ ոչ բարւոք պատերազմիլ։

Ուր մատածութեանց է գիշերն։

Օ այլ եւս ինչ պահանջէ սեղանն բաց  
՚ի սպիտակ պաստառէ։

Ուր ուտէ զտանձ ընդ տեառն իւրում,  
ոչ իշխէ ընտրել զլաւագոյնն. (ընդ մեծա-  
մեծաց ընտանութիւնն է ծառայել նոցա)։

Ծաղում ինչ խնդրէ յիմարն , սակայն  
յիմար է նա՝ որ զայնս նմա տայ:

Օ որ ինչ ունի շուրջն ՚ի պրտի , արբեալն  
ունի զայն ՚ի լեզուի:

Տա մատուցած մորութիւն

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Խ**իսան ոմն անդղիացի , թէպէտ եւ ՚ի  
մեծամեծ գործս էր զքաղեալ , սակայն էր  
այր զուարձաբան եւ ծաղրածու , մինչ զի  
գոլով սա դատապարտեալ ՚ի գլխատիլ ,  
վասն առնելց խորհրդակցութիւն ընդ թշ-  
նամեաց տէրութեանն , առաքեալ կոչեաց  
՚ի նախընթաց երեկոյն գլխատման իւրոյ՝  
զսափրիչ ոմն ՚ի գերծել զգլուխ իւր . որ  
յետ սափրելոյն ակնկալեալ մնայր առնուլ  
զհատուցումն ինչ ՚ի նմանէ , զոր իմացեալ  
իշխանն այն՝ ասէ ցնա , բարեկամ . Եթէ  
գլուխս իմ լինէր , առատապէս վճարելի  
քեզ փոխանակ աշխատանաց քոց :

Յարդիք և պատճենահանու զայ Ա  
զայ մայրէն մասնաւու զայ ու զայ Օ

Յարդիք և պատճենահանու զայ Ա  
զայ մայրէն մասնաւու զայ ու զայ Օ  
: արդիք շահաւու մասնաւու զայ Ա  
զայ մայրէն մասնաւու զայ Օ



# ՀԵՐԻԿԹԵՍԿ

## ՈՒԹԵՐՈՐԴ

ՏԱՄՆԵԱԿ. Ա

Այս ամօթխած զբազում ինչ կորու-  
սանե՞ւ:

Առաւել սկրելի է ինձ եշ մի, որ բարձ-  
եալ տանի դիս, քան երիվար մի որ յերկիր  
արկանէ դիս:

Առուրն սպան զբազումն, բայց եւս ա-  
ռաւել գինին:

Աղքատութիւնն է բարեկամ ողջախո-  
հութեան:

Բազում են մեզ աւուրբ կերակրոյ՝  
քան զտեսակս խորակաց:

Լաւ է քակելն քան զպատառուտելն:  
Հարիւր լիտր մտածմանց՝ ոչ վճարեն  
զմի ունկի պարտուց:

Լյօժարութենէ կամաց լցեալ կայ  
դժոփիքն:

Որ ոչ կարէ որպէս կամի , կամեացի  
որպէս կարէ :

Ուեղք՝ պարտք՝ եւ հանդերձք աղտեղ-  
եալք են միշտ առաւել քան զկարծեց-  
եալն :

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

---

Ապասաւոր ոմն թանձրամիտ յոյժ ,  
բայց հաւատարիմ , արար զհաշիւ իրաց  
գնելոց դրամովք տուեցելովք ինքեան .  
զորս մի ըստ միոջէ հանեալ 'ի գիր՝ մատոց  
տեմառն իւրում , յորում դրեալ կայր 'ի  
կարգս իրաց նաեւ այս . վասն միոյ հայցի  
զոր գնեցի յաղագս իմ ութ դանկ . վասն  
յարդի եւ գարւոյ , զոր գնեցի յաղագս  
տէրութեան չորս դահեկան :

---

ՏԱՄՆԵԱԿ · Բ

---

Առաւել են միշտ հնչիւնիք ձայնից՝  
քան թէ ընկոյզք :

Առաւել ներգործէ ջուր երկնից քան  
զամենայն ոռոգմունաւ (չնորհքն եւ օրհ-  
նութիւնն Աստուծոյ՝ աղդողագոյն է ) քան

զամենայն մասնաւոր գօրութիւն):

Ո՞վ մոցէ ՚ի մէջ ճախարակի եւ բռքի,  
որ ՚ոչ կամիցի մանիլ: (այսինքն ՚ի ձեռա  
կանանց):

Ո՞վնչդեռ մեծ աղախինն խոնարհի,  
փոքրն աւելիալ է զտունն:  
(Օանիր նախ զնա՝ զոր դու սիրես կամ  
ատես:

Ո՞վնչ գնայ լուծն, գնասցէ եւ անիւն.  
(այր եւ կին ՚ի գործս իւրեաց պարտին  
միաբան ջանալ):

Պահանջէ առաւել առ ՚ի ունիլ զար-  
ժանն:

Ո՞վնչդեռ դու ես Ճոխ փարթամ, ունիս  
բազում բարեկամ:

Չափազանց պատժելն՝ բազմիցս վատ-  
թարագործէ:

Կենցաղալարեամ ընդ բարեաց, եւ բար-  
ւոք կաց ընդ վատթարաց:

Ըստն սաստիկ հաջող, չէ քաջ խածանօղ:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գրիւղական ոմն գնացեալ առ դրացի  
իւր խնդրէր զէշ նորա ՚ի պէտս իւր, եւ  
նա ՚ոչ կամեցեալ տալ զնա, բաղբաղէ,

ասելով. թէ էշն ոչ է ՚ի տան, այլ տուեալ  
եմ զնա այլում։ Առ մինչդեռ այս ինչ եւ  
այն ինչ պատճառէր, յանկարծ սկսանի  
էշն զռար։ Ասէ գիւղականն . ո՞հ ո՞րպէս  
ասես թէ էշն քո չէ ՚ի տան, զորոյ ահա  
զոնցիւնն լսեմ յախոռէ քումմէ . պատաս-  
խանէ դրացին, արդարեւ. դու իսկ ես էշ.  
զի առաւել իշոյն իմոյ հաւատաս քան  
թէ ինձ։

ՏԱՍՆԵԱԿ. գ

Պանիր փակեցեալ, պանիր բաղկաց-  
եալ. (յարդելեալն ձկտիմք)։

Դայլն՝ ասի, լայ զոջսարն, եւ ապա  
ուտէ զնաւ։

Որ ոչ երբէք ամաչէ, աշխարհ ամենայն  
իւր է։

Աւազակըն մինչ մարտնչին, գողունիքն  
յայտնի լինին։

Ի՞նդ վայր դատ վարէ, որ խօսի զիրա-  
ւունս իւր կարանաւորին։

Օսուլութիւնն ոչ լուանայ զգլուխն,  
եւ թէ լուանայ ոչ սանտրէ զնաւ։

Ճ՛շմարիտ առաքինութիւնն ժառան-  
գութեամք ոչ ստացեալ լինի։

ՎԵԼ բարի որ ոչ փութայ օր ըստ օրէ  
լինել բարեգոյն։

Դաւազանն արտսկսէ զշունն ՚ի հար-  
սանեաց։

ՅՆԴ սկսիլ հպարտութեանն ամբառ-  
նալ, սկսանի յաջողութիւնն ցածանալ։

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Իւանդ ոմն երեւակայական (որպի-  
սի են հասարակօրէն այնոքիկ փարթամբ,  
որք միայն զժամանակաւոր զայս կեանս  
սիրեն եւ զնորայսն, եւ երկնչին յայժ յոյժ  
յելաննելոյ անտի), կոչէր ստէպ զբժիշկն  
վասն ամենայն ՞ եւ իցէ փոքրիկ տկարու-  
թեան, որ եկեալ յաւուր միում շօշափէր  
զզարկ բազկին, եւ զննէր զայլ նշանան, որք  
էին իբր հանապազ քաջառողջ առն. բայց  
՚ի գանգատանաց նորա ձանձրացեալ բը-  
ժիշկն վերջապէս եհարց ցնա. թէ Պարօն,  
սխորժանօք ուտես եւ ըմպէս . պատաս-  
խանէ հիւանդն . յոյժ բարւոք, եհարց .  
հոգաս զկարիս որովայնի լաւապէս . պա-  
տասխանէ . այժ լաւապէս . արց . հան-  
գիստ նեղէս . պատասխանէ, յոյժ հան-  
գիստ . յաւելու բժիշկն . հապա բարւոք

ընթանայ ամենայն ինչ պարօնիղ . բայց  
գուցէ Ազնուութեանդ թուի , թէ բա-  
րիքա այսոքիկ են չարք . վասն որոյ գրեցից  
դեղս ինչ , որ զերծուոցէ զքեզ 'ի բնաւկց  
յայսցանէ :

---

ՏԱՄՆԵԱԿ . Դ

Ամենայն խելք ոչ է 'ի մի միայն գլուխ:  
Որ զոշինչ ունի , ոչ ինչ երկնչի :  
Բատ տեղւոյ եւ ժամանակի անզգամն  
համարձակի :

'Կախանձն է ժանտախտ սիրոյ , եւ կար-  
ծիքն է քաղցկեղ բարեկամութեան :

Չունի խիզճ մտաց որ չէ ամօթխած :  
'Կա է որպէս ածխոյ պարկ արտաքուստ  
սեաւ , այլ վատ ներքուստ : (որ ասի ըզ-  
տգեղ չարաբարոյից) :

Ոչ կարէ անկանիլ որ զառաքինու-  
թիւնն ունի յենարան . (առաջնորդ) :

Աչօք եւ հաւատով (կրօնիւք) ոչ է  
պարտ ծաղր առնել :

Որ հաւատայ առանց գրաւոյ , ոչ ունի  
Ճշմարտութիւն :

Որ 'ի մանկութեան ոչ հետեւի առա-  
քինութեան , 'ի ծերութեան պատժովք  
փախնուցու 'ի մոլութենեն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կատաւոր ոմն ծանձրացեալ յերկար  
ժամանակ՝ ի թախանձանաց խեղչ եւ աղ-  
քատ առն միոջ՝ ի լսել զիրաւունս նորա,  
վերջապէս ետ նմա մուտս ՚ի խօսիլ: Բայց  
բուրէը ՚ի նմանէ այնքան սաստիկ հոտ  
խստորի, մինչեւ հեռանալ ՚ի նմանէ դա-  
տաւորին եւ ասել. դու խստոր հոտիս.  
պատասխանեաց աղքատ այրն. Ճշմարիտ է  
այդ, բայց եւ ոչ է տուեալ ամենեցուն ի-  
մանալ զհոտ եզան, հորթու, խաշին, եւ  
նման անասուն կենդանեաց, որպէս տէ-  
բութիւնդ բուրէ ահա:

ՏԱՄՆԵԱԿ. Ե

Կա է որպէս զկոչնակս զանդակա-  
տան, որ զայշ կոչէ յեկեղեցի՝ եւ ինքն  
ոչ մտանէ, (որք ասեն եւ ոչ առնեն):

Ըսւն մի բազում հարսանեաց առ ՚ի  
յամենից ուտել ջանալով, եւ ոչ ՚ի միոյն  
ուտէ: (որպէս ագահս):

Ո՞նչ կատակես ընդ զինուորաց եւ ըզ-  
առւրբս թող հանդիստ կալ:

Ո՞ր ունի դրամ, նաեւ բարեկամ, նմա

Դիւրին է դատաստան։  
Յիմարն ուսանի ծախուք իւրովք  
կեալ, խմաստունն ծախուք այլոց։  
Որ մտածէ ապահով լինել, լիցի ապա-  
հով ի լինիլ յիմար։  
Իազմիցա որ է երեւելի, իրաւագէտ է  
յետին քրիստոնեայ։  
Հաց այլոց թանկագոյն լինի։  
Այսանգամն ոչ է առվորութիւն։  
Օ կայ առնուն կառք, եւ միզեն եզինք։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Ս**իմար ոմն շինական, որ կայր մերձ  
պարոնի միում, խրատեցաւ թէ պարտ է  
նմա բանալ զգլուխ իւր առ ՚ի պատուել  
զնա . առ ժամայն վազս առեալ դէպ առ  
պարօնն՝ եւ հանէ նմա զգլխարկն ՚ի գլխոյ  
իւրմէ . եւ յորժամ ասացին որք շուրջն  
կային, ոչ էր պարտ առնել այնպէս, այլ  
պարտ իցէ ուսանիլ, թէ որպէս վայելէ  
առնել . պատասխանէ շինականն . այս ան-  
դամ ես ինձ բանալ համարեսցիւ

ՏԱՄՆԵԱԿ. Զ.

Կա չէ բնաւ քաջ գիտուն այր՝ որ  
ոչ գիտէ լինիլ լիմար:

Յովանդակ օրէնք մարդկային մոմեղէն  
ոնդունս ունին:

Յան ընդ բերանն արտափս ելեալ, ՚ի  
պարսատկէ քար արձակեալ:

Որ ուտէ զհաց բազմաչեայ՝ եւ զպա-  
նիր կոյր:

Ոչ է նա խելագար՝ բայց միայն ՚ի  
տարին երկոտասան ամիս:

Ո՞ի լինիր ուռուցեալ, եւ ոչ պայթի-  
ցիս:

Քաջազօր է նա սուր ՚ի ձեռին իւ-  
րում, սակայն միայնակ:

Ո՞ի լիցի փոնապան, որ ունի դլուխ  
մոմեղէն:

Ողորմութիւն ոչ վոքրկացուցանէ ըզ-  
քսակնե:

Ուր պակասեսցէ առիւծու կաշին, անդ  
է կարկանտել զաղուիսու մորթին:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գիւղական ոմն ընդ անցանելն առ  
արքունի պալատու՝ ընդ այն ուր կացեալ  
կային ասպետք ոմանք , գան հարկանէր  
զէշ իւր գաւաղանաւ այնքան սաստիկ ,  
մինչեւ ՚ի գութ շարժեալ ասպետիցն՝  
սաստեն զգիւղականն եւ ասեն , մի այդ-  
պիսի անողորմ խստասրտութեամբ վարէր  
զլողձուկ կենդանիդ զայդ : Յայնժամ գիւ-  
ղականն խկոյն խոնարհի առ էշն եւ ասէ ,  
ներեա ինձ պարհն էշ , զի ոչ գիտէի թէ  
ունիս դու զազդականս եւ զմեծաւորս ՚ի  
դուռն արքունի :

---

ՏԱՄՍԵԱԿ · Է

Մի հաւատար այնմ , որ ՚ի տօնավա-  
ճառէն դայ . այլ այնմ՝ որ ՚ի տօնավաճա-  
ռն դառնայ :

Վչ են մարդիկ այնոքիկ ամենեքին , որք  
միզեն զորմով : (այլ եւ նախանձոտք եւ  
խրծանօղ շունք):

Դմբ զինչս քո ՚ի մի կողմն , եկեսցէ ժա-  
մանակ պիտոյութեան նոցա :

Պատուեա զխորհուրդս բազմաց , եւ

չեւ քեզ ինչ վտանգաւոր:

Օ գոյշ լեր հաւու՝ որ ուտէ ՚ի տան  
քում, եւ ածէ զձուն ՚ի տան այլոց:

Ո՞չ դոյ վատթարագոյն քան զճշմարիտն  
ծաղր առնել:

Ո՞ի լինիր այնքան բորբոքեալ ՚ի տտա-  
նալ. որքան խոհեմ ՚ի գործ ածել:

Խղճմտանքն է կարողագոյն տանջանկ  
չարագործաց:

Ո՞չ ունի մարդն մեծագոյն թշնամի,  
քան զսաստիկ յաջողութիւն բաղդին:

Ո՞չ է բարւոք խաղալ ՚ի վերայ սառուցի:

---

### ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Օ դող ոմն տանէին ՚ի դատապար-  
տութիւն. որոյ զհետ երթային անթիւ-  
բաղմութիւնք, եւ ՚ի վերայ թիկանց եւ  
ուսոց նորա տային ձաղանս անողորմա-  
բար, իսկ նա գնայր հանդարտ. զրբ տես-  
եալ այր ոմն բարի գթացեալ ասէ ցնա,  
ով թշուառական դու, վութեալ վաղվագեա-  
զմնթացս քո, զի դոնէ զերծցիս ՚ի բազում  
հարուածոցդ. Պատասխանէ դատապարտ-  
եալն, յորժամ տէրութիւն քո յաւուր  
միում դատապարտեսցի, որպէս եւ կամիցի

Եւ կամ կարիցէ , այնպէս ընթանայցէ , իսկ  
ես կամիմ ըստ կերպի խմում ընթանալ .  
Եւ վասն քանի մի տասն աւելի կամ պա-  
կաս հարուածոց ոչ կամիմ կորուսանել  
կէտ մի ՚ի ծանր եւ հանդարտ ընթացից  
խոց :

---

ՏԱՄՆԵԱԿ . Ը

Ո՞չ է խնդրել տանձ ՚ի նորատունկ  
ծառոց . զի ոչ գոյ տակաւին ՚ի նմաւ  
՚ մէջ հին եւ սաստիկ թշնամութեան  
դժուարին է նոր իմն բարեկամութեան  
հաստատիլ :

Որ ծնանի փետրովլք (ձրիւք պարզե-  
ւաց) ՚ի սկզբան ժամանակի , թռանի ՚ի  
մերկութեան . (՚ի վտանգաց) :

Ո՞ւ այնքան իր փութալի , որքան ՚ի  
կալնուլ զլու :

Բազում ինչք՝ բազում փոյժք :

Ո՞ւ արդիկ ոչ չափին կանդնաւ :

Հեռի փախիր ՚ի վատահամբաւութենէ .  
Թէ ճշմարիտ իցէ եւ թէ սուտ :

Որ շտապով փութացէ՝ անագան կա-  
տարեսցէ :

Որ ժամանէ անագան , գտանել վատ իւ-

ՋԵԼԱՆԻ

Առ ՚ի քաջառողջ կեալ՝ զգեցիր ա-  
ռատ, կեր ժլատ, եւ երթ հանդարտ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կայշերապահն ընդ պահպանացն իւրոց  
յերրորդ պահու դիշերոյն պատահեցաւ  
սպասաւորի միում տան, որ ՚ի ներքոյ վե-  
րարկուին իւրոյ բարձեալ տաներ զշիշ մի  
մեծ լի զինւով, որում հարցանէ. թէ զո՞ր-  
պիսի զէնս տանիս ՚ի ներքոյ աստ, եւ ըս-  
պասաւորն պատասխանէ ընդ կատակս, թէ  
սուսերք Յայնժամ ՚ի բաց արարեալ զվե-  
րարկուն իսկոյն, եւ ետես զոր ինչ էրն,  
եւ առեալ մատոյց շրջակայիցն իւրոց, զոր  
արբին. եւ կալեալ զդատարկ շիշն ետ ՚ի  
ձեռս նորա ասելով. կալ զի ահա շնորհեմք  
քեզ զպատեանն:

ՏԱՄՆԵԱԿ. Թ

անդերձն միայն հչ առնէ կրօնաւորւ-  
թաւագոյն է ասէ. (ծոյլ վատասիրտն)  
զմուճակս ցեխոտել, քան զհանդերձն

յարեան թաթաւել:

Ո՞չ բարւոք շիջանի հուրն վշովք:

Վնդադար ստացեալ ինչք ո՞չ լինին  
հաստուն մայր դրամուց:

Վայիսն ամիս որչափ եւ պայծառ, բերէ  
յարդ բազում, եւ ցորեան սակաւ:

Որ զջորս շահի եւ զեօթն մախէ, նմա  
չէ պիտոյ քսակ եւ գրպան:

Ո՞վ, որպէս պակասամիտէ նա՝ որ վատ-  
նէ զիւրն, առանց ստանալոյ զայլոցն:

Առաւել պակասի յոյժ փարթամին,  
քան սաստիկ աղքատին:

Հայեաց ընդ առաջ, զի մի անկանիցիս  
ընդ կրունկն:

Դժուարին է սանտրել, ուր պակասին  
հերք:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Այր ոմն տէր կալուածոց գնաց առ  
ոմն մեծատուն, ՚ի վաճառել նմա զկալ-  
ուած իւր, եհարց գնողն ցվաճառողն եթէ  
յատուկ իւր աշխատանաց արդեամբք եր  
ստացեալ զայնա: Եւ մինչ պատասխանեաց  
թէ այն, ո՞չ կամէր գնել: Գնայ առ նա  
եւ այլ ոմն վաճառել նմա զպարտէզ մի

գեղեցիկ . որում ժառանդութիւն էր այն ,  
Ասէ փարթամն . Եկ եւ յօժարութեամբ  
գնեցից , եւ ՚ի հարցանել պատճառին բա-  
րեկամացն , պատասխանէ , որ քրտամբք  
աշխատանաց իւրոց ստացեալ է զիր ինչ ,  
մեծագոյն յոյժ համարի զայն , զոր եւ ջա-  
նայ որբան կարելի է՝ թանկագինս վաճա-  
ռել , բայց որ չէ աշխատեալ բնաւ ՚ի վե-  
րայ ստացուածոց ինչ , զայն արժանագինն  
վաճառէ եւ դիւրութեամբ :

---

ՏԱՄՆԵԱԿ . Ճ

**Ա**երձաւորագոյնք են ինձ ատամունք  
իմ քան զարենակիցս :

Պատկերն եւ պատերազմն յոյժ գեղե-  
ցիկ երեւին ՚ի հեռուստ :

**Ա**նզգամին պատիմնէ կաղ , բայց ժա-  
մանէ վերջապէս :

Որպէս վուշն զիա՞րդ մանեսցի , նոյնպէս  
եւ դուստրին՝ զիա՞րդ զարթուսցի :

**Ա**յսը շատաշրջիկ առնէ զդուստրն ան-  
պարկեցաւ :

Հաշեսցէ շունն առ իս , բայց մի խա-  
ճատեսցէ դիս :

Պնակն ՚ի հնչմանէն՝ եւ այլ ՚ի բար-

բառոյն ձանաչիւ

թէ պարզ լինի օդ թէ անձրեւային ոյ  
շէ ամենեցուն հաճոյ բնաւին:

Դրամն առնէ զմարդն ագահ:

Անկողին եւ հուր ջեռուցիկ առնեն  
զայր փոքր (ծոյլ):

Օ բարին նախ քեզ արասցես , այլոց  
եթէ կարես:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երբեմն քաղաքապետ ոմն ծովա-  
մերձ քաղաքի ուրումն Սպանիացւոց , ուր  
հենք Արաբացւոց յաճախէին ասպատա-  
կել նաւու զծովեզերեայս նորին: Եւ եւ  
դեւ զի յաւուր միում մինչ բազում յոյժ  
զօրք նաւարտակացն հոսեցան 'ի ցամաք  
անդր , ասպետ ոմն Սպանիացի պատահե-  
ցաւ նոցա զինուորօք ոմամբք եւ քաղա-  
քացեօք , եւ քաջութեամբ մարտուցեալ  
ընդ նոսա՝ կոտորեաց զբազումն 'ի նոցա-  
նէ . եւ զմնացեալն կալաւ հանդերձ ա-  
ւարօքն: Այն ինչ սոյն այս երջանիկ յաղը  
թութիւն հոչակեցաւ , մնապանծ քաղա-  
քապետն այն վերսցիշեալ , որ թէպէտ եւ  
նչ դտաւ ներկայ 'ի պատերազմին , բայց

փութացեալ զփառս յաղթութեանն յին-  
քըն դրաւել , առ ժամայն հրամայեաց  
՚ի ճակատ դրան պալատի իւրոյ ընդ որմն  
պատկերաւ նկարել զպատմութիւն բարե-  
յաջողութեանն եւ դնել զանուն իւր ՚ի  
գագաթն իբրեւ առաջին հեղինակ եւ  
գլուխ մեծագործութեանն այնորիկ Բայց  
քանզի վեր ՚ի վերոյ էր նկարեալ պատկերն  
փութապէս , անձրեւն՝ օդն , եւ հողմոց  
բռնութիւնք եղծեալ ապականեցին զնկար  
պատմութեան պատկերին այնչափ , մինչեւ  
երեւիլ տեսողացն որմ բռեալ , զոր տես-  
եալ աչալուրջ ոմն Սպանիացի , որ եւ ինքն  
իսկ էր ՚ի նոյն պատերազմի ընդ այլ ընկեր  
րաց , ասէ . օրհնեալ այդ որմ , որ հչ կամի  
խաբել :

# ՀԱՐԻԿԻՑԵԱԿ

## ԻՆԵԼՈՐԴ

ՏԱՄՆԵԱԿ. Ա.

Ո ւրամն է այնմ ծառայ , որ գիտէ՝ ՚ի  
գործ ածել զայն , եւ է տէր այնմիկ՝ որ  
ոչ գիտէ ծառայեցուցանել զայն:

Գինաբրու պառաւոյն լաւագոյն է քան  
զպարզ ջուր ըմպելն , զըոր փայտ բարու-  
նակին ՚ի գետ թմրեալ ծծելն:

Որ ո՛չ ունի , ո՛չ տայ:

Յանարդար վաստակոց հօրն հետեւի  
կործանումն որդւոյն:

Ե հանդարտ ջուրց պահպանեսցէ զիս  
տէր , զի ՚ի գնայուն ջուրց ես պահեցից զիս:

Եւաեւ խստաբեճեկ ընկոյզք վաճա-  
ռին , (եւ վատ կանայք ամուսնանան):

Շունն ոչ խածատէ զընտանին՝ թող-  
եալ զօտարականն:

Որ աղաւնի լինի , զնա ուտէ բաղէն:

(զմիամիտն խաբէ խորագէտն):

Ղաւագոյն է ունիլ զՃՆՃղուկ մի ՚ի ձեռին քան զլորամարդի մի ՚ի վերայ ոստոյ (ծառոյն):

Պակասառթիւն ընչից , առաւելութիւն տրտնջմանց:

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կ յր ոմն Հագարացի պանծայր յանձրն իւր լինել մարդարէ ոք , զոր յանձնեաց արքայն դատաւորի իւրում՝ քննել ՚ի ներկայութեան իւրում։ Եհարց ցնադատաւորն եւ ասէ . կարե՞ս ցուցանել նըշան ինչ։ Պատասխանի ետ մնապարծն՝ թէ խմ գործ նշանի ցուցեալ իսկ է յարուցանել զմեռեալս։ Կա՞ դատաւորն , չե՞ բաւական բանիւ միայն ասել զայդ , այլ եւ գործով հարկէ ցուցանել , պատասխանէ Հագարացին . յայնժամ եհարց արքայն ցդատաւորն , եւ ասէ , զի՞նչ ասես առ այս առաջարկութիւն . պատասխանի ետ դատաւորն . ոչ եւս է պիտոյ այլ փորձ կամ նշան ինչ տեսանել , զի ես յիմ կողմանէ հաւատամ հաստատապէս թէ այս այր մարդարէ է :

ՏԱՄՆԵԱԿ. Բ

Վինչ տեսանես զդայլն , մի որոնել  
զհետս նորաւ :

Վմենայն կապիկ սիրէ զկապիկն , (նմանն  
զնման իւր սիրէ):

Յշժ գեղեցիկ պարտ է լինիլ ծառն ,  
զորմէ բաղձայ կախիլ մարդն . (որ ասի եւ  
զցանկացողաց ամուսնանալ):

Յամենայն փայտէ նչ լինի անդիկ:

Որ ընկողմանի ընդ շան՝ յառնէ ընդ  
լուց . (ըստ ընկերի առն եւ վաստակ իւր):

Նա է իբրեւ զմարթա դթած , որ ծաս-  
քէ մեղք հիւանդաց:

Յազում խելագարութիւնք պատմին ,  
եւ առաւել եւս են որ դործին:

Վյապէս երեւիցիս առաջի որդւոց  
քոց , որպէս կամիս զի երեւիցին նոքա  
առաջի քո:

Յշնն տայ մեզ զօր բարի , որ բաղձայ  
մեզ վատ տարի:

Վգահք եւ փափկասունք նչ դնան յար-  
քայութիւն , առաջինք՝ զի նչ կարեն վճա-  
րել զծախս ձանապարհի , եւ միւսքն՝ զի  
փախչին յաղտեղանալոյ եւ յաշխատու-  
թեանց:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սպասաւոր ոմն տեսեալ , թէ տէրն  
իւր յորժամ միայն ինքն ելանէր ՚ի տանէն  
արտաքս , առնոյր ընդ իւր զբանալին ար-  
կեղ՝ ուր էին դրամք իւր , թախանձագին  
իմն սրտիւ ասէ ցտէրն , տէր , մի թէ գող  
կարծես զիս , զի հանապաղ ընդ քեզ ա-  
ծես զբանալին անտիլի քու Պատասխանի  
ետ տէրն . թէ ոչ զքեզ գող կարծելով  
զգուշութեամբ փակեմ , այլ երկնչելով զի  
մի լինիցիս :

ՏԱՄՆԵԱԿ . Գ

Օերութիւնն յերիտասարդութեան ,  
ածէ յաշխատութիւն ՚ի ծերութեան :  
Լին զեղեցիկ կամ հպարտ է , եւ կամ  
յիմար :  
Լին անպարկեշտ եւ գեղափայլ , է իբր  
զպիղծ տուն մաքուր դրամբք :  
Լին եւ ջորի զոր ինչ պարտին՝ ոչ առնեն  
առանց շողոքորթեալ լինելոյ :  
Լին եւ կեռած՝ առ չարութեան իւր-  
եանց կարմբագեղ լինին :  
Աղքատութիւնն ոչ բառնայ զառաքի-

Նութիւնն , եւ փարթամութիւնն ոչ ածէ  
զնա :

Բանտ եւ պահք վասն աղքատաց են  
արարեալ :

Փայփայեան զկատուն , եւ ոսանուցու  
յերեսս քու :

Արա քեզ դանակ՝ ՚ի սեխոյ , պարտիս  
որոնել յոյժ առ ՚ի զլաւագոյնն գտանել :

Ասիրեան զմօրուսս իմ , եւ ես սափրե-  
շից զդլուիս քու :

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

---

Գալերոս հինգերորդ կայսրն ետ կազ-  
մել զքարաշեն կամուրջ իմն գեղեցիկ ,  
մերձ քաղաքին Մատրիտու ՚ի վերայ փոք-  
րիկ գետոյ միոջ ,ընդ որ յամառան ցամաք  
ոտիւք յաճախ լինէր անցանել : Լու ՚ի հե-  
տեւեալ ամի դէպ եղեւ անցանել ընդ  
այն դեսպան ոմն Գաղղիացւոց որ գայր  
՚ի Մատրիտ , եւ աեսեալ զայն նոր կա-  
մուրջ կառուցեալ յանջրդին տեղւոջ , ա-  
սաց վայելչապէս . Գալերոս ետ կազմել  
աստ զկամուրջ , սպասելով թէ յաջորդք  
իւր բերել տացեն զջուր գետոյն :

ՏԱՄՆԵԱԿ. Դ

Եթէ առնես զշար՝ սպասեաց այլում  
չարի:

Երած քեզ մեղը եւ ձանձք կերիցեն,  
(զքեզ):

Խօսիլ առանց մտածելոյ՝ է հարկանել  
թարց հայելոյ:  
Տկար իմացողին նոյն է շատախօն եւ  
համբն:

Օ խստագոյն պահս պահէ՝ որ ապա-  
ժոյժ կերլիս ուտէ:

Օ անձն զրկել է վայրապար, զի զորս  
ես գանձեմ՝ ժառանգորդք իմ մսխելոց ենու  
Ո այելեա՞ դու զքո սակաւն իմաստ  
նաբար. քան որք շրջին որոնել զբազումս  
յիմարաբար:

Ի ազումս պահանջեսցէ վարձս՝ որ բար-  
ւոք ծառայէ եւ լոէ:

Հատիկ հատիկ լնու հաւն զդրմունչ  
իւր:

Ըստն հրակիզեալ երկնչի ՚ի ցուրտ ջոյ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դուքս ոմն ուներ զբազում զօրս եւ  
զյաձնիս պաշտական պաշտօնեայս , վասն  
որոյ ոռօձկաց եւ կերակրանաց վատներ  
զծախս բազում յոյժ : Եւ ոմն իշխանաց  
իւրոց առ ՚ի թեթեւացուցյանել զայս ծան  
բութիւն մսխանաց՝ յորդորէր զնա ցու-  
ցանելով, թէ աւելողդ են այնքան պաշտօ-  
նէից բազմութիւնք , զորս արձակել եւ  
սակաւուք բաւականանալ ստիպէր . որում  
պատասխանեաց դուքսն . բարւոք գիտեմ,  
թէ ես ոչ երբէք կարօտութիւն ինչ ու-  
նիմ նոցաւ : Իսկ դու հարցե՞ր արդեօք եւ  
ցնոսա , թէ նոքա եւս ոչ կարօտանա-  
լոց են ինձ առ յապայն :

ՏԱՍՆԵԱԿ Ե

՚ ախ գրեա (՚ի հաշուագրի) եւ ապա  
տուր (զգրամս) , նախ ընկալ եւ ապա գրեա :  
Գինին շրջի առանց վարտեաց , եւ եր-  
բեմն առանց շապկի :

Որ զօդն յղանայ զհողմն ծնանի :  
Ետան երաժշտի ամենայն ընտանիք  
նորա կաքաւողք են :

Ե գետն ուր ՞չ գոն ձկունք , ընդ վայր  
արկանին ռւռկանք :

Ե չափազանց քաղաքավարութեան՝ կաս-  
կածանքն են իրաւացի :

Ե այսմիկ թշուառ աշխարհի , որ ինչ կայ  
մեզ վասն հացի , պակասի վասն գինւոյ :

Ե տան լիութեան (փարթամաց) փոթ  
լինին ընթրիք :

Հ ատաբանք եւ ստաբանք են ընտան-  
եաց տառապանք :

Որ մտանէ ընդ փակեալ . դուռն ա-  
ռանց բաղխելոյ , կամ յոյժ ընտանութիւն  
ունի , եւ կամ պատկառ բնաւ չունի :

---

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ե շխան ոմն ՚ի շրջելն ՚ի միջօրէի յան-  
դաստանի իւրում , ուր գործէին մշակքն ,  
եգիտ զոմն ՚ի մշակացն ընկողմանեալ ՚ի  
վերայ խոտոյ ՚ի հովանի տեղւոջ , եւ սաս-  
տիկ բարկութեամբ ասէ ցնա , զի՞նչ առ-  
նես այդր , ծոյլ եւ պղերդ , մինչ գործեն  
այլք . Պատասխանէ մշակն . տես տէ՛ր իմ ,  
զի յիրաւի այնքան վաստակեալ եմ , մին-  
չեւ ՚ի վերայ ոտից անդամ ՞չ կարեմ կալ :  
Ասէ տէրն . ում ասես , անզգամ դու . զի

ընդ ելանելով՝ ՚ի սեղանոյ՝ անկար ՚ի վերայ  
երկրի իբրեւ զխող, եւ արդ առեալ ըզ-  
փայտ՝ լաւագոյն իմն զարթուցից զքեզ,  
այր դու անպէտ կենաց. եւ հչ իսկ ար-  
ժանի ես զի արեգակն լուսաւորեացէ ըզ-  
քեզ, յայս բան պատասխանէ մշակն. զայդ  
բարւոք դիտեմ, տէր իմ. եւ վասն այն եդ-  
եալ կամ ընդ հովանեաւ:

---

ՏԱՄՆԵԱԿ. Զ

❖ աշանայն ուր երգէ, անդ զդեռ-  
տաւորի, (ուր ոք աշխատի, անտի մնանի):

Լաւ գինին ոչ պահանջէ զնշան. (զոր  
կախեն առ դրամբ գինետան):

Ասով յագեցեալ գայլն կրօնաւոր լինի:  
Յաց թողեալ արկղն՝ կոչէ զդողն (ա-  
ռիթ առնէ զմարդն դող):

Աղըն (հողագործաց) ոչ է սուրբ. բայց  
ուր անկանի հրաշ գործէ:

Հուն թաւամորթ ՚ի քաղցու մեռանի  
եւ ոչ տեսանի: (զդեցեալ աղքատն զո-  
ղորմութիւն ոչ գտանէ, որպէս եւ տնանկն):

Աապատողն զիւրն քամակ ոչ տեսա-  
նէ, եւ զայլոցն ծաղը առնէ:

Դայլ ծերացեալ կորուսանէ զատամու-

Նըս բայց նչ զբարսէ  
Լի՞ր զպանիր ծանր, եւ զհաց թեթեւ:  
Ասա ինձ ընդ որում շնչաղայիս, եւ ես  
քեզ ասացից թէ ովկ իցես:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

♦ ոչակաւոր ոմն փիստիսյ ճանա-  
պարհորդեալ նաւու, պատահի սաստիկ  
իմն մրրկաց եւ ալէկոծութեան մինչեւ լի-  
նել ՚ի վտանգի ընկղմելոյ, ՚ին ՚ի նաւն  
անդ եւ այլ ճանապարհորդք ոմանք չարա-  
գործ ամբարիշտք, որք տեսեալ զզարհու-  
րելին զայն գիպուած, որ սպառնայր զմահ՝  
զգերեզման կոհակաց բացեալ առաջի ա-  
չաց, սկսան աղաղակել առ գիս իւրեանց  
յօդնութիւն ժամանել. որոց սաստէ փի-  
լիստիսյն. պապանձեցարնուք անզգամք, մի  
լուիցեն դիքն, թէ դուք աստ կայք, ապա  
թէ նչ եւ մեք ընդ ձեզ կորնչիմք ասու:

ՏԱՄՆԵԱԿ. Է

Քաղցեալ որովայնն ոչ ումեք լսէ։  
Ու ունի զապակեայ կուրծս , մի լիցի  
քարաձիդ առ ընկեր իւր։  
Չուկն եւ հիւրն զաւուրս երիս , եւ  
նեխին։

Այս իշոյն է աքացել եւ խածանել։  
Օ առաջին սէրն եւ զառաջին թշուա-  
ռութիւն իւր ոչ երբէք մոռանայ մարդ։  
Որչափ խորէ դետն , այնչափ սակաւ  
կարկացէ։  
Ուր անագան ժամանեսցես , մի ցուցա-  
ներ զքեզ վհատ։  
Խիստն ընդ խստին ոչ երբէք զամուր  
որմ կանգնեն։  
Ուր դուռն մի փակի , այլ իմն բացեալ  
լինի։  
Ի կաշոց այլոց լայն լայն հատանի։

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սոկրատէս ողջունեաց զոմն մեծա-  
տուն ՚ի ճանապարհի , եւ նա ոչ համարե-  
լով զնա արժանի , ոչ ընկալաւ զողջոյն նո-  
րին , ընդ որ խոժուեալ զայրանային բարե-

կամքն Սոկրատայ , որոց ասէ Սոկրատէս ,  
ընդէ՞ր ցասուցեալ բարկանայք բարե-  
կամք . վասն այնորին՝ թէ այրն այն պակաս  
քաղաքավար է քան զիս :

---

ՏԱՄՆԵԱԿ · Բ

Վեծագոյն (Հեռաւոր) ճանապար-  
հորդ մեծագոյն ստախօս :

Ի խօսից մինչեւ առ գործ՝ դց ընդ  
երկար միջոց :

Ի դիշերի առ ճրագին՝ այծն թուի գե-  
ղեցիկ կին :

Ժողովել ասղան ծայրիւ , եւ ցրուել  
զուգեղեւնակին բերանով :

Ափաել զալիւր , եւ ժողովել զմոխիր :

Այրել զձիթենիս իւր ՚ի վաճառել զա-  
ծուխ նորին :

Ի վատթար չուխայէ ոչ լինի երբէք  
լաւ հանդերձ :

Այն ինչ որ թէ երեւի , թէ նրախիսի  
եզն լինի :

Փարթամութեան եւ բարեգթութեան  
միշտ կէսն է իրբեւ չէ :

Ի ցեղէն դայ որսական շան ունիլ զեր-  
կայն ձետ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Օգոստոս կայսրն կամեցեալ ծաղը  
առնել զոմն բանաստեղծ, որ մատուցեալ  
էր նմա բազմիցս զնեբբողինաց հագներ-  
գութիւնս գովեստից, ասէ, արդար է՝ զի  
քեզ գեթ միանդամ վարձահատոց եղեց  
վասն չափաբերական ներբողինաց քոց  
Եւ իւրով իսկ շարադրութեամբ տաղեր-  
գութիւն իմն արարեալ ետ նմա։ Օ որ  
ընկալեալ բանաստեղծին եւ ընթերցեալ  
իսկոյն եհան զքսակ իւր, ուր էին սակաւ  
ինչ ոսկեայ դահեկամք, եւ զայնս մատոց  
կայսեր՝ երկրպագութեամբ ասելով. ե-  
րանի՛ թէ ունէի զրազում ինչ գումարս  
ոսկեայ, զորս յօժարամիտ մատուցանէի  
ձերումդ վեհափառութեան զարժանա-  
ւորն, ի նշան ճանաչման իմոյ ամենաս-  
քանչ ոտանաւորիդ՝ զորս աշխատասիրեալ  
արարիք վասն իմ։

ՏԱՄՆԵԱԿ. Թ.

Ի վատ կնոջէ զգուշացն դանձն քո,  
եւ բարւոյն մի հաւատար քնաւ։  
Օ գոյշ լեր ՚ի շանէ՝ որ ոչ հաջէ, եւ ՚ի

մարդոց՝ որ ոչ խօսի:

Դիտ ինձ տեղի՝ ուր նստայց, եւ ես  
գտից սակաւ առ սակաւ՝ ուր ընկողմանե-  
ցայց, (սկիզբն ապրուստից գժուարին է):

Ոնուսցես զագուան եւ բրեսցէ զաշոքու:

Ո՞հ երկայներ զոտս քո քան զշափ վեր  
մակիդ:

Իստ սրունից են զանկապանք, եւ ըստ  
ոտից հողաթափք:

Լուրաքանչիւր ոք խօսի գտօնավաճառէն  
որ ինքեան է պատահեալ:

Որպէս երգէ աբբայն՝ զնոյն պատաս-  
խանեն կրօնաւորք:

Լուրաքանչիւր անդամ զիւր պաշտօն  
գործէ, յոր ինչ կարգեալ է, զի ոչ լինի  
խօսիլ մատամբ, եւ ոչ կարել քակել  
լեզուաւ:

Եթէ ունիս բագում դրամ, դու զքեզ  
ոչ ձանաչես: Լակ եթէ չունիս բնաւ դու  
զայն, զքեզ ոչ ոք ձանաչեսցէ:

Դնայուն անցաւոր ջուրը ոչ կազմի  
ջաղացք:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երեայ ոմն ճանաչելով զսխալանս  
սինակօկային, եւ զառասպելաբանութիւնս  
ռապպիից նորա մկրտեցաւ. եւ առ սակաւ  
սակաւ ետես ՚ի մէջ աշխարհասէր քրիս-  
տոնէից ըստ այնմ ժամանակի եւ տեղւոյ,  
զի ունայնաբանութիւնն եւ հպարտու-  
թիւնն եւ այլ նման ախտք իբրեւ թէ հչ  
էին համարեալ ՚ի վնասապարտ մեղս ՚ի մէջ  
բազմաց նոցաւ Ապա հնարս հնարեցաւ  
գտանել սահմանել գրեանս ազնուակա-  
նութեան, որով եւ դնեսոց կալուածս ՚ի  
քաղաքի միում, ուր կարծէր թէ զի՞նքն  
ոչ ճանաչէին . եւ այնքան մեծացաւ ըմ-  
բոստացաւ, մինչեւ ամենայն ազնուակա-  
նաց եւ առաքինի անձանց լինիլ անհան-  
դուրժելի: Այս ՚ի կոչունս խրախճանու-  
թեան ուրուք իբրեւ զուարթացաւ, ըս-  
կսաւ պանծալ ՚ի վերայ ազնուականու-  
թեան եւ հնութեան ցեղի իւրոյ: Յայն-  
ժամ ասպետ ոմն՝ զոր քաջ ճանաչէր, լու-  
եալ զայս, պատասխանի ետ նմա, եւ ասէ:  
արդարեւ դու ՚ի հնագոյն իմն ցեղէ ես,  
վասն զի նախնիք քո իսկ նստան դատաւոր  
անդ եւ եղեն վՃռատու, ուր Յիսուս Քրիս-  
տոս տէրն մեր ՚ի մահ դատապարեցաւ:

արիւր դերձակք , հարիւր աղորա-  
պանք , եւ հարիւր կտաւագործք են երեք  
հարիւր գողք :

Հաքարն ՚ի վերայ ցանի խորովեալ  
տանձի . եւ պանիրն վշրի ՚ի վերայ դդմա-  
ճի : (մագառօնի):

Ծերացեալ եզն ուղիղ գործէ զակօնն  
խաղ արացես ընդ իշոյ՝ զագին հարցէ  
ընդ երեսս քո:

Նոր դիպուածոց՝ նոր խորհուրդ:

Ուրն ,ցաւն եւ դրամն ոչ կարեն մնալ  
՚ի թագստեան:

Դեռն պղտորեալ ձկնորսաց է շահեկա-  
նութիւն:

Որում յաջողէ Աստուած՝ սկնդիկ նո-  
րա խոխողիս ծնանի , եւ որում ոչն յաջո-  
ղէ , հացք նորա ՚ի փուան այրին:

Ուսիր զբարձրն եւ զցածն , եւ որպէս  
ժամանակն նուագէ , այնպէս խաղա:

Լրէկ՝ պայծառ գեղեցիկ , այսօր խոժոռ  
տգեղացեալ: Լրէկ՝ վարդոյ ստեղնեալ  
ծաղիկ , այսօր թարշամ եւ թառամեալ ,  
երէկ՝ ՚ի փառս բարձրացեալ , այսօր ՚ի դա-  
դաղի եղեալ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա նթերցասէր ոմն մեծամօրուս ՚ի գիշերի միում այն ինչ ընթեռնոյր զդիրքն ,  
որ կոչի Գաղտնեաց, բնութեան , յակնարկէ զայն բան՝ ուր գրեալն էր, թէ ունիցի զլայն եւ զուղղաձիգ մօրուս , է նշան յիմարութեան նորա , իսկոյն առեալ զհայելին ՚ի ձախ ձեռն , եւ աջովն կալեալ ընդ կզակաւն զմօրուս իւր, եւ զաւելորդն մատոյց ՚ի լոյս ճրագի. ապա առ ժամայն բորբոքեալ հերացն բոցակիցէ զձեռն , զոր ընդբաց առնուլն խանձուտէ զողջոյն զմօրուսն , եւ տեսեալ ՚ի հայելոջ զիսայտառակութեան պտուղն թանձրամօրուս յիմարութեան իւրոյ , գրիչ ՚ի ձեռս առեալ փութով ատորագրէ ՚ի նոյն բան գրքիանն . թէ փորձեցաւ այս բան եւ գտաւ ստոյգ :



# ՀԵՐԻԿՈՒՑ

## ՏԵՍՆԵՐՈՒԴԻ

ՏԱՄՆԵԱԿ. Ա

Յասպետութեան իշխանութենէ իջա-  
նել, եւ լինիլ ձիադարման:

Վմենայն վաճառական գովի զվաճառ  
իւր:

Ոչ ոք խօստովանի թէ արտաքոյ բա-  
զում գան արրի:

Որ ատամն ցաւի, լեզուն յայն մեր-  
ձենայ: (մերձաւորն մերձաւորին է հոդա-  
ծու):

Առաքեա՛ զիս կալ յայնմիկ քաղաքի,  
ուր երկու մառչիլի ձու մի վաճառի: (այ-  
սինքն՝ ուր կերլիք մարդկան թանկագին լի-  
նին, անդ է շահ բազում վաճառականին):

Ճեշտ հօր՝ շուայլ որդի:

Եթէ խելագարութիւնն լինէր ցաւ,  
յամենայն տանց լսելի լինէր ձայն աղա-  
ղակի հեծութեան:

Ո՞չ աճի լսցն եւ ողբն , փոփոխելով  
զնիւթն:

Կախանձուտ ադահին իւր բազումն սա-  
կաւ թռւի . եւ այլոց սակաւն բազում հա-  
մարի:

Առաքինին սրժէ բազումն՝ զոր գործէ ,  
եւ սակաւս՝ զոր խօսի:

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Եպիսկոպոս ոմն սրբակաց՝ անաչառ  
նախանձայուղութեամբ յանդիմանէր ըզ-  
վատաշուէր յանդգնութիւն , եւ զտկար  
քրիստոնէութիւն մեծի ումեմն թագա-  
ւորի , եւ վկայութեամբ սրբոց գրոց հաս-  
տատէր , թէ ոչ վարէր նա վարս բարի  
եւ առաքինի , այլ մանաւանդ կեղծաւոր  
եւ ամբարտաւան: Որում պատախանի  
ետուն մարդելցզ շողոքորթիչք արքային ,  
թէ արդարեւ ընթերցեալէ եպիսկոպոսն  
այն զսուրբ գիրս , եւ կրթեալ իսկ ՚ի նո-  
սա , բայց սակայն տակաւին ոչ իմանայ ըզ-  
գրեանա թագաւորի:

ՏԱՄՆԵԱԿ. Բ

ԱՇ ոք բառնայ ՚ի վերայ մեր զմեծա-  
գոյն իշխանութիւն, այլ մեք մեզէն զհետ  
լինիսք դտանել:

Անխոհեմ ամուսնութիւնն է յիմարու-  
թիւն իմն, զոր այր կամ կին առնեն ՚ի  
միում աւուր եւ լան զամենայն աւուրս կե-  
նաց իւրեանց:

Ո՞արդոյ թուի թէ այլք ամենեքին են  
՚ի բարեյաջողութեան, եւ ինքն միայն ՚ի  
ձախորդութեան:

Ասկաւ ալիւր, սակաւ հաց . սակաւ  
դրամ՝ սակաւ բարեկամ: Օ այս կարեր  
ասել բերանն փռան, թէ կարեր խօսիլ  
Առիթն զմարդ նչ առնե դող, բայց է  
առ այն հրաւիրօղ:

Ա, թէ ամենայն էշք կրեին զհամետ,  
որքան յարդի լինելոց էր արուեստն հա-  
մետադործաց:

Ա, յր խոհեմ եթէ խորհի ժամ մի ՚ի  
վերայ այնորիկ՝ զոր կամի խօսիլ, խորհեսցի  
ժամա տասն վասն այնորիկ զոր կամի դործել:

Ո՞արդն ուտէ վասն ապրելոյ, եւ անա-  
սունն ապրի վասն ուտելոյ:

Ա սկզբանե մինչեւ ցայսօր կազմեալ  
զէնք նչ բաւեն զինու վառել զմի միսյն  
ծցլ պղերդն:

**Տ**իկին ոմն արամբի տեսլեամբ գեղեցիկ , բազմաց ցանկալի , բայց պարկեշտ վարուք եւ համեստ բարուք : Որոյ այրն յաւուր միում կոչունս արար բարեկամաց իւրոց 'ի տան իւրում , եւ զի սովորութիւն է Եւրոպականաց զինի ընթրեաց կաքաւ եւ զսդ զսդ այր եւ կին , ուր այս պարկեշտուհի ընտրեաց 'ի մէջ կոչնականացն զայր ոք ազնուական , բայց տգեղ տեսլեամբ եւ տկար իմացականութեամբ յոյժ , եւ ընդ նմա կաքաւէր որբան կարդն գայր նմա . եւ ոչ երբէք ընդ այլում . յորմէ կարծիս էառ թեթեւամիտն այն , թէ տիւ կինն սիրահարեալ իցէ ինքեան , ուստի ստէպ հարցանէր եւ ոչ դադարէր 'ի թախանձելոյ զնա յամենայն պարի . թէ վան էր թողեալ 'ի մէջ այնքան բազմութեան զերիտասարդս գեղեցիկս , եւ զիս միայն ընտրեցեր ընդ քեզ կաքաւէլ (Եւ յու սայր լսել 'ի բերանոյ նորա պատասխանի ըստ երեւակայական իւր կարծեաց) : Իսկ տիկինն բարի ձանձրացեալ 'ի ծանրատաղ տուկ բանից նորա , պատասխանէ . պատուական . յայսմ հնազանդիմ հրամանաց առն իմում , եւ զի նա սաստիկ զգուշա-







2013

224182

«Ազգային գրադարան»



NL0057423

